


366

3K13

4-68



№ 15

ԴՐԱՄԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՔԵԴԵՐԱՏԻՎ  
ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 15

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէ՛ք.

Կ. ՄԱՐՔՍ ԵՒ Ֆ. ԷՆԳԵԼԸ

# ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

# ՄԱՆԻՖԵՍՏ

Գ. Պլեխանով, Կ. Կայտսկով Եւ Հեղինակների Ա.Ի.ԶԱՅՎԱՆԵՐՈՎ

К. Маркс и Ф. Энгельс „Коммунистический Манифест“,  
с предисловиями Г. Плеханова, К. Каутского и авторов.

Թարգ. բնագրերից՝

335.5  
Մ-40

26 JUN 2013

14 NOV 2009

3K13

4-68

47

## Կ. ՄԱՐՔՍ ԵՒ Ֆ. ԷՆԳԵԼ'Ս

2005

## ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

# ՄԱՆԻՖԵՍ

Գ. ՊԼԵՍԱՆԴՐԻ, և ԿԱՂԻՉԻ ԵԿ ՀԵՂԻ ԽԱԿՈՒՔԻ

Թարդ. բնագրերից՝ Տ. Ե. Ա. Հ. Հ. Հ.

193

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԱԾՈՒՅԻՆ  
ՏԱՐԱԾՈՒՅԻՆ



## Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն. Ե. Ր

## I.

1843 թւականի սեպտեմբերին Մարքսը, ձեռնամուխ լինելով («Deutsch-Französische Jahrbücher»)-ի հրատարակութեան, գրում է Ռուգէին՝

— «Մինչ այժմ փիլիսոփաներն իրենց թղթակալներում ունենում էին բոլոր առեղծւածների լուծումը, և յիմար երախաներին մնում էր բերաները բաց անել, արսոլիւտ դիտութեանց խորուած կաքաւները կուլ տալու համար։ Յիմա փիլիսոփայութիւնն աշխարհիկ է գառել... Եթէ ապագայի կառուցումը և բոլոր գալիք ժամանակների վերջնական հետեւանքը մեր գործը չի, ապա մենք առաւել ևս որոշ դիտենք, թէ ներկայումս մեր անելիքն ինչ պիտի լինի. խօսքս անողոք քննադատութեան ձասին է այն ամենի նկատմամբ, ինչ որ գոյութիւն ունի, անողոք երկու առումով՝ մէկ որ այդ քննադատութիւնը երկիւղ չի կրում այն եզրակացութիւններից, որոնց պիտի յանդի, ապա որ չի շեղում տիրող իշխանութեան հետ ընդհարուելու դէպքում<sup>1)</sup>։

«Մանիֆեստ»-ի ապագայ հեղինակներից մէկի այս քննայոյդ տրամադրութիւնը կատարելապես

<sup>1)</sup> Տես Մարքսի և Առնոլ'դ Ռուգէի նամակագրութիւնը „Socialdemocrat“-ի 4-րդ գրքում։

համապատասխանում է միւս հեղինակի—ֆրիդրիխ էնդել'սի տրամադրութեանը: Այդ հանգամանքը շատ երկան է գալիս «Deutsch-Französische Jahrbücher»-ի մէջ տպագրւած «Die Lage Englands» հետաքրքրական յօդւածում, որի մէջ էնդել'սը մէծ տեղ է յատկացնում կառլէլլի տեսակէտներին:

Կառլէլլը խոստովանում է, որ ո՛չ «Մորիսոնեան հարեր» ունի, ո՛չ էլ հասարակական աղէտները բուժող համագարման:

Այդ խոստովանութիւնը մատնանշելով՝ էնդել'սը նկատում է— կառլէլլն արդարացի է: Տակաւին չափազանց անկատար է այն հասարակական փիլիսոփայութիւնը, որ իր մի երկու դրութիւնը վերջնական եղրակացութեան տեղ ճախելով՝ «Մորիսոնեան հարեր» է առաջարկում: Մեղ համար ոչ այնքան մերկ եղրակացութիւններն են հարկաւոր, որքան ուսումնակիրութիւնը:

Եղրակացութիւններն, առանց այն զարգացման, որ տանում է գէպի նրանց—ոչնչ են: Դեռ չեղելի ժամանակից մենք այդ բանը զիտենք: Իսկ անշարժ և անփոփոխ եղրակացութիւնները, որոնք դրւում են իրեւ հիմք յետադայ զարգայման—աւելի բան անօգուտ են: Այսու հանդերձ պէտք է, որ եղրակացութիւնները, թէև ժամանակաւոր, բայց և այնպէս որոշակի ծե ընդունեն: Զարգացումը պիտի նրանց դուրս բերի մշուշային անորոշութիւնից և պարզ մտքեր դարձնի<sup>2)</sup>:

<sup>2)</sup> „Deutsch-Französische Jahrbücher“ SS. 167—168.

Եյս տողերը գրելուց յետոյ անցած ժամանակամիջոցի ընթացքում Մարքսի և էնդել'սի հասարակական փիլիսոփայութիւնն էլ իր զարգացման ընթացքում յանգեց որոշ եղրակացութեանց: Նրանք այդ եղրակացութիւններն առաջին անգամ սիստեմաբար արտայայտեցին «Կոմմունիստական Կուսակցութեան Մանիֆեստի» մէջ և յետագայում լրացնում էին այլ գրւածներում: «Մշուշային անորոշութեամբ» ազգ եղրակացութիւնները երբէք չեն մեղանչել: Ընդհակառակը՝ նոյն իսկ այն մարդիկ, որ Մարքսին և էնդել'սին չեն համակրում և երկիւղ էին կրում նրանցից—հարկադրւած էին հաստատել, որ «ուսումնասիրութեան» միջոցով նրանք հասան մի շարք պարզ և ինքնուրովն մաքերի: Սակայն եթէ նիշտ է էնդել'սի նկատողութիւնը, թէ ոչ այնքան եղրակացութիւններն են դնահատելի, որքան գէպի նմանց տանող դարդացումը և եղրակացութիւնները լոկ ժամանակաւոր նշանակութիւն ունեն, ապա ուրեմն մեր մէջ կարող է հարց ծագել՝ «Մանիֆեստում» շարադրւած եղրակացութիւններն արգեօք չեն հնացել և նոյն զարգացման ընթացքը, որ երբեմն առաջադրել է նրանց, ապագայում չի դատապարտի: Մի սրամիտ ֆրանսիացի ասել է՝ թէ ինքը չէր կամենայ Ոլ'տերի պէս մտածել այն պահուն, երբ Ոլ'տերն այլ կերպ մտածելիս լինի: Մենք պիտի հետևենք այդ ֆրանսիացու օրինակին: Եթե մենք կամենայինք Մարքսի և էնդել'սի պէս մտածել այն ատեն, երբ Մարքսն ու էնդել'սը մտածելիս կլինէին

այլ կերպ, մենք // դրանով ցոյց կտայինք, որ նրանց ուսմունքի կենդանի ոգին իւրացնելու անընդունակ ենք։ Պաշտպանելով ուսմունքի մեռած տառը, մենք ոգուց աւելի հեռու կինենք, բան այն գոգմատիկները, որոնց մասին խօսում է Մարքսն Առնոլ'դ Ռուգի վրայ դրած վերոցիշեալ նամակում։

Մարքսը և Էնդել'սը անողոք քննադատել են այն ամենը, ինչ գոյութիւն ունի, առանց իրենց քննադատութեան եղրակացութիւններից երկիւղ կրելու։ Նրանց աշակերտները երկիւղ չպիտի կրեն իրենց ուսուցիչների ձեռք բերած հետեւանքները քննադատելուց։

Կարծես սա ինքնին պիտի հասկանալի լիներ, այդ մասին խօսելն աւելորդ պիտի լիներ մանաւանդ հիմա, երբ ամբողջ Եւրոպայում — Պէտերբուրզից մինչև Նէտապոլ՝ և Սամարայից մինչև Դուբլին — այնքան շատ «քննադատութեան նիշի ներքոյ» կանգնած մարքսիստներ են դուրս եկել։ Սակայն բանն էլ հէնց այն է, որ «քննադատութեան նիշերը» տարբեր են լինում։ Վաղուց հետէ ասւած է՝ ամեն մի «Տէր, Տէր» ասող երկնքի արքայութիւնը չի մտնի։ Հիմա պէտք է ասոին «քննադատութիւն, քննադատութիւն» կրկնողներից ամեն մէկը դոգմատիկ մից վեր բարձրանալու բնդունակութիւնը չի ունենում։ Մարքսին և Էնդել'սին «քննադատողները» հիմա անթիւ են, ինչպէս աւաղը ծովի յատակին։ Բոլոր երկիրների մտաւորականութեան որոշ շրջաններում մարքսիզմի քննադատութիւնը մողա է դառել։ Իսկ քննադատութիւնն ու մողան իրար չեն բռնում։ Եւ

որքան մարքսիզմի քննադատութիւնը մողալի գործ է դառնում, այնքան աւելի է կորցնում ամեն քննադատական բակացանքը այս եղրակացութիւնները, որոնց յանդել են Մարքսն ու Էնդել'սը, քննադատ-պարոնները նրանց տեղը ոչինչ նոր բան չեն դնում, այլ մասամբ «քննադատութիւն» բառի անպարունակ և ծանծրալի կրկնութեամբ են սահմանափակում, մասամբ էլ վերադառնում են Մարքսի և Էնդել'սի բուրժուական ժամանակակիցների կամ նոյն իսկ նախորդների հայեցակետներին։ Ինքնին հասկանալի է, որ նման քննադատութիւնը բնաւ չի փրկում գոգմատիզմից և նման շարժումը ոչ մի դէպքում չի կարող առաջնացում կոչւել։

Մարքսին քննադատող պարոնների «քննադատական» մտքի թուլութիւնն առանձնապէս ցալտուն կերպով երեան է գալիս փիլիսոփայական բնադաւառում։ Այստեղ մատերիալիստների դոգմատիզմին, ինչպէս իրենք են կոչում, հակադրում են կանտականների բաւականին հասակ առած գոգման արտաքին աշխարհի անճանաչելիութեան մասին։ Անտեղի կիներ այստեղ քննութեան առնել այդ գոգման, ուստի նկատենք միայն, որ միստեր մատերիալիզմը, քննադատ-պարոնները նեղութիւն չեն կրում ի մօտոյ ժանօթանալու այդ ուսմունքին և բաւականանում են այն գաղափարով, որ ի փառս կրօնի եռանդով պատւաստել են — զանազան երկիրների գիտնականները, կիսադիտնականներն, իսպառ անդէտ բաղքենիներն ու տէրտէրները։

որի հիմքը նիւթի և ողու բրիստոնէական հակա-  
զբութիւնն է<sup>3)</sup>:

«Կոմմունիստական կուսակցութեան Մանիֆեստի մէջ» մենք բացառապէս Մարքսի և Էնդել'սի «հասարակական փիլիսոփայութեան» հետ գործ ունենք: Նրա մասին էլ կինի մեր խօսքը ներկայ առաջարանում: Սական այդ փիլիսոփայութիւնն այնքան ընդարձակ է, որ այստեղ նրա բազմակողմանի ըննութիւնն անհնարին է: Ուստի մենք ըննութեան կառնենք լոկ «Մանիֆեստի» հիմնական միտքը, իսկ նրա առանձին դրութիւնները կապարզաբանենք «քննադատութիւն մեր քննադատների» բրոշիւրում, որ պատրաստում ենք ապագրութեան:

— «Հիմնական միտքը, որով տոգորւած է ամբողջ «Մանիֆեստը», այն միտքը, թէ խրաբանչիւր տւեալ պատմական շրջանում տնտեսական արտադրութիւնը և նրանով անխուսափելիօրէն պայմանաւորւած հասարակութեան կառուցւածքը, քաղաքական և մտաւոր պատմութեան հիմքն են կազմում, թէ համապատասխան դրան ամբողջ պատմութիւնն — այն օրից

<sup>3)</sup> Գլխաւոր գիտական աղբիւրը, որտեղից այդ պարոնները մատերիալիզմի մասին տեղեկութիւններ են քաղում — Լանգէի լայտնի մատերիալիզմի պատմութիւնն է: Սակայն ինքը լանգէն մատերիալիզմի վրայ զգաստ և անկողմնակալ հետազոտողի աջքով չի կարողացել՝ նայել: Նրա գիրքը մեծապէս նպաստել է ոչ մէ մատերիալիզմի քննադատութեան, ալլ մատերիալիզմի պատմական զարգացման և մեր օրերի հասարակագիտութեան համար նրա ունեցած նշանակութեան մասին հասարակութեան մէջ թիւր հայկացք տարածելուն և ամրապնդելուն:

վեր, ինչ քայլքայւեց նախնական համայնական հողատիրութիւնը, — գասակարգային պայքարի պատմութիւն է... թէ՝ այդ պայքարը հիմա այն աստիճանի է հասել, որ շահագործող ու կեղեքող գասակարգը... չի կարող շահագործող և կեղեքող գասակարգից աղատւել... առանց միաժամանակ ամբողջ հասարակութիւնն ընդ միշտ աղատագրելու շահագործումից, կեղեքումից և գասակարգավին պայքարից, — այս հիմնական միարը միայն և միմիայն Մարքսին է պատկանում»:

Ոյգպէս է ասում էնդել'սը: Արդարացին է նա արդեօք: Ոչ լիովին: Նախ՝ էնդել'սն անարդարացի է իր նկատմամբ, «Մանիֆեստ» հիմնական մտքի մշակման մէջ ունեցած սեփական մասնակցութիւնը զերօի հաւասարեցնելով, ապա՝ այդ մտքի մի քանի և կարեորագոյն տարրերը պատահում են նախնադոյն հասարակա-քաղաքական գրականութեան մէջ:

«Ի յիշատակ Կոմմունիստական կուսակցութեան Մանիֆեստ» աշխատութեան մէջ պրոֆեսոր Անտոնիո Լարրիոլան նկատում է, որ գասակարգային պայքարի նշանակութիւնը շատ լաւ ըմբռնելիս են եղել տակաւին հին պատմագիրները և նոր ժամանակում մանաւանդ վերածնութեան գարաշրջանի իտալական պատմաբանները, որոնց աչքի առջև քաղաք-հանրապետութեանց նեղ շրջանակում տեղի էր ունենում այդ պայքարը: Լարրիոլայի միւս միտքը, թէ գասակարգային պայքարը, որ հետզետէ լայն չափեր է ընդունում արդի պետութեան մէջ — տասնին-

ներորդ դարի սկզբից դնալով աւելի և աւելի է աչքի ընկնում—այդ միաքն էլ պակասա արդարացի չէ։ Սակայն Լար ըիոլան սխալում է, ենթաղրելով, որ այդ պայքարի պատմական նշանակութիւնն ամենացալառն կերպով 1830—1850 թ. ժամանակամիջոցում է զիտակցւել։ Իրօք, գասակարդային պայքարի բմբոնումն իրեւ պատմական զարդացման մղիչի—տասնիններորդ դարի քանական թւականներին որդէն այն ասաին մի պարզութեան էր հասել, որը գերազանցել են միայն «Մանիֆեստի» հեղինակները։ Իսկ 1830—1850 թ. ժամանակաշրջանում այդ ըմբռնումը մասամբ մժագնել էր։ Ի՞նչ պատճառների ազգեցութեան ներքո, այդ մենք ստորև մատնանիշ կանենք։

Արդէն 1802 թ. լոյս անսամ «Lettres d'un habitant de Genève»-ում Սէն-Սիմոնը խօսում է «ունեոր» և «չքաւոր» գասակարդերի յարաբերութեանց մասին և այդ դասակարգերի պայքարով բացատրում ֆրանսիական լեզափոխութեան ընթացքն ու վախճանը։ Սակայն այդ գրւածը Սէն-Սիմոնի հայեացքների սաղմն է պարունակում։ Նրա լետտագայ զրբերում, օրինակ՝ «Organisateur»-ում («ուչակաւոր ալարաբոլա»-ն) «Lettres à Messieurs les Jurés»-ում, «Du système industriel»-ում, «Catéchisme des industriels»-ում և «Opinions littéraires, philosophiques et industriels»-ում նա աւելի հանդամանօրէն է արտայալուում։ Արդիւնաբերութիւնն է իւրաքանչիւր հասարակական միութեան նպատակն,

ուստի արդիւնաբերութիւնը զեկավարող մարդիկ միշտ անցել են հասարակական միութեան գլուխը, միշտ էլ պիտի անցնեն։ Մինչեւ տասնհինգերորդ դարն աշխարհիկ իշխանութիւնը հողերականութեան ձեռքին էր։ Այլ կերպ չեր էլ կարող լինել, քանի որ հոգեռուականութիւնն էր այն պահուն զեկավարում երկրագործական աշխատանքն, իսկ երկրագործական աշխատանքն այն շրջանում արդիւնաբերական գործունեութեան միակ կարեռ նիւղն էր<sup>4)</sup>։ Սակայն առաջին խաչակրաց արշաւանքի շրջանից սկսած մինչեւ Լիւդովիկոս XI-ը աստիճանաբար նոր հասարակական գասակարդ առաջ եկաւ և կաղաքակերպեց իրեւ հողերականութիւնից անկախ մի ոյժ։ Դա բառիս բուն իմաստով արդիւնաբերողների գասակարգն էր, որ առաւել ևս ամրացաւ և անեց այն ժամանակամիջոցում, որ բաժանում է Լիւդովիկոս XI-ի թագաւորութիւնը Լիւդովիկոս XIV-ից։ Այդ ամբողջ ժամանակաշրջանում արդիւնաբերական գասակարգն անդադար պայքարում է հողերականութեան դէմ և մի տնտեսական դիրք միւսի ետևից խլում նրանից։ Ուժեղ պաշտպանի կարիք զգալով այդ գասակարգը դաշն է կուռմ թագաւորի հետ, և այդ դաշինքը որոշեց Ֆրանսիայի քաղաքական զարգացումը մինչեւ այն ատեն, երբ Լիւդովիկոս XIV-ը դաւաճանեց իր հաւատարիմ դաշնակցին և սկսեց ազնւականութիւնը

<sup>4)</sup> Opinions littéraires, philosophiques et industriels. Paris 1825, pp. 144—145. Cp. Catéchisme des industriels O. Ռողբեզի հրատարակած „ՕԵվր դe Saint-Simon“-ում, 1832, թ. 18.

հովանաւորել: Այդ սխալը թանգ նստեց Բուրբոնների վրայ, սակայն արդիւնաբերական դասակարգի զարգացումը չկասեցրեց: Ֆրանսիական յեղափոխութեան և յաջորդ գէպքերը—նոր արդիւնաբերական դասակարգի սխանմի և հին աւատական կարգի պայքարի ծնունդն էին: Աւատականութեան կողմնակիցները ռէստարացիայի շրջանում իրենց վաղեմի ազդեցութիւնն ու նշանակութիւնը ետ բերելու նոր փորձ արին: Նրանց նիդ ու չանքը դատապարտւած էր անաշողութեան, և նրանց ազդեցութիւնը կորել էր ընդ միշտ: «Տասնհինգ դարի ընթացքում,—ասում է Սէն-Միմոնը,—աւատական կարգն աստիճանաբար կազմալուծում էր, իսկ արդիւնաբերականն աստիճանաբար կազմակերպւում: Բաւական է, որ արդիւնաբերութեան գլխաւոր ներկայացուցիչները տակտով շարժւեն, որպէս զի արդիւնաբերական կարգը վերջնականապէս հաստատւի և հասարակութիւնը մաքրւի աւատական կարգի այն շնորի վլատակներից, որի մէջ ապրելիս են եղել մեր նախնիքը»<sup>5)</sup>:

Սէն-Միմոնի պատմական հայեացըները զրեթէ լիովին իւրացրեց նրա «որդեգիր»՝ Օգիւստէն Տիերին, որ այնքան մեծ գործ կատարեց յետագալում ֆրանսիական պատմագիտութեան համար: Օգիւստէն Տիերին «Երրորդ դասի» հայեացակէտի վրայ էր կանգնած և գեղեցիկ կերպով ըմբռնում էր այդ հանգամանքը: 1818 թւին «Censeur Européen»-ի մէջ նա գրում է «մեզնից ո՞րն է լսել այն դասա-

<sup>5)</sup> Œuvres p. 59.

կարգի մասին, որ Եւրոպայում բարբարոսների հեղեղման պահուն պահպանել է իր աշխատանքի ունակութիւնն ու արդիւնաբերական արհեստը մարդկութեան համար:

Նւանողների և իշխողների կողմից շարունակ կեղեքման ու կողոպուտափ ենթարկելով՝ այդ մարդիկի ծանր կացութիւն քարշ տւին, ստանալով իրեւ աշխատավարձ այն գիտակցութիւնը, որ իրենք լաւ գործ են կատարում, բաղաքակրթութիւնն են պահպանում իրենց զաւակների և արար աշխարհի համար:

Մեր արհեստաների փրկիչները—մեր հայրերն են եղել: Մենք այն նորաերի, հարկատուների, բուրժուաների զաւակներն ենք, որոնց անխնազ տրորել են նւանողները: Մենք ամեն բանով նրանց ենք պարտական... Սակայն տակաւին նոր-ազատագրւած բարրուկներս՝ մենք լոկ մեր տէրերի ընաանիքների և գործողութեանց յիշատակն էինք պահում: Եւ միայն 30 տարի առաջ մտարերեցինք, որ մեր հայրերն են կազմել ազգը: Մենք ամեն ինչ ուսումնասիրել և ամեն բանից հիացել ենք, բացի նրանից, ինչ որ կատարել են մեր հայրերը:

Մենք հայրենասէր լինելով մոռանալիս ենք եղել այն մարդկանց, որոնք տասնչորս դարի ընթացքում մշակել են մեր հայրենիքի հողը, որ անքան յաճախ աւերելիս են եղել ուրիշ ծեռքերը»<sup>6)</sup>:

<sup>6)</sup> Այս կտորը ինքն է բերում „Dix ans d'Etudes historiques“ գրքի առաջաբանում p. VIII, Paris 1837.

Երկու տարի անց Տիերին կրկին վերադառնում է այդ ծտրին և ապացուցանում, որ Փրանսիացիք ժողովրդի իսկական պատմութիւն տակաւին չունեն: Քաղաքացիների, հպատակների պատմութիւնը դեռ ևս չփրւած, մինչդեռ այդ շաբաթ տւելի հետաքրքրական և համակրաշարժ կարող էր լինել, քան բարձրաստիճան անձերի և թագաւորների պատմութիւնը— «միակը, որի մասին մեզ հաղորդում են»: Ժողովրդական զանգւածների շարժումը դէպի ազատութիւն և բարեկեցութիւն աւելի մեծաշուրջ երկովթէ, քան նւանողների արշաւանքը, իսկ ժողովրդի աղէտներն—աւելի սրտաշարժ, քան գահընկէց թագաւորների դժբախտութիւնը: Եթէ ժողովրդական զանգւածների պատմութիւնը զրելու արժանի գրիչ գտնուէր—Փրանսիացիք կտեղեկանային, թէ իրեցն քաղաքները կարող են սպարձենալ «ոչ միայն նրանք, որ այնտեղ ապրելիս են եղել այս կամ այն աղնւականները կամ նրանց միջով անցել է այս կամ այն թագաւորք: Նրանք կաեղեկանացին, որ ժողովրդի քաղաքական կեանքը հարկաւութեամբ ու զինորատութեամբ չի սահմանափակւել»<sup>7)</sup>:

Այս պերճ ատենախօսութիւնն ինքնին պայծառօքէն ցոյց է տալիս, թէ ինչպէս Ֆրանսիայում երրորդ դասի ինքնանանաչութեան անումն արմատական փոփոխութիւն է յարուցանում Փրանսիական պատմաբանների հայեացքների մէջ: Այն ժամա-

<sup>7)</sup> S. „Dix ans d'Etudes historiques“—ում արտառպած առաջիննամակը Փրանսիական պատմութեան մասին թ. 325.

նակւայ զիտնական պլէքէների համար երրորդ դասի պատմութիւնն աւելի հետաքրքրական էր, քան արքունիքի և աղնւականութեան պատմութիւնը: Այդ պատճառով կը նրանք պահանջ են զգում հէնց երրորդ դասի պատմութիւնը մշակել: Եւ որովհետեւ այդ պատմութիւնը բաղմաթիւ դարերի ընթացքում ամրող ժողովրդի պատմութիւնն է պարունակել, ի բաց առեալ աղնւականութեան և հոգեսրականութեան, զարմանալի չէ, որ անցած դարերի ժողովրդական կեանքն սկսեց զրաւել պատմագիտութեան զլխաւոր ուշադրութիւնը, մինչդեռ առաջներում նա միայն թագաւորներով և աղնւականներով էր զրադւում: Մէստաւրացիայի ժամանակի պատմագիտութեան մէջ երրորդ դասի նո՛յն արամադրութիւնն արտայալտւեց, ինչ որ տասնեօթերորդ դարում սկսեց արտայալտւել գեղեցիկ զրականութեան և զրական քննադատութեան բնագաւառներում: Այսպէս կոչւած քաղքենի դրամայի երեան դարու հոգեբանութիւնը—հանրածանօթ է:

— «Ես 18-Երրորդ դարի ինքնակալ պետութեան խաղաղ քաղաքացիներից մէկն եմ,—զրում է Բոմարշէն,—ընչի՞ս է պէտք Պելոպոնեսում մահացած տիրանը կամ Աւլիդում զրհարերւած թագաւորի աղջիկը: Այդ ամենն ինձ բնաւ չի զբաղեցնում: Այդ ամենից ես ոչինչ ուսանելի բան քաղել չեմ կարող»<sup>8)</sup>: Բոմարշէն և իր ժամանակակիցներն ուզում

<sup>8)</sup> Essai sur le genre dramatique sérieux „O'Œuvres complètes“—ում. Paris 1828 t. I, p. 11.

էին, որ բեմի վրայ սիրով և ուշադրութեամբ ներկայացւէր իրենց ժամանակակից երրորդ դասի կենցաղն ու տառապանքը:

Դասական, ողբերգութեան մոլութիւնը դէպի բարձրաստիճան հերոսները նրանց զրդում էր և վիրաւորում: «Միշին կարդի մարդկանց դարդն ու ցաւը պատկերել,—բայց ականչում է դառնազին Բոմարշէն,—Fi donc! Նրանց կարելի է միմիայն ծաղրել: Ծիծաղաշարժ քաղաքացիներ և դժբախտ թագաւորներ—ահա այն բնագաւառը, որի մէջ սահմանափակում է թարարութ: Այդպէս էլ իմացած կլինենք»<sup>9)</sup>:

Տասնութերորդ դարի բուրժուազիան իր պատկերն էր ուղղում ունենալ և նրա զբական ներկայացուցիչները փորձում էին նրա այն պահու զիմազմերը դուրս բերել քաղը ենի դրամայի<sup>10)</sup> հերոսների մէջ: Ռէստաւրացիայի ժամանակամիջոցում էլ իր հասարակա-քաղաքական նւաճումները հին ուժիմի կողմնակիցների անընդհատ ոտնձգութիւններից պաշտպանող բուրժուազիան իր սեփական մանկական և երիտասարդական տարիների վէպն էր ուղում լսել և նրա գիտնական ներկայացուցիչներն սկսեցին ուսանելի և հետաքրքրական գրոյցներ զրել այն ննշումների մասին, որոնց նա ենթարկելիս է եղել, լուագոյն վիճակ նւաճելու համար թափած ճիզ ու շանքի և ճնշողների դէմ վարած պայքարում ունեցած

<sup>9)</sup> Lettres sur la critique de Barbier de Seville „O'Erves complètes“-ում տ. I, պ. 258.

<sup>10)</sup> Բրիւնստիէր, Les époques du théâtre français. Paris 1896, պ. 287.

աշողութեանց մասին: Այզպէս սաեղծւեց մի նոր ուղղութիւն, որ պատմագիտութեան զարգացման ընթացքում ահազին քայլ էր դէպի առաջ:

Հին ժամանակի պատմաբանները, որ գերազանցօրէն թագաւորներով ու աղնւականներով էին հետաքրքրուում, իրենց բարձրաստիճան հերոսների սիրազործութիւններն էլ պատմական զարգացման մղիներն էին համարում: Այդ հայեացը տասնութերորդ դարի լուսաւորիչներն էլ էին իւրացրել: Սակայն նրանք, համաձայն իրենց յեղափոխական տրամադրութեան, կերպարանափոխեցին այդ հայեացը և առաջ մղեցին այն ուսմունքը, թէ աշխարհու կարծիքներով է կառավարում: Այդ տեսականօրէն սնանկ ուսմունքն այն առաւելութիւնն ունէր, որ մէջ տեղ էր տալիս մտաւորականութեան յեղափոխական հերոսների ազգեցութեանը միշին դասի ամբոխի վրայ, որ ննշւած էր և պետութեան, և բարձր դասերի կողմից:

Սակայն ռէստաւրացիայի ժամանակաշրջանի բուրժուազիան, որ քիչ առաջ մահացու հարւած էր հասցրել հին ուժիմին (կարդին), այլևս չէր նմանում մնշւած ամբոխի: Նրա գաղափարախօսները, նրա ուժի և նշանակութեան գիտակցութեամբ առգորւած, նրա մէջ էին տեսնում պատմական շարժման ամենագլխաւոր հերոսին: Մենք արդէն իմացանք, թէ ինչ հիացումով էր խօսում Տիերրին մարդկութեան և բաղաքակրթութեան առջև նրա ունեցած ծառայութեանց մասին:



Սակայն բուրժուազիայի գիտնական ներկայացուցիչները մի անգամ հետաքրքրւելով իրենց «հայրերի» պատմութեամբ, այլևս անհրաժեշտօրէն պիտի հասարակական հիմնարկութեանց պատմական ծագման և զարգացման մասին միանդամայն նոր հայեացը մշակէին:

— «Պատմաբանները զարմանալի յամառ հակում ունեն մասսայի ինքնօքնութեան և ստեղծագործելու ունակութիւնը ժխտելու, —ասում է Օգիստէն Տիերբին: —Եթէ որ և է ժողովուրդ նոր բնակավայր որոնելով՝ գաղթում է —մեր պատմազիրներն ու պօչտներն այդ նրանով են բացատրում թէ մի հերոս վճռած է եղել նոր կայսրութիւն հիմնել իր անունը փառաբանելու նպատակով: Եթէ որ և է նոր պետութիւն է ծագում —այս կամ այն թագաւորի ձեռներէցութեամբ են բացատրում: Ժողովուրդը, քաղաքացիները միշտ այս կամ այն մարդու մաքով ոգեշնչւած նիւթ են միայն: Ուզում էք իրօք իմացած լինել, ով է ստեղծել տւեալ հիմնարկութիւնը, ումն է պատկանում տւեալ հասարակական ձեռնարկութեան գաղափարը: Որոնեցէք նրանց, ում այդ բանը հարկաւոր է եղել: Ամենայն հաւանականութեամբ նրանցը կլինի և այդ բանի առաջին գաղափարը, և գործելու ցանկութիւնը, և իրագործման նշանաւոր մասը: Is fecit cui prodest,<sup>11)</sup> —այդ արսիոմը կա-

<sup>11)</sup> Լատին առած՝ «Այդ նա է անում —ում օգուտ է բերում» Ծանօթ. Թարգմանչի:

բելի է պատմութեան մէջ կիրարկել ոչ պակաս, քան իրաւագիտութեան մէջ<sup>12)</sup>:

Այս նոր տեսակէտը —հասարական կամ դասակարգակին շահի տեսակէտը —և համակրանքը գէպի «հայրերը», որոնք իրենց ուսերի վրայ բարձր դասերի դէմ բազմադարեան պալքար են կրել, պիտի անխուսափելիօրէն նրանց բերէին զանազան հասարակական գասակարգերի իրենց շահերի համար վարած պալքարի, կարծ՝ դասակարգային պայց քարի կարեոր պատմական նշանակութեան գիտակցութեանը:

Ցիրաւի, տակաւին իր զրական գործունէութեան սկզբում՝ Օգիւստէն Տիերբին մատնանիշ է անում «գասակարգերի և շահերի պալքարը» Անգլիայում (lutte des classes d'hommes et des intérêts) իբրև նորմանների նւանումի գլխաւոր հետևանքներից մէկը<sup>13)</sup>: Անգլիայի 17-երորդ դարի յեղափոխական շարժումը նա պատկերում է իբրև երրորդ դասի պալքար ընդդէմ ազնւապետութեան:

— «Ամեն որ, որի նախնիքը պատկանում էին Անգլիալի նւանողների թւին —ասում է նա անգլիական առաջին յեղափոխութեան մասին, —թողնում էր իր դղեակն ու գնում թագաւորի բանակը, որտեղ իր կոչման համապատասխան զիրք էր զրաւում: Քաղաքների բնակիչները խմբերով հակառակ բանակն էին

<sup>12)</sup> Dix ans d'études historiques, p. 348.

<sup>13)</sup> Vue des revolutions d'Angleterre /ողւածում Dix ans d'études historiques, p. 16.

գնում: Կարելի է ասել, թէ այն ժամանակ երկու զօրք էր հաւաքում—մէկը՝ յանուն անգործութեան և իշխանութեան, միւսը՝ յանուն աշխատանքի և աղատութեան: Բոլոր պարապորդներն, անկախ իրենց ձագումից, բոլոր առանց աշխատանք թափելու կեանքում վայելքներ որոնողները, թագաւորի զբոշակի տակ էին կանգնում, պաշտպանելով այնպիսի շահեր, որ նման են իրենց շահերին: Ընդհակառակը՝ վաղեմի նւաճողի յետնորդները, որոնք այն պահուն արդիւնաբերութեամբ էին զբաղւում—համայնքի կուսակցութեանն էին միանում»<sup>14)</sup>:

Առանձնապէս նշանակալից է այն հանգամանքը, որ այն պահու կրօնական շարժման մէջ Տիերին լոկ (գրական), վենսական շահերի արտացոլութիւնն է տեսնում: «Երկու կողմն էլ,—ասում է նա,— դրական շահերի համար էին պատերազմ մղում, մնացածը՝ արտաքին ծե է եղել կամ պատրւակ: Այն մարդիկ, որոնք հպատակների դատն էին պաշտպանում, ըստ մեծի մասին, պրեսրիւթերականներ (Երիցականներ) էին, այսինքն՝ չէին ընդունում ոչ մի հնագանդութիւն, անդամ կրօնի գործում: Իսկ նրանք, որոնք հակառակ կուսակցութեանն էին պատկանում—կամ անգլագաւան էին կամ կաթոլիկ և դա նրանից է, որ նոյն իսկ կրօնի բնագաւառում սրանք իշխանութիւն էին ուզում ձեռք բցել և տուրք գնել մարդկանց վրայ»<sup>15)</sup>:

<sup>14)</sup> Ibidem.

<sup>15)</sup> Ibidem.

Անցնելով Տիերրիից—Մինիէին, մենք կրկին նոյն հայեացըն ենք հանգիպում թէ գոլքային շահերի նշանակութեան և թէ դասակարգային կռւի դերի մասին բաղաքակիրթ երկիրների պատմութեան մէջ: Մինիէի ասած՝ «բազմագոյն և զօրեղագոյն շահերն օրէնքներ են թելագրում և հասնում իրենց նպատակին» (dictent la loi et arrivent à leur but)<sup>16)</sup>:

Սրանից արդէն հեշտ է հետեւյնել, թէ նրա կարձիքով հասարակութեան զարգացման համար—շահերն ինչ ազդեցութիւն ունեն: «Հասարակական շարժումն,—ասում է նա,—որոշում է գերիշխող շահերով: Այդ շարժումը խորտակելով զանազան խոչընդուներ ծփտում և հասնում է իր նպատակին: Ապա՝ կանգ է առնում և տեղի տալիս այլ շարժման առջե, որ սկզբում աննշմարելի է լինում և նկատելի դառնում այն պահուն, երբ սկսում է գերիշխութել: Այդպէս է եղել աւատականութեան զարգացման ընթացքը: Աւատականութիւնը, տակաւին փաստօրէն չիրականացած՝ գոյութիւն ունէր իրեւ մարդկալին կարիքներին համապատասխանող կարգ և դա առաջին շրջանն է: Երկրորդ շրջանում աւատականութիւնն արդէն փաստօրէն գոյութիւն ունի, սակայն աստիճանաբար դադարում է մարդկալին կարիքներին համապատասխանելուց: Եւ այս հանգամանքը վերջ դրեց նրա փաստական գոյութեանը: Ոչ մի չեղափո-

<sup>16)</sup> Du la feodalité des institutions de St. Louis et de l'influence de la legislation de ce prince. Paris, 1882, p. 47.

խութիւն ցարդ այլ կերպ չի կատարւել»<sup>17)</sup>: Պատմաբեմում քաղաքային համայնքների երեան գալը—այն ժամանակուայ հասարակութեանց բոլոր ներքին յարաբերութիւնները փոփոխեց: Խտալիայում քաղաքների կոմմունները (համայնքները) ծգտում են կատարեալ տիրապետութիւն ծեռք բերել և այնտեղ դեմոկրատիա է առաջ գալիս: Ֆրանսիայում նրանք հարկադրւած են լինում միանալ թագաւորի իշխանութեան և դրանով աբսոլիտիզմի հիմքը դնելու: Վերջապէս Անգլիայում նրանք միանում են աւատականներին թագաւորի դէմ և դրանից սահմանադրական միապետութիւն է առաջ գալիս<sup>18)</sup>:

Այսպիսով, երոպական հասարակութեան տարրերի—աղնւականութեան և երրորդ դասի—փոխյարաբերութիւնը որոշում է Եւրոպայի քաղաքական զարգացումը: Որքան աւելի էր անում երրորդ դասն, այնքան աւելի էր մօտենում հին հասարակարդի վերջնական անկումը: Ֆրանսիայում այդ անկումը տեղի ունեցաւ յեղափոխութեան շրջանում, դէպի որը Մինիէն ամենաշերմ զգացմունք է տածում: Նրա ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը բոլոր այլ գրւածներից լաւ է ցուց տալիս, թէ որ աստիճան պարզ էր դիտակցում նա դասակարգային պայքարի պատմական նշանակութիւնը: Նա գեղեցիկ կերպով ըմբռնում է, որ քաղաքական կուսակցութիւնների պայքարը յեղափոխութեան ըն-

<sup>17)</sup> Ibidem, pp. 77—78.

<sup>18)</sup> Ibid., p. 83.

թայքում լոկ գասակարգային շահերի ներհակութեան արտայալսութիւնն է: «Աղնւական դասակարգերն,— ասում է նա,— աղդապին կուսակցութեան հակառակ շահեր ունեին: Այդ պատճառով աղնւականներն ու բարձրաստիճան հոգեռորականները, որ աշ կողմն էին բազմել, շարունակ զիմաղբական դիրք էին բռնում ազգային կուսակցութեան նկատմամբ, բայց առութեամբ ընդհանուր յափշտակութեան մի քանի օրերի<sup>19)</sup>: Դիւպորի, Բառնաւի և Լամէտի կուսակցութիւնը «միշին գասակարգի մէջ օպափողիցիալի (գիմագրութեան) մի տեսակն էր»<sup>20)</sup>: 1791 թ-ի սահմանադրութիւնը միշին գասակարգի գործն էր, դասակարգի, որ այն պահուն ամենասուժեղն էր: «Յայտնի բան է,— աւելացնում է Մինիէն, — որ գերիշխանութեան հասած ոլժը միշտ տիրանում է հիմնարկութեանց»<sup>21)</sup>: Հակալեղափոխական ազստամբութիւնները կալւագուսում, Ժեռոդանում և Վանդէյում նա բացատրում է նրանով, որ այդ վայրերը չէին համակրում յեղափոխութեան, «որովհետեւ այնտեղ միշին և կրթւած բազմաբրդ դասակարգ չկար»<sup>22)</sup>:

Ժիրոնդացինները նրա աչքում միշին գասակարգի և հասարակ ժողովրդի (la multitude) մէջ տեղն էին դանւում, մինչդեռ նրա կարծիքով Դանտոնը, Ռոբեսպիրը, Կամիլ՝ Դէմուլէնը, Ֆ. դ'Էնդլանտինը, Մարտորը և այլք նոր շարժման խկական պարագուխ-

<sup>19)</sup> Histoire de la revolution française. Paris, 1827, t. I, p. 105.

<sup>20)</sup> Ibid., p. 111.

<sup>21)</sup> Ibid., p. 210.

<sup>22)</sup> Ibid., p. 227.

ներն էին: Նոր շարժումն ամենախոնարհ հասարակական դասակարգի միջոցով սկսւեց և միշտն դասակարգի դէմ էր ուղղւած, այն դասակարգի, որին թէ ըստ գիրքի, թէ լսա սովորով թների պատկանում էին ժիրոնդացիները<sup>23:</sup>

Օգոստոսի տասին «տեղի ունեցաւ հասարակ ժողովրդի ապստամբութիւնը միշտն դասակարգի և սահմանադրական դահի դէմ, ինչպէս յուլիսի 14-ին միշտն դասակարգն ապստամբեց արտօնեալ դասակարգերի և թագաւորի արսոլիւտ իշխանութեան դէմ»<sup>24:</sup> Կարճ՝ ֆրանսիական յեղափոխութեան ամբողջ պատմութեան միջոցով Մինիէն այն դրութիւնն է լուսաբանում, որ ամենայն իրաւամբ կարող էնք քաղաքակիրթ հասարակութեանց մէջ կատարւող պրոգրեսսի (առաջսազայման) բանածեն անւանել: «Փոփոխութիւնները խանգարում են շահերը: Շահերը կուսակցութիւններ են առաջ բերում: Կուսակցութիւնները կուրի են բոնւում»<sup>25:</sup> Զուր չէր ասում Օգիւստէն Տիերին, թէ Մինիէն փաստերի ընդհանրացման և պատմական ինտուիցիալի մէջ տաղանդով էր օժտւած:

Իր ամբողջ կեանքի ընթացքում Մինիէն «միշտն դասակարգի» գիտակից, շիտակ և հետևողական ներկայացուցիչն է Եղել: Նրա իդէալն—այդ դասակարգի սոցիալական և քաղաքական տիրապետու-

<sup>23)</sup> Ibid., 276.

<sup>24)</sup> Ibid., 290.

<sup>25)</sup> Ibid., 213.

թիւնն է Եղել: Նա «հասարակ ժողովրդի» վճռական թշնամին էր այն չափով, ինչ չափով վերշինս վտանգ է սպառնում այդ տիրապետութեան:

— «Նա զգւում էր կոմմունալի անկարգութիւններից»—ասում է նրա կենսագիր Էդուարդ Պախն<sup>26:</sup> Սակայն կոմմունալի դաժան ճնշող Տիերիի այդ բարեկամը գործողութեան յեղափոխական եղանակի առջեւ ողորմելի չարախնդացութեամբ սարսափահար չէր լինում այնպէս, ինչպէս մեր օրերի մանր ուխոշոր բուրժուանները: «Միմիալն ուժով կարելի է ճանաչել տալ իրաւունքներդ»—նկատում է նա յեղափոխութեան պատմութեան սկզբում, մի քանի էջ անց աւելացնելով՝ «մինչ այժմ բայց ուժից ուրիշ գերագոյն տէր չկայ»<sup>27:</sup>

Արդի պատմաբանները նման մտքեր չեն սիրում: Ծեր Գիզօն կբացարի մեղ նրանց ճաշակի այդ առանձնայատկութիւնը:

Գիզօնի հայեացըները հասարակական զարգացման արմատական պատճառների մասին Օգիւստէն Տիերիի և Մինիէի հայեացըներից չեն տարրերւում: Նրա աչքում էլ սոցիալական յարաբերութիւններն են քաղաքական յարաբերութեանց կիմքը: «Գրողների, գիտնականների, պատմաբանների մէջ մասը,—ասում է նա իր «Essais sur l'histoire de France»-ում,—

<sup>26)</sup> Francois Mignet, par Eduard Petit. Paris 1889, p. 286.

<sup>27)</sup> Histoire de la revolution française, t. I, p. 513. Այս արտակայտութիւնները յիշեցնում են Մարքսի յայտնի խօսքը՝ «ոյժը նորով յդի հին հասարակութեան նկատմամբ միշտ էլ տատմէր է եղել»:

հասարակութեան տւեալ կացութիւնը, նրա քաղաքակրթութեան ասսինան ու տեսակը ծգտել է այդ հասարակութեան քաղաքական հիմնարկութիւնների միջոցով մեկնել: Աւելի խոհեմ վիճակը հէնց հասարակութեան ուսումնասիրութիւնից էլ սկսել նրա քաղաքական հիմնարկութիւնները նանաչելու և բժրոնելու համար: Հիմնարկութիւնները պատճառ լինելուց առաջ հետեւանը են լինում: Հասարակութիւնն այդ հիմնարկութիւնների ազգեցութեան ներքոյ փոփոխութեան ենթարկելուց առաջ—ստեղծում է նրանց: Եւ կառավարութեան ձեւերից ժողովրդի կացութեան մասին դատողութիւն անելուց առաջ պէտք է ժողովրդի կացութիւնն ուսումնասիրել դատելու համար թէ ինչպէս պիտի լինէր, ինչպէս կարող էր լինել նրա կառավարութիւնը... Սուաշին հարցը, որ պիտի գրաւի ժողովրդի կենցաղը նանաչել ծգտող պատճարանի և մարդկանց կառավարելու եղանակին ծանօթանալ կամեցող հրապարակախոսի ուշադրութիւնը—պէտք է լինի հասարակութիւնը, նրա կազմը, առանձին-առանձին անհատների սոցիալական դիրքից կախւած ապրելակերպը, տարբեր դասակարգերի յարաբերութիւնները, մի խօսքով մարդկանց քաղաքական կենցաղը (l'état des personnes)<sup>28</sup>:

Գիղօի ասելով՝ Արևմտեան Հռովմէական կայսրութեան անկումից յետոյ Եւրոպայում հան-

<sup>28)</sup> Essais sur l'histoire de France, dixième édition (առաջին հրատարակութիւնը 1821 թ. է լոյս տեսել) pp. 73—74.

դէս եկած բոլոր ազգերի քաղաքացիական կենցաղը սերտ պատճառաբանական կապով կապւած է եղել հողալին յարաբերութեանց հետ, ուստի նախ քան քաղաքացիական կենցաղն ուսումնասիրելը, պէտք է ուսումնասիրել հողային յարաբերութիւնները: «Քաղաքական հիմնարկութիւններն ըմբռնելու համար պէտք է ուսումնասիրել հասարակութեան զանազան խաւերը և նրանց փոխ-յարաբերութիւնը: Այդ դանազան հասարակական խաւերն ըմբռնելու համար պէտք է հողային յարաբերութեանց էութիւնը զիտենալ»<sup>29</sup>:

Այդ տեսակէտով էլ Գիղօն նայել է Փրանսիական պատճութեան առաջին և երկրորդ հարստութեանց ժամանակաշրջանների վրայ և պատկերել իրեւ այն պահու ազգաբնակութեան տարրեր «խաւերի» պայքար:

Անգլիական յեղափոխութիւնը նա նկարագրել է իրեւ պայքար բուրժուազիայի և աղնւականութեան միջև: Այն հայեացըր, ըստ որում անգլիական յեղափոխութիւնն աւելի քաղաքական բնոյթ է ունեցել, քան սոցիալական, մինչդեռ ֆրանսիականը ծգտել է փոփոխել և հասարակութիւնը, և կառավարութիւնը, Գիղօն համարում է սրամիտ, բայց և մակերեսալին<sup>30</sup>: Իրօք, երկու յեղափոխութիւններն էլ համանման ժագում և նպատակ են ունեցել:

<sup>29)</sup> Ibid., pp. 75—76.

<sup>30)</sup> Histoire de la révolution d'Angleterre, Paris 1841, t. I, preface p. XXI (առաջաբանը ստորագրւած է՝ ապրիլ 1826):

Անգլիայում յեղափոխական շարժումն սկսւեց անգլիական ժողովրդի սոցիալական յարաբերութեանց և բարքերի փոփոխութեանց ազգեցութեանները: Մինչեռ բարձրագոյն ազնւականութիւնը կորցնում էր ժողովրդի վրայ ունեցած ազգեցութիւնը և անբարուականանում, մանր ազնւականները, ֆրիդհոլդերները և բուրժուաները, բացառապէս իրենց տնտեսական գործերով զբաղւած լինելով, աւելի և աւելի հարստանում էին, աւելի և աւելի ենթարկում ժողովուրդն իրենց ազգեցութեան: Աստիճանաբար, առանց ազմուկի և զրեթէ անգիտակցաբար նրանք բոլոր հասարակական ուժերը — «իշխանութեան իսկական աղբիւրները»<sup>31)</sup> կենտրոնացրին իրենց ձեռքում: Եւ հասարակական յարաբերութեանց մէջ կատարող այդ արմատական փոփոխութեան հետ միջին դասն (*les communes*) սկսում է անհամբերող դառնալ բռնակալութեան նկատմամբ: «Կարողութեան անումբ կարիք է առաջ բերում բռնակալութիւնը սահմանափակելու: Թաղաւորի իրաւունքները, որ երկար ժամանակի ընթացքում ոչ մի բոլոր չէին յարուցանում, սկսում են զեղծում թւալ»<sup>32)</sup>: Այդպէս բռնկեց յեղափոխական պայքարը, որ բախտի բազմաթիւ և բազմապիսի փոփոխականութեան ենթարկւեց, բայց և այնպէս վերջացաւ միջին դասակարգի լիակատար յաղթանակով:

<sup>31)</sup> Ibid., pp. 9—10.

<sup>32)</sup> Ibid., pp. 11—12, համեմատիք նաև Discours sur l'histoire de la révolution d'Angleterre.

Գիդօն կարողանում է հետեւ «հասարակական ասրրի» ազգեցութիւնը ոչ միայն հասարակութեան քաղաքական կազմի, այլև նրա մէջ կատարւող մտառ հոսանքն էր ի վրայ: Նրա առաջին կայսրութեան մասին արտայատած մտքերն արժէր մանրամասն ըննութեան առնել: Մակայն տեղի սղութեան պատճառով մենք այստեղ կը իշխատակենք միմիայն նրա դատողութիւնները թատրոնի մասին: Նրա կարծիքով թատրոնի վիճակն արտացոլում է հասարակական յարաբերութեանց գարողացումը: Հին Յաւնաստանում, որտեղ ամբողջ ժողովրդի ձեռքին էր հասարակական գործերի զեկավարութիւնը, թատրոնը — համաժողովրդական զւարճութեան էր ծառայում և արտացոլում բոլոր աղաւացացիների սովորոյթներն ու նաշակը: Ընդհակառակը՝ նոր ժամանակներում, թատրոնը լոկ բարձր դասակարգերի զւարճատեղին է դառնում, որովհետև հասարակութիւնը զանազան դասակարգերի բարդ համախմբում է, որտեղ իւրաքանչիւր դասակարգերը իր աշխատանքով է զբաղւած և բոլոր դասակարգերը շարունակ պայքարում են իրար գէմ գերիշխանութեան համար: Թատրոնի առաւելութիւնները դրանից շատ և շատ տուժում են: Բարձր դասակարգերը, իրենց դիրքն ամրապնդելուց յետով, սովորաբար ծգտում են հասարակութեան մնացեալ մասից անջատւել և հեռանալ: Նրանք ժողովրդին յատուկ պարզ ու բնական սովորոյթները կորցնում և արհեստականութեամբ են առգործում: Այդ պատճառով էլ զեղարւեստական սակագոր-

ծութեան բնագաւառը նեղանում ու նսեմանում է: Գիզօն օրինակ է բերում անդլիական թատրոնի վիճակը 1660 թ. ուստաւքայիշից յետոյ: Անդլիական ազնւականութիւնն արհամարհելով ժողովուրդը—նոյն իսկ Շէքսպիրին էր արհամարհում և անկիրթ համարում: Ֆրանսիական ողբերգութիւնն էլ էր բարձր դասակարգերի ծնունդը, ուստի հին կարգի անկման հետ անցաւ նաև նրա ժամանակը: Յեղափոխութիւնը «նոր դրամատիրական սիստեմի»<sup>33</sup> համար տեղ բացեց:

Իհարկէ, կարելի է Գիզօի գատողութեանց առանձին մանրամասներին և չհամաձայնել: Սակայն չի կարելի ընդունել, որ երկոյթների պատճառաբանական կապակցութիւնը նա միանդամայն ճիշտ է զծել: Յետադայում այդ ուղիով էլ դնացին ֆրանսիական գրականութեան ամենաբանքարաւոր ըննադատներն ու պատմաբանները, որոնք քաղաքակիրթ մարգկութեան մտաւոր պատմութեան մատերիալիստական բացարութեան համար լաւ հող պատրաստեցին:

Գիզօի քաղաքական գործունէութիւնն աւելի պայմառ կերպով է դրսեորում նրա դասակարգացին հայեացակէտը: Նա ինքն իր «Յիշողութիւններում» ասում է, որ միջին դասակարգերի (des classes moyennes) քաղաքական անփոփոխ ժգառումն իր տիրապետութեան ամրապնդումն է եղել<sup>34</sup>: Նա ոչ

<sup>33)</sup> Տ. յափազանց հետաքրքրական Etude sur Shakspeare, Շէքսպիրի գործերի ֆրանսիական թարգմանութեան առաջին հատորում, Փարիզ 1821.

<sup>34)</sup> Memoires, Փարիզ 1858, տ. I թ. 8.

միայն անվախ ու ջերմ պաշտպանել է այդ դասակարգերի շահերն, այլև իր իսկ ասելով կամեցել է նրանց գործը մեծարել «փոխադրելով» այդ գործը անցեալի մէջ և ցուցադրելով նրա շահերն ու բախտի փոփոխականութիւնը ֆրանսիական պատմութեան ամբողջ ընթացքում»<sup>35</sup>: Այդ մտադրութիւնը նա փայլուն կերպով իրագործել է իր քաղաքական պանֆիլէտներում, որոնցից ամենաուշագրաւը «Du Gouvernement de la France et du ministère actuel» վերտառութիւն կրողն է, որ 1820 թւականի սեպտեմբերին է լրյա տեսեր: Գիզօն հանդէս է գալիս իբրև ֆրանսիական յեղափոխութեան համոզւած պաշտպան: Յեղափոխութիւնը մի պատերազմ է, որ միանդամայն նման է միջազգային պատերազմներին: «Տասներեք դարի ընթացքում Ֆրանսիայում երկու ժողովուրդ է եղել՝ յաղթող և յաղթւած: Տասներեք դարի ընթացքում յաղթւած ժողովուրդը պարբարել է յաղթողի լուծը թօթափելու համար: Մեր պատմութիւնն այդ պարբարի պատմութիւնն է: Մեր ոռերում տեղի ունեցաւ վճռական հակասամարտ: Այդ հակասամարտը—Յեղափոխութիւն է կոչւում»<sup>36</sup>: Հետեանքն ակներև է: Երբեմն յաղթւած ժողովրդը—յաղթող դառաւ և իր հերթին նւաճեց ֆրանսիան: Գիզօի ասելով բամբահուչակ խարտիան (թուղթը) լոկ այդ անկասկած փաստը նանաչեց և իր աւունք յայտարարեց: Ներկայացուցչական կա-

<sup>35)</sup> Ibid., pp. 296—297.

<sup>36)</sup> Du gouvernement de la France, pp. 1—2.

ուավարութիւնն այդ նոր իրաւունքի ապահովումն էր<sup>37</sup>: Պատվիրակների պալատում տեղի ունեցած վիճաբանութիւնները կարող էին տարօրինակ և անրմբոնելի թւալ նրան, ով թէորեթիկոսի (տեսաբանի) տեսակէտով է նայում այդ վիճաբանութեանց և չի կապում այն հանգամանքներին, որոնց ծնունդն են նրանք: Իրօք վէճի էին բռնւել «հաւասարութիւնն ու արտօնութիւնը, միջին դասակարգն ու հին աղնւականութիւնը»<sup>38</sup>: Հին կարզը և նոր ֆրանսիան կեանքի և մահու պայքար են մղել: Նրանց հաշտեցնելու միտքն—անհեթեթ ցնորը է<sup>39</sup>:

Մենք արդէն գիտենք, որ հասարակական յարաբերութեան և մաւոր հոսանքների միջև եղած պատճառաբանական կապը Դիզօն ըմբռնում էր: Քաղաքական բանակոխւր նրան նորից այդ մասին իր կարծիքը յայտնելու հնարաւորութիւն է տալիս: Նա յայտարարում է՝ «գաղափարներն, ուսմունքներն, անդամ սահմանադրութիւնները» հպատակւում են հանգամանքներին և ժողովուրդը նրանց այն դէպքում է ընդունում, երբ նրանք իր շահերի դործիքն ու ապահովումն են հանդիսանում<sup>40</sup>: Անզլիական սահմանադրութեան պատճութիւնը, նրա կարծիքով, առանձնապէս գեղեցիկ ցուցադրում է «թէ մինչև որ աստիճան հանգամանքներն իշխում են ներկայացուցական սիստեմի կարծեցեալ տեսութիւնների

<sup>37)</sup> Ibid., p. 5.

<sup>38)</sup> Ibid., p. 22.

<sup>39)</sup> Ibid., p. 108.

<sup>40)</sup> Ibid., p. 91.

վրայ»<sup>41</sup>: Մենք տեսնում ենք անզլիական սահմանադրութեան շէնքը և մոռանում, թէ նա ինչպէս է կառուցւել: «Մարդկային իմաստութեանը մէնք առաջընթաց զարգացում ենք վերագրում, մինչդեռ դա լոկ անհրաժեշտութեան արգիւնք է»<sup>42</sup>: Ժողովրդի ինքնակալութիւն հոչակող լեղափոխական թէորեթիկոսները կամ սխալւել են ոկամ ոտել» (կուրսիվը մէրն է): Իրօք խօսքը ոչ թէ ամբողջ ժողովրդի ինքնակալութեան մասին է եղել, այլ ժողովրդի մի հատւածի միւսին յաղթելու մասին: Երրորդ դասը թւային ահազին առաւելութիւն է ունեցել և զրանից է ծաղել ժողովրդի ինքնակալութեան տեսութիւնը: Այն պահուն այդ տեսութիւնն անհրաժեշտ էր, որովհետեւ ոյժը—ուսմունքի կարիք է դգում: «Անհրաժեշտութիւն է, որ մարդիկ իրենց արդարացի համարեն և ցոյց տան այդ ուրիշներին»<sup>43</sup>:

Հակա-յեղափոխութեան կողմնակիցները միշտ էլ շատ լաւ ըմբռնելիս են եղել, որ իրենց նպատակին հասնելու համար պէտք է ծեռք քցեն իշխանութիւնը և օգտագործեն համածայն իրենց շահերին: Միշին դասակարգն էլ պէտք է լիշի, որ ինքը ոչ միայն պիտի իշխանութիւնը լուծի, այլև ծեռք քցի<sup>44</sup>:

Ներկայացուցչական կառավարութիւնը նպատակ ունի հասարակական կարիքն ու տենդեցն արտայատելու և իշխանութեամբ օժտելու նրանց, որոնք ունակ

<sup>41)</sup> Ibid., p. 127.

<sup>42)</sup> Ibid., p. 290.

<sup>43)</sup> Ibid., p. 138.

<sup>44)</sup> Ibid., p. 287.

Են այդ կարիքներն ու տենչերն ըմբռնելու և բաւարարելու<sup>45)</sup>: Ինքնին հասկանալի է, որ Գիղօի կարծիքով միմիայն «միշխն գտափ» ներկայացուցիչներն ունեն այդ ունակութիւնը, այդ պատճառով, ըստ նրա տեսութեան, իշխանութիւնն այդ գասակարգին էլ պիտի պատկանի: Եթէ իշխանութիւնը հասնի population extérieure-ին (այդպէս է կոչում Գիղօն բանւորական մասսան), որի իրաւունքը պէտք է հանաչել և պաշտպանել—կկործանւի ինքն էլ, ամբողջ պետութիւնն էլ<sup>46)</sup>:

Մարքսն ու Էնդել'որ «Մաճիֆեստում» որ գրել են—թէ՝ արդի պետական իշխանութիւնը բուրժուազիայի հասարակական գործերը կառավարելու համար ընտրւած մի հասարակ կոմիտէ է, բուրժուազիայի ստեղծած ներկայացուցչական կառավարութեան մասին նոյն միտքն են արտայալտել Միայն նրանք այդ հանգամանքը ոչ թէ ոմիջին դաստիարակի անդամութեան» տեսակետով են գնահատել, այլ «արտաքին ազգաբնակչութեան» (population extérieure) տեսակէտից, որի տիրապետութեան մասին առանց երկիւղի Գիղօն մտածել անգամ չէր կարող:

Յամենայն դէպո Գիղօն—որոշ սոցիալական ու քաղաքական տենդենցների ներկայացուցիչն ու պաշտպանն—անտարակուս շատ լաւ էր ըմբռնում այդ տենդենցների գասակարգային բնոյթը: Երբ որ նին կարգերի կողմնակիցները մեղադրում էին նրան, թէ

<sup>45)</sup> Ibid., p. 383.

<sup>46)</sup> Ibid., p. 326, note.

դասակարգային պայքար բարողելով նա իրը թէ սաոր կրքեր է զրգուում—նա պատասխանում էր թէ՝ «ինքը միայն կամեցել է ֆրանսիայի պատմութիւնը համառօտել, որը լի է գասերի պայքարով կամ աւելի ճիշտ՝ այդ պայքարից է հիւսւած: Այդ բանն իմանալիս և ասելիս են եղել յեղափոխութիւնից շատ դարեր առաջ: Այդ բանն իմանալիս և ասելիս են եղել 1789 թ., իմանում և ասում էին այդ երեք ամիս առաջ<sup>47)</sup>: Կարծեմ հիմա էլ են ամենքը մտարերում այդ, թէպէտե նոյնն ասելու համար ինձ յանդիմանում են: Փաստերը նա խարարների և կուսակցութեանց յարմարութեան համար և նրանց յանկութեամբ չեն ոչնչանում: Ի՞նչ կասէին այն բոլոր արի բուրժուաները, որոնք ուղարկւած էին գասային ժողովը երրորդ դասի շահերը պաշտպանելու և նրա համար իրաւունքներ նւաճելու համար, եթէ յանկարծ յարութիւն առնէին և լսէին թէ՝ ազնւականութիւնը երբէք չի մաքառել երրորդ դասի դէմ: Թէ՝ ազնւականութիւնն անհանգստութիւն չի զգացել երրորդ դասի ծագման միջոցին, չի զայրացել նրա անման պահուն և չի ծգտել կասեցնել նրա սոցիալական և քաղաքական առաջադիմութիւնը... Երբեմն մեծ երկրի իշխող և թագաւորներ սաստող յեղի այլասերւած զաւակներ—դուք հիմա ձեր նախնիներից և ձեր պատմութիւնից էք հրաժարւում: Դուք զիտակցում էք ձեր երբեմնի մեծութեան դէմ»:

<sup>47)</sup> 1820 թիւն է գրւած:

Դասակարգային պայքարի մասին խօսք բանալով՝ Գիզօն ոչ մի նոր բան ասելու մտադրութիւն չի ունեցել։ Դասակարգային պայքարը ոչ տեսութիւն է, ոչ ենթադրութիւն, այլ ամենահասարակ փաստ։ «Եւ ես կրկնում եմ,—բացականչում է Գիզօն,—այդ բանը տեսնելու համար առանձին շնորք պետք չէ, իսկ ժխտելը — ծիծաղելի է»։ Գիզօն ամաչում է, որ բուրժուատ լինելով՝ հարկադրւած է ազնւականներին ֆրանսիական պատմութիւնից գասեր տալու, ապացուցանելու, որ աղնւականութիւնն «իր յուշերի մէջ շատ է հեղացել»։ Իսկ ի պատասխան կրքեր բորբոքելու և բաղաքացիների մէջ գժտութեան սերմեր ցանելու մեղադրանքին—նա բացականչում է «ինչպէս թէ, մէնք պիտի մեր պատմութիւնը մոռանանք միմիայն այն պատճառով, որ նրա հետեւան ները ծեզ համար աննպա՛ստ են»։

Այս բարեմատները<sup>48)</sup> բաւական են Գիզօի այն պահումարտական տրամադրութիւնը բնոյթադժելու համար։ Որպէսզի բնոյթադիմն աւելի լիակատար լինի մատնանիշ անհնը «Du Gouvernement de la France»-ի նշանաբանը, որ բարեմատ է Պասկալի «Pensées»-ից և հնչում է այսպէս՝ «ախոր ժելի է փոթոք կի ժամին նաւի մէջ լինելն այն գէպքում, երբ գիտես, որ չես կորչել»։

Այս ամենն արդէն այնքան պայմառ է արտայալում բուրժուազիայի դասակարգային ինքնադիտակ-

<sup>48)</sup> Բերում եմ Դս ցուցանակը բորչիրի բորորդ հրատարակութեան Առաջ-պատճենից։

ցութիւնը, որ այլևս նոր բաղւածներ առաջ բերելու կարիք չկայ։ Ուստի մենք չենք խօսի Արման Կառլէլի «Historie de la contre-revolution en Angleterre» գրքի մասին (Փարիզ 1827), ոչ էլ Ալքսանդ Տոկւիլի դրւածների մասին, որոնք աւելի ուշ ժամանակի են վերաբերւում։ Մենք հիմնովին հաստատւած ենք համարում այն փաստը, որ տակաւին ուստաւրացիայի շրջանում Սէն-Սիմոնն ու Գրանսիական բուրժուազիայի բազմաթիւ այլ դիտական ներկայացուցիչները նոր ժամանակի ժողովուրդների պատմական զարգացման ամենազլիսաւոր զսպանակը—դասակարգային պայքարի մէջ էին տեսնում։

Այդ փաստը հաստատելը մենք շահաւետ ենք համարել այն պատճառով, որ «Կոմմունիստական Կուսակցութեան Մանիֆեստ» քննադատներից շատերի համար, ըստ երեսյթին, անյայտ է մնացել։ Օրինակ՝ Էմիլ՝ Վանդերվելլը կտրուկ կերպով պնդում է, թէ գասակարգային պայքարի գաղափարը «գեմոկրատական սոցիալիզմի փորձաքարն է, որ տարբերում է նրան հին ու նոր բուրժուական և ուսուպիական սոցիալիզմի բոլոր ձևերից» և որ այդ հասկացողութիւնն իր բոլոր հետեւանքներով «Կոմմունիստական Կուսակցութեան Մանիֆեստ» մէջ է զարգացում ստացել<sup>49)</sup>։

<sup>49)</sup> «Միջազգային սոցիալիզմի ուսկի հարսանիքը» (Թարգմանութիւն ֆրանսերէնից), Լոնդոն 1899 թ. էջ. 5. Ծուսերէն թարգմանութեամբ ալդ բրոշիւրը «Փոմե Յունու Ռյանկով Առաջ-պատճենից» է հրատարակել։ Հրատարակիչները փոքրիկ առաջարան են կցել, որի մէջ հակադրում են «Եւրոպայի սոցիալիստական մտքի առողջ զարգացումը»—«գերմանական սոցիա-

Պիտի խոստովանենք, որ «Մանիֆեստ» առիթով այսպէս ասած յորելեանկան բրոշն զբող մի մարդուց կարելի է պահանջել աւելի ուշիմ վերաբերմունք դեպի առարկան:

Նմանապէս պարոն Վերներ Զոմբարտը, քննադատելով «Մանիֆեստում» դասակարգային պայքարի մեջ պատմական նշանակութեան մասին արտայախտած հայեացըր, ոչ մի խօսք չի ասում այն մասին, որ բաղաքական դրականութեան մէջ քառասնական թւականներում այդ հայեացըրը նորութիւն չի եղել<sup>50</sup>: Վերներ Զոմբարտը նոր սոցիալիզմի «գոգմի պատմութեամբ» (Dgmenegeschichte) մեջ նշանակութիւն է տալիս: Նրանից էլ կարելի էր պահանջել, որ աւելի լաւ ծանօթ լիներ այդ պատմութեամբ: 1898 թ. «Devenir Social,-ի փետրարի գրքում տպադրւած «Essai d'interprétation et de critique de quelques concepts du marxisme» յոդւածում պ. Բենեդետո Կրոչէն Մար-

լիզմի դոգմին»: «Սոցիալիստական առողջ մտքի պատւելի կողմանակիցները Վանդերվել'դի ոչ վերոլիշեալ, ոչ էլ ուրիշ սխալներն են նկատել և նոյն իսկ նրա սխալներին իրենց սեփական պահեստից նորերն են աւելացրել: Վանդերվել'դին նրանք անւանում են «մարքսիստ և պարլամենտար սոցիալիզմի ամենագիտուն և տաղանդաւոր ներկալացուցիչներից մէկը»: Վերջինս պարզացի է: Վանդերվել'դը հակապէս սոցիալիզմի (պարլամենտար և ամեն այլ տեսակի) ամենազիտուն և տաղանդաւոր ներկալացուցիչներից մէկն է Բելջիկում: Սակայն եթէ Վանդերվել'դի ուսում հրատարակիչները ծանօթանային նրա այլ գրածներին—կհամոզւին, որ նա երբէք մարքսիստ չի եղել:

<sup>50)</sup> *Stra's Sozialismus und soziale Bewegung im 19 Jahrhundert*, ss. 1—2.

բսի և էնդել'սի ուսմունքը դասակարգային պայքարի մասին անչափ չանասիրութեամբ «քննադատում է»: Սակայն այդ շանասւեր քննադատան էլ, ըստ երեւոյթին, հեռու է այն մտքից, որ դասակարգային պայքարը տակաւին բուրժուազիայի թէորեթիկոսներն են քարոզել:

Թոմաս Կերկոպին էլ մատնանիշ անենք: Սա էլ ամենատարբեր կողմերից ծանր ու բարակ կանգ առնելով «Մանիֆեստ» վրայ, «քննադատում» է Մարքսի ուսմունքը և չի կուտում հարց տալ՝ իրօք դասակարգային պայքարի գաղափարը բաղափարը բացառապէս Մարքսին է պատկանում, թէ ոչ <sup>51)</sup>:

Մարքսիզմի քննադատների ոլիսին մինչև հիմա զրեթէ միշտ այդ տեսակ օյին է եկել: Մարքսի և էնդել'սի իսկական վրիպումները նրանք չեն նկատում, բայց փոխարէնը նրանց հաշվին այնպիսի սխալներ են անում, որ Մարքսն ու էնդել'սը երբէք չեն արել:

Սակայն վրիպում էլ կայ—վրիպում էլ: Հասկանալի բան է շատ լաւ էլինում, երբ տեսալ տեսութեան հիմնադիրներն իրենց բոլոր նախորդներին ծանօթ են լինում և նրանց մասին գատաղութիւն տալուց սխալներ չեն անում: Սակայն եթէ Դարւինն էւոլյուցիայի ուսմունքի պատմութեան մէջ իր սեփական տեսութեան բոնած տեղի մասին խօսելուց սխալներ անէր, ոչ մեծ մեղք չեր համարի այդ: Իսկ եթէ մէկը դարւինիզմի քննութիւնն. է յանձն առնում և առաւել ևս

<sup>51)</sup> *Stra's A. History of Socialism by Thomas Kirkop, London 1900,—7, 8 և 9 գլուխները:*

Եթէ տրան ֆորմիզմի պատմութիւնն է կամենում գրել, պարտաւոր է Դարւինի նախորդներին նանաչել և այդ դէպքում տարօրինակ կլինէր, եթէ այդ նախորդների մասին խօսելիս նա սահմանափակւէր նրանց մասին Դարւինի ասածների կրկնութեամբ:

Նոյնը կարելի է ասել նաև մարքսիզմի քննադասների և սոցիալիզմի պատմութեան մասին: Նրանց գրչի վրիպումները գողմի պատմութեան վերաբերեալ միանդամայն աններելի են, մինչդեռ Մարքսի և Էնգելսի գրչի վրիպումները լիովին ըմբռնելի և ներելի են:

Սակայն առ այժմ թողնենք քննադատան երին և վերաբառնանք նախորդներին:

Ուստաւրացիայի ժամանակ ֆրանսիական բուժժուադիան քանի-քանի մրրիկ ապրեց: Բայց նորերում ազնւականութեան վրայ տարած իր խոշոր յաղթութիւններից խրախուսւած նա հաւատում էր, որ չկայ այն ոյժը, որն ունակ է իր տիրապետութիւնը սահմանափակել և աշխոյժ էր նայում ապագային դանելով, որ շատ հաճելի է փոթորկի ժամին նաւի վրայ լինելը քանի որ գիտես, որ չես կորչի: Այն պահուն նա երկիւղ չէր կրում դասակարգային պայքարի մասին խօսելուց և ծաղրով հրաժարւում էր ի հաճուս այլասերւած ազնւականութեան իր սեփական դասակարգային պայքարի պատմութիւնը մոռանալուց: Սակայն աւազը: Ամեն ինչ հոսում է, ամեն բան փոփոխում: Հաղիւ մի երկու-երեք տասնամեակ անցաւ և բուժժուադիան հարկադրւած եղաւ այլ աչքով նայելու դասակարգային պայքարին: Բանւոր դասակարգն

—արտաքին ազգաբնակութիւնն,—ինչպէս Գիզօն էր կոչում, պալքարի բոնւեց բուրժուազիայի դասակարգային աիրապետութեան դէմ: Շնորհիւ գրան արմատապէս փոխեց բուրժուազիայի արամադրութիւնը: Եղափոխականից պահպանողական դառաւ: Քառասնութերորդ թւականը նրա համար ահաւոր դաս էր: Թէ ինչ լաւ ըմբռնեց նա այդ դասի իմաստը, եղեռում է նրանից, որ այդ ժամանակից նրա թէօբեթիկոսներն սկսեցին «սոցիալական խաղաղութիւն» քարոզել: Գիզօն, որ միշտ ուշիմ և դիւրապգաց վերաբերմունք է ունեցել «միջին դասակարգի» դրութեանն ու կարիքներին 1849 թ-ի յունւարին արդէն „De la Democratie“ բրոշիւրն է լոյս ընծայում, որով դէպի «աղատութիւն, անդորրութիւն, արժանապատութիւն, և բոլոր այլ «նիւթական ու հոգեոր բարիքները» տանող սոցիալական խաղաղութիւնն է երգում: Գիզօն 1849 թւականին էլ էր յիշում, որ ֆրանսիական պատմութիւնը սոցիալական կուից է (հիւսւած): Սակայն արդէն այդ կուին առաջադիմութեան մղիչ չէր նրա աչքում, այլ Պանդորի տուփի պէս մի բան, որից երկրի վրայ սարսափելի աղէտներ են թափում: «Մեր պատմութիւնը լի է հասարակութեան տարբեր դասակարգերի պայքարով», կրկնում է նա: 1879 թւականի յեղափոխութիւնն այդ պայքարի ամենաընդհանուր և ամենահզօր արտաքալտութիւնն է եղել:

—«Ազնւականութիւն և երրորդ դաս, ազնւապետութիւն և ժողովրդապետութիւն, բուրժուազիա

և մշակներ, սեփականատէրեր և պրոլետարներ—այս ամենն այն սոցիալական պալքարի տարբեր ձևերն ու տարբեր վուլերն են սոսկ, որից մենք այսքան երկոր տուժում ենք... Դա մեր ժամանակի խարագանն ու անարժան ամօթն է:

Ներքին խաղաղութիւն, խաղաղութիւն քաղաքայիների տարբեր դասակարգերի միջև, սոցիալական խաղաղութիւն։ Դա ֆրանսիակի ամենակարեռ պահանջը, փրկութեան ճիշն է»<sup>52</sup>:

Միջին դասակարգերի գերիշխանութիւնը 1789 թւականից յետով ֆրանսիական պատմութեան բնորոշ գիծն է հանդիսանում։ Այդ բանը նիշելով՝ Գիզոն գրում է բուրժուազիայի դովըր։ Սակայն նա պարզ տեսնում է, որ բուրժուական աիրավետութեանը վտանդ է սպառնում։ «Հիմա նոր ըսրից է ասպարեզ իշել։ Դեմոկրատական տարրն ստորաբաժանւել է։ Միջին դասերի գիծ բանւոր դասակարգերն են ելնում, բուրժուազիայի գիծ—պրոլետարիատը։ Այդ նոր պատերազմն էլ է կեանքի և մահու խնդիր, որովհետև նոր պրետենդենտն էլ բոլոր նախընթացների պէս, միահեծան է ուզում լինել»<sup>53</sup>:

Թրուետարիատն սպառնում է ոչնչացնել «միջին դասակարգերի» տիրապետութիւնը։ Միջին դասակարգերը վախենում են պրոլետարիատից, ուստի նրանց թէորեթիկոսները ախ աղ աղ ու թիւն են քարոզում։ Սակայն կայուն խաղաղութիւն

<sup>52)</sup> De la Démocratie, Paris 1849 p. 35.

<sup>53)</sup> Ibid., p. 107.

կնքելը հնարիսոր է այն ժամանակ, երբ պրոլետարիատը գտագարի բուրժուազիայի գոյութեան իրաւունքը ժխտելուց։ Գիզոն այդ գեղեցիկ կերպով հասկանում է։ Նա հիմա ուզում է ապացուցի՝ բոլոր դասակարգերը, որ գոյութիւն ունեն ֆրանսիայում—«ֆրանսիական հասարականութեան բնական և խորունկ տարրերն են»<sup>54</sup>:

Եւ նա պնդում է եթէ իրար գէմ մաքառող բոլոր կողմերն ընդունեն այդ մաքի արդարութիւնը —խոշոր ըայլ կիներ սոցիալական խաղաղութեան ուղղութեամբ։ Իրօք այդ մաքի արդարութիւնն ըն։ Պունելով պրոլետարիատը գրանով իր անաղատ վիճակը պիտի «բնական» հանաչլը։ Հենց այդ էլ հարկաւոր է բուրժուազիայի ահարեկւած դաշտավախոսին։

Մենակ Գիզոն չէր, որ սոցիալական խաղաղութիւն էր քարոզում և միայն Գիզոն չէր, որ «նոր ըմբիշի» ասպարեզ իշնելուց յետոյ փոխեց իր վերաբերմունքը գէպի դասակարգալին պալքարը։ Մէնք գիտենք արդէն, թէինչպէս էր Մինիէն վերաբերում Փարիզի Կոմմունայի «անկարգութիւններին»։ Բնորոշ է 1853 թ. լոյս տեսած „Essai sur l'histoire du Tiers-Etat“-ի առաջաբանը Օգ. Տիերիին 1848 թւականից յետոյ համակած տրամադրութեան համար։ Երրորդ դասի պատմութիւնը—միջին դասակարգի և ազնւականութեան սոցիալական պալքարի պատմութիւն է եղել։ Ինչպէս մենք գիտենք, առաջին մարդը,

<sup>54)</sup> Ibid., p. 105.

որ ընթերցող հասարակութեան ուշը պրտւեց այդ կուժի գասակարգային բնոյթի վրայ—հենց Օդ. Տերրին էր: Ժխաել այդ բնոյթը—կնշանակեր երրորդ դասի պատմութիւնը զրկել էր ողջ նշանակութիւնից: Սակայն միւս կողմից 1853 թ. Տիերրին արդէն գասակարգային պայքարի մասին առանց լուրջ վերապահումների խօսել չէր կարող: Եւ ահա նա նկատում է, որ իր գրքի բովանդակութիւնը կազմող գասակարգային պայքարը ոչ մի առնչութիւն չունի պըոլետարանների բորժուազիայի դէմ մղած գասակարգային պայքարի հետ: Որ իր նկարազրած պայքարը —բարերար էր իր հետեւանքներով և մզւել է ամբողջ դարերի ընթացքում, իսկ բուրժուազիայի դէմ պայքարը պըոլետարիատը «Երէկ» է սկսել և «միանգամայն խախտում է հասարակական ապահովութիւնը»: Պըոլետարիատի գասակարգային շահը նրա աչքում նեղ է, մինչդեռ երրորդ դասինը—շատ ընդարձակ, որպինետեւ երրորդ դասը պարփակել է ամբողջ աղջր—բացառութեամբ աղնւականութան և հոգեռականութեան:

Այս գատողութիւնը հոգեբանական տեսակէտից չափազանց հետաքրքրական է, թէև—ինչպէս մենք վարը կտեսնենք,—բուրժուազիայի դէմ լեզափոխական պայքար մղելու կողմնակիցները կարող լինեն հեշտութեամբ Օդ. Տիերրիին հերքել նրա իսկ սեփական ապացոյցներով:

Սակայն ուստաւրացիայի շրջանի ֆրանսիական պատմաբանների գիտական համոզմունքը գասակար-

գային պայքարի կարևորութեան մասին այնքան գորեղ էր, որ նրանց երկիւղը պըոլետարիատի յեղափոխական շարժման հանդէպ անցնում էր թէ չէ, իսկովն և ետ գարծեալ իրենց հին լեզուն էին բանեցնում: Օրինակ բերենք նոյն Գիզոին:

1858 թ. նա լոյս ընծայեց իր «Յիշողութիւնները»:

Այդ գրքի առաջին հատորում նա երիտասարդական վառ ոգեսորութեամբ քարողում էր միշին գասակարգի գասակարգային պայքարն ընդդէմ ազնւականութեան: Յիշատակելով իր „Du gouvernement de la France“ բրոշւրը, որ ինչպէս մենք զիտենք ամենաշերմ յորդոր է գասակարգային պայքարի, Գիզօն խոսափանում է, որ 36 տարի անց լուս ընծայելուց, վերընթեռնելով, այս տպաւորութիւնն է սատցել՝ «իրեն ինքնին և ըստ էութեան ըննելով, իբրև պատմաբան և փիլիսոփայ, ևս բրոշիւրիս մէջ ետ վերցնելու ոչ մի բան չեմ տեսնում: Ես շարունակում եմ կարծել, որ նրա մէջ արտայայտած ընդհանուր գաղափարներն—արդարացի են, որ սոցիալական խոշքը փաստերը նիշտ են գնահատւած, բաղաքական գործիչներին լաւ եմ ըմբռնել, ճշաօրէն ներկայացրել... Սակայն... մարդկանց նկատմամբ ես չափազանց պահանջկոտ եմ եղել»:

Գիտնական բարեխղճութիւնը յաղթահարեց «նոր ըմբիշի» աղդամ երկիւղը: Բուրժուազիայի զառամնալ թէորեթիկոսը գասակարգային պայքարը ֆրանսիայի ամօթն ու ցաւը չի համարում:

Նա պնդում է, որ „Du Gouvernement“ բրո-  
շիւրում փաստերը ճիշտ են գնահատուած, իսկ դա  
կնշանակի, թէ Թրանսիայի պատմութիւնը հիւսւած  
է սոցիալական կռւից, դասակարգային պայքարից:  
Անկեղծօրէն արտապայտելով այդ միտքը, Գիզօն ան-  
սահման աւելի մեծ յարգանք է մասու ցանում գի-  
տութեանը, բան այն բոլոր արդի «գիտնականները»,  
որոնք նոյն չերմեռանդութեանը են խուսափում  
դասակարգային պայքարը յիշատակելուց, ինչպէս  
Պօղոս առաքեալի խորհրդով բրիստոնեանները պիտի  
խուսափեն եօթերորդ պատիքանի արդելած  
«պղծութեանց» մասին խօսելու ց:

Այսպիսով կար ժամանակ, երբ բուրժուազիան  
գեղեցիկ կերպով բմբոնելիս է եղել դասակարգային  
պայքարի պատմական դերը: Իսկ եթէ հիմա նա չի հաս-  
կանում կամ իրեն անհասկացողի տեղ է գնում, եթէ նա  
«սոցիալական խաղաղութիւն» է քարոզում—այդ բա-  
նը շատ գեղեցիկ կերպով բացատրում է բուրժուազիան  
հասարակութեան յետազոյ պատմութեամբ, այն եր-  
կիւզով, որ նա ատածում է դէպի («նոր բմբիշը»): Եւ եթէ  
ներկայումս բուրժուազիայի թէորեթիկոսները շաղա-  
կրատում են «սոցիալական խաղաղութեան» նիւթի  
մասին և սոցիալ-դեմոկրատիաների ժանր մեղքն են հա-  
մարում դասակարգային պայքարի բարողը—սոցիալ  
գեմոկրատները կարող են նրանց պատասխանել այն-  
պէս, ինչպէս երբեմն Գիզօն էր պատասխանում աղ-  
նւականութեան թէորեթիկոսներին՝ «դուք երբեմն  
բաղաքակիրթ աշխարհի միահեծան աէրերի, թաղա-

ւորներ սարսափեցնողների ազասերւած յետնորդներ,  
դուք հրաժարւում էք ձեր նախնիներից և ձեր պատ-  
մութիւնից»: Եւ, Գիզօն պէս, մենք իրաւունք ունենք  
հեղնօրէն զարմանալու, որ մեր հակառակորդները չա-  
փաղանց հեզ են իրենց յուշերի մէջ: Մենք կարող  
ենք հեգնանքով հարցնել նրանցից՝ «մի՞թէ մենք պատ-  
մութիւնը պիտի մոռանանք միմիայն այն պատճառով,  
որ նրա եղրականութիւններն աննպաստ են ձեզ հա-  
մար»:

Ապա ինչպէս հասկանանք այն սոցիալիստաներին,  
որոնք մարքսիզմի քննադատութեան պատրւտկով  
կամենում են նւաստացնել դասակարգային պաքարի  
նշանակութիւնը: Իսկ նորին զերազանցութիւն պա-  
րոն նախարար Միլիերանի յախարարութիւնը՝  
պէտք չէ բանւորներին բուրժուազիայի դէմ լարել:  
Թող ինքն ընթերցողը դատի:

Ներկայումս սոցիալիզմը չի կարող դասակարգային  
պաքարի աեսակէտի վրայ չկանգնել: Առաջներումն, երբ  
սոցիալիզմն իր գարգայման մանկական շրջանումն էր  
գտնուում, նրա կողմնակիցները նոյնպէս պատրաստ  
էին ողբալու դասակարգային պաքարը, իրքև մարդ-  
կութեան ամօթն ու ցաւը: Դրան կարծես թէ հակա-  
սում են Սէն-Սիմոնի վերոլիշեալ հայեացքները: Զպէտք  
է մոռանալ, որ Սէն-Սիմոնի խօսքը ճիշտ արդիւնաբե-  
րողների պայքարի մասին է ընդգէմ աւատատէ-  
ր երի և ոչ թէ պը ու եա արի ատի պաքարի  
մասին ընդգէմ բուրժուազիան մէջ ինքնուրոյն դեր

խաղալու ունակ գասակարգ, Սէն-Միմոնի համար գոյութիւն չի ունեցել: «Ժընեփ նամակներում» նա «չքառորներին» ասում է, որ լեզափոխութեան միջոցին իշխանութիւն ծեռք բցելով նրանք կարողացան լոկ սով ստեղծել: Իսկ իր «արդիւնաբերական սիստեմի» մէջ կամենալով բուրժուազիալին հարկադրել իր հայեցքներն ընդունելու՝ ահարեկում է նրան, ասելով, թէ բանւոր գասակարգի մէջ հաւասարութեան գաղափարը («տաճկական հաւասարութեան») ինչպէս արտայացաւում է նա) կարող է լայն, սակայն քաղաքակրթութեան համար վնասակար նշանակութիւն ծեռք բերել<sup>55)</sup>: Բուրժուա-նախաձեռնողները Սէն-Միմոնի աչքում բանւորների մշտական զեկափարներն են հանգիստեցել: «Մանիֆեստի» հեղինակներն արդարացի կերպով ասում են, որ ուտոպիական սիստեմների ստեղծագործողները առեսնում էին գասակարգերի անագոնիզմը, (ներհակութիւնն) ինչպէս և քայլքազիչ տարրերի ազգեցութիւնը տիրապետող հասարակութեան ծոցում: Մական նրանք պրոլետարիատի մէջ ոչ մի պատմական ինքնագործութիւնն, նրան յատուկ ոչ մի քաղաքական շարժում չէին տեսնում:» Հաւատարիմ քաղաքական շարժում չէին այլ հայեցքին, ուտոպիական-սոցիալիստները դիմում էին ոչ թէ պրոլետարիատին, այլ՝ ամբողջ ժամանակակից հասարակութեան: Ժ. Պէրէյը Փարիզեան Աթենքում 1831 թ. արած իր գասախօսութիւններում սէնսիմոնականների կողմից կարականօրէն յայտարարում էր, որ իրենք, ինչպէս «պրո-

<sup>55)</sup> Du système industriel, Paris 1821, pp. 205—207.

գրեսսի մարդիկ» կամենում են ողջ մարդկութիւնը փրկած լինել «և ոչ թէ այս կամ այն ժողովուրդն, այս կամ այն գասակարզը»<sup>56)</sup>: Նմանապէս ֆուրիէրականների աչքում իրենց ուսուցչի վարդապետութեան գլխաւոր արժանիքներից մէկն այն է եղել, որ «հասարականութեան մէջ ներհակ շահերի»<sup>57)</sup> պայքար չի առաջադրել: Վերջապէս մատնանիշ անենք նաև Լուիֆլանին, որ 1845 թւի յունւարին իր „Organisation du travail“ հոչակաւոր բրոշիւրի առաջարանում գրել է՝ «այս դրբով ես ծեղ և մ դիմում, հարուստներ, որովհետեւ խոսքու—աղքատների մասին է, որոնց գործը — ծեր գործն է»:

Ուտոպիական սոցիալիստների այս հայեցքները և անսականօրէն, և գործնականօրէն խոշոր ետաղինութիւն է յեղափոխական բուրժուազի գաղափարախօսների վերև շարադրած հայեցքների համեմատութեամբ և այն ժամանակաւայ կապիտալիզմի նւազ զարգացմամբ են բացատրում: Իհարկէ բանւորների գասակարգային զիտակցութեան զարգացման վրայ նրանք գնասակար ազգեցութիւն ունեցան, թէեւ այդ զարգացումը կամեցնել նրանք չկարողացան և չէին կարող: Կապիտալիզմի անումն՝ առաջ էր մզում ինչպէս պրոլետարիատի թւական անումն, այնպէս էլ նրա մտաւոր զարթօնը: Արդէն 1836 թւի հոկտեմբերին Լոնդոնում դոյցութիւն ունեցող «Բանւորականօրէն յայտարարում էր,

<sup>56)</sup> Leçons sur l'industrie, Paris 1832, p. 39.

<sup>57)</sup> V. Considerant, Destinée Sociale t. II, 3-e ed., pp. 8 և շարունակութիւնը:

կան Միութիւնն» այնպիսի կանոնադրութիւն ընդունեց, որի մէջ աներկդիմի կերպով նիշւած է բանւորդասակարգի տիրապեսող գասակարգերի կուսակցութիւններից կարւելու անհրաժեշտութիւնը<sup>58)</sup>: Միւս կողմից ֆրանսիայում զաղսնի յեղափոխական ընկերութիւններն իրենց անդամների մեջ մասը բանւորական շրջանում են հաւաքում:

Մեր արդի տեսակէտով այն ժամանակւայ դաւագիր կոմմունիստների զործնական ծրագիրներն աւելի պակաս բաւարար են, քան նրանց տեսական հայեացքները եւ այնու հանդերձ նրանց հաստատ համոզմունքը, որ բանւոր գասակարգի («ժողովրդի») աղատագրումն անհնար է առանց պայքարի ընդդէմ բարձր դասակարգերի («աղնւականութեան») – խօսում է ի նպաստ նրանց համեմատութեամբ ուտոպիսական սոցիալիստների: Իհարկէ մի խումբ դաւագրութիւն սարքող մարդկանց պայքարը յանուն ժողովրդի շահերի ոչ մի դէպքում չի կարելի դասակարգային պայքար համարել: Բայց քանի որ դաւագիրների զիմաւոր մասը բանւորութիւնն է մատակարարում – դաւագրութիւնը բանւոր գասակարգի յեղափոխական պայքարի սաղմն է դառնում: «Տարւայ Եղանակներն» ընկերութեան հայեացքն աղնւականութեան» մասին ցոյց է տալիս այն ժամանակի ֆրանսիական յեղափոխական-կոմմունիստների գաղափարների ծննդաբանական կապը տասնութերորդ

<sup>58)</sup> Die Entstehung und die oekonomische Grundsätze des Chartismus von Dr. John L. Tildsley, Jena, 1898, pp. 2—4.

դարի յեղափոխական բուրժուազիայի և ուստաւրացիայի շրջանի աղատամիտ ընդիմադրականների գաղափարների հետ:

Մենք տեսանք, որ պրոլետարիատի դասակարգային շահը Օգիւստէն Տիերրիի աչքում նեղ էր իսկ երրորդ դասինը — լայն, որովհետեւ այդ դասը պարփակում էր ողջ ազգը բացառութեամբ ազնւականութեան: Ֆրանսիական յեղափոխական-կոմմունիստներն, Օգ. Տիերրիի պէս, եկել էին այն գիտակցութեան, որ անհրաժեշտ է աղնւականութեան դէմ պայքարել յանուն հասարակութեան մնացած մասի շահերի: Սակայն նրանք արդարացի կերպով անում էին հետևեալ ցուցմունք՝ տոհմական ազնւապետութիւնը տեղի է տւել, ուստի յանուն լայն հասարակական շահերի պայքարը պիտի ոչ թէ ազնւականութեան դէմ մղւի, այլ ընդդէմ բուրժուազիայի: Տրամաբանութիւնը, պարզ բան է, նրանց կողմն էր և նրանք ունեին իրաւունք յանդիմանելու իրենց բուրժուական հակառակորդներին անհետեղականութեան համար:

Քանի շահագործողների և շահագործողների շահերի ներհակութիւնն անում էր, անում և ամրանում էր նաև պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի անհրաժեշտութեան գիտակցութիւնը: Սակայն այդ գիտակցութեան մէջ տակաւին շատ ուտոպիսական տարրեր կային: Քառասնական թւականների կոմմունիստական և սոցիալիստական գրականութեան մէջ դասակարգային պայքարի գիտակցութիւնը դեռ չէր

Մենք այդ առաւելութիւնն ստորև մտնրամասն քննութեան կառնենք: Սակայն նախ պէտք է քննադատութեան ենթարկենք մարքսիզմի մի բանի քննադատների Աբնագաւական» նկատողութիւնները:

Պ. Վերներ Զոմբարտն ասում է՝

— «Կարլ Մարքսն իր գտրի մեծագոյն ճշմարտութիւններից մէկն է արտավագտել «Կոմմունիստական Մանիֆեստի» սկզբնական խօսքերով՝ «բոլոր ցարդ գոյութիւն ունեցած հասարակութեանց պատմութիւնը է»: Սակայն նա ճշմարտութիւնը լրիւ չի արտայայտել: Սխալ է թէ հասարակութեան ողջ պատմութիւնը սպառում է սոսկ դասակարգային պայքարով: Եթէ մենք կամենայինք համաշխարհային պատմութիւնը մի բանիսը խօսում են «Մանիֆեստի»-ի լեզուով<sup>59)</sup>: Սական դասակարգային պայքարի դաշտափարը «Մանիֆեստի» հեղինակների պատմական դաշն տեսութեան մասնիկն է հանդիսանում, մինչեռ Դիլոի, Տիերրիի, Մինիեի և նրանց ժամանակակից բուրժուազիայի այլ դաշտափարախօսների հայեացքները ի մի չեն բերւած: Հասկանալի է, որ դա Մարքսի և Էնդել'սի «հասարակական փիլիսոփայութեան» խոշոր առաւելութիւնն է:

հասել այն աստիճանն յստակութեան, ինչպիսին յատուկ էր, օրինակ Դիլոին: Այդ կողմից բուրժուական մտայնութիւնը լոկ «Մանիֆեստ» է գերազանցել:

Մարքսի և Էնդել'սի հայեացքը դասակարգային պայքարի, այդ պայքարում քաղաքականութեան ունեցած նշանակութեան և պետական իշխանութեան ամրապեսող դասակարգերից կախում ունենալու մասին նոյնանձան է Դիլոի և նրա համախոհների նոյն նիւթի մասին արծարծած հայեացքներին: Ամբողջ տարբերութիւնն այն է, որ մէկը բուրժուազիայի շահերն է պաշտպանում, իսկ միւսը՝ պրոլետարիատինը: Տեղ-տեղ «Մանիֆեստ» Դիլոի պանֆլետների լեզուով է խօսում կամ եթէ կամենում էր, Դիլոի պանֆլետներից մի բանիսը խօսում են «Մանիֆեստ»-ի լեզուով<sup>59)</sup>: Սական դասակարգային պայքարի դաշտափարը «Մանիֆեստի» հեղինակների պատմական դաշն տեսութեան մասնիկն է հանդիսանում, մինչեռ Դիլոի, Տիերրիի, Մինիեի և նրանց ժամանակակից բուրժուազիայի այլ դաշտափարախօսների հայեացքները ի մի չեն բերւած: Հասկանալի է, որ դա Մարքսի և Էնդել'սի «հասարակական փիլիսոփայութեան» խոշոր առաւելութիւնն է:

<sup>59)</sup> Օրինակի համար լիշեցներ վերը բերւած տողերը Գիգօի 1849 թ. գեմոկրատիալի մասին գրած բրոշիւրից: «Մեր ամբողջ պատմութիւնը լի է տարբեր դասակարգերի պայքարով... Ազնւականութիւն... և երրորդ դաս, ազնւապետութիւն և ժողովրդապետութիւն, բուրժուազիա և բանուրներ—այս ամենը հասարակական պայքարի տարբեր ձևերն ու տարբեր փուլերն են»: Սա գրեթէ բառացի նոյնն է, ինչ որ «Մանիֆեստի» առաջին գլխի սկզբում է ասւած:

ները: Արանք են այն երկու ներհակութիւնները, որոնցով լի է պատմութիւնը»:

Մարքսը նշմարտութեան մի մասն է դաել: Քննադատօրէն խորհող պ. Զոմբարտն իր կողմից լրացնում է Մարքսի ասածը և հիմա մենք երշանիկ ենք և գոհ, որ ճայրայեղութիւններից և չափազանցութիւններից զերծ լիակատար նշմարտութեան տէր ենք դառել: Դա շատ հաճելի է, սակայն առաջինք՝ հասարակութեան առանձին-առանձին անհատների փոխադարձ պայքարն աւ ելի բարձր դիրք գրաւելու համար տակաւին դասակարգացին պայքար չէ, ինչպէս գեղեցիկ կերպով ապացուցանում են իրենց օրինակով արդի ընծեռնողները, որոնք դաժան պայքար են մղում իրար դէմ գնողներ զրաւելու համար, սակայն որոնք խորի են իրենց նմանների դէմ դասակարգալին պայքար մղելու որևէ մտքից, իսկ երկրորդը՝ պ. Զոմբարտի «ազգացին պայքարն» ի՞նչ ասել է: Առանձին-առանձին պետութեանց պայքար իրար դէմ և ուրիշ ոչինչ: Հարց է ժագում՝ միթէ «Մանիֆեստի» հեղինակներն այս պայքարի պատմական նշանակութիւնն աչքաթող են արել: Դա տարօրինակ կլինէր: Առաւել ևս տարօրինակ, քանի որ նոյն հեղինակները, նոյն «Մանիֆեստում» ասում են, որ իւրաքանչիւր տւեալ պետութեան բուրժուազիան անընդհատ պայքար է մղում այլ պետութեանց բուրժուազիաների դէմ: Ինչո՞ւմն է ապա բանը: Այն, որ պ. Վերներ

Զոմբարտը պարզապէս թիւր է ըմբռնել «Մանիֆեստի» միտքը:

Ի՞նչ առումով է Մարքսը գործ ածում հասարակութիւն բառը: Այն առումով, ինչ առումով Գիզոն էր գործ ածում, արծարծելով այն միտքը, թէ քաղաքական կարգը կախում ունի հասարակական հասարակութիւնն են հասարակութիւն կրնատ բառով անւանում իտարբերութիւն պետութեան: Երբ որ «Մանիֆեստի» հեղինակներն ասում են, թէ իւրաքանչիւր տւեալ երկրի բուրժուազիան անընդհատ պայքար է մղում այլ երկրների բուրժուազիայի դէմ, նրանք ի նկատի ունեն պայքար պետութեանց միշե, միշազգային պայքար, կամ, բատ պ. Վերներ Զոմբարտի ասութեան՝ աղգային պայքար: Իսկ երբ որ նրանք ասում են, որ հասարակութեան ողջ պատմութիւնը ցարդ դասակարգերի պայքարի պատմութիւն է եղել—նրանք քաղաքացիական հասարակութեան պատմութիւնն են հասկացել կամ, ալլապէս ասած, պետութեանց ներքին պատմութիւնը<sup>60</sup>: Այդ պատմութիւնը, նրանց կարծիքով, դասակարգային պայքարի պատմութիւն է եղել և այդ պատմութեան նկատմամբ նրանց «քննադատն» ըստ էութեան համաձայնում է: Դուրս է գալիս, որ պ. Զոմբարտի

<sup>60)</sup> Համեմատիր՝ „Zur Kritik“-ի առաջաբանը, որտեղ լաւ երևում է, թէ Մարքսը «հասարակութիւն» բառն ինչ առումով է գործ ածում:

արած ուղղումները ոչ աւել քան թիւրամացութեան  
արդիւնք են:

Մարքսին և էնգել'սին ամենից յաճախ հէնց այդ-  
պէս էլ «քննադատում» են՝ նախ նրանց մի քիչ թիւր  
են բժբռնում կամ աղճատում, ապա մի քիչ ուղ-  
ղում: Եւ այդպէս են փարւում ներողամիտ քննա-  
դատներն, իսկ աններողամիտները—փարւում են  
առանց քաշւելու: Նրանք առանց այլեալութեան  
Մարքսին ապուշ-ապուշ մտքեր են վերադրում և  
ապա խորիմաստ լայտարարում՝ ժամ է վերջ դնել  
Մարքսի «գողմային»:

Բենեգետո կրոչէն դանում է, որ դասակար-  
դացին պայքարի գաղափարն ինքնին անորոշ է:

Նա ասում է՝ «1) Երբ որ զոյտութիւն ունեն  
դասակարգեր, 2) Երբ որ նրանց շահերը հակադիր են,  
3) Երբ որ նրանք այդ ներհակութիւնը դիտակցում  
են—ես էլ կասեմ, որ պատմութիւնը—դասակարգե-  
րի պայքար է: Բայց դա մեղ կրերէր այն զաւէշտական  
դրութեան, թէ պատմութիւնը միմիայն այնժամ  
է դասակարգերի պայքար, երբ նա... դասակարգերի  
պայքար է: Իրօք, դասակարգերը հակադիր շահեր չեն  
ունեցել և յաճախ այդ ներհակութիւնը չեն դիտակ-  
ցել: Սոցիալիստներին այդ քանը շատ լաւ յայտնի է:  
Երբեմն նրանց չի աջողւում նորագոյն պրոլետարիատին  
շահերի այդ ներհակութեան դիտակցութիւնը ներ-  
շնչել իսկ դիւղացիական շրջանում մինչեւ օրս էլ այդ  
չի աջողւել»:

Այս նկատողութիւններն ուշագրաւ են, որով-  
հետեւ առաջին հայեացքից կարող են թւալ սուր:

Դասակարգացին պայքարը տեղի է ունենում մի-  
միայն այնակեղ և այն ժամանակ միայն, որտեղ դասա-  
կարգերը գոյութիւն են ունենում: Դա, իհարկէ, մի-  
անգամայն արդարացի է: Տարօրինակ կիներ դասա-  
կարգային պայքարից խօսել այնպիսի մի հասարակու-  
թեան մէջ, որտեղ դասակարգերը բացակայում են: Սակայն ո՞ր հասարակութեան մէջ են նրանք բացակա-  
յում: Միմիայն բնակենցաղ հասարակութիւններում:  
Այդ տեսակ հասարակութեան մէջ գոյութիւն է ու-  
նենում շահերի իրօրնակ հաւասարակշռութիւն, որը  
սակայն կայուն չի լինում: Արդէն զարգացման նա-  
խնագոյն աստիճանի վրայ, տոհմալին կազմակերպու-  
թեան կատարաել քայլայումից շատ և շատ առաջ,  
«վայրենիների» շրջանում կարողութեան անհաւասա-  
րութիւն է առաջ գալիս, որին ոչ միայն շահերի  
անտագոնիզմ է հետեւում, այլ և այդ անտագոնիզ-  
մի գիտակցումը: Էսքիմոսների պօէզիայի ամենա-  
նշանաւոր արտադրութիւններից մէկն այն հէրիալն  
է, որի հերոսը՝ աղքատ ալրի կնոջ որդին—իր կրած  
ստորացումների վրէմն է լուծում իր հարուստ աղ-  
գականներից: Մինչդեռ նախնական կոմմունիզմի ներ-  
շնչած սոլիդարութեան (միաբանութեան) զդացմունքը  
մինչեւ օրս չափաղանց զօրեղ է էսքիմոսների մէջ:

Բայցի այդ պէտք է յիշել, որ բնակենցաղ հասա-  
րակութեան մէջ շատ վաղ է ծագում աղամարդկանց  
և կանանց միջև աշխատանքի բաժանում: Այստե-

զից սեռի անտադոնի զմէ ծագում որ  
երեան է դալիս մննդի, բարբերի, դարձութեանց,  
արւեստի, անդամ լեզւի մէջ։ Ով որ սեռի ան-  
տադոնիզմի նիւթական և հոգեռոր հետեւանքներն  
աչքաթող անի—բնակենցաղ կեանքի բաղմաթիւ կա-  
ընոր կողմէրը չի ըմբռնի։ Անցնելով աւելի զարգա-  
ցած հասարակութեանց, մենք, առանց դժւարու-  
թեան, կնշմարենք ինչպէս նրանց մէջ դոյութիւն ունե-  
ցող տարբեր դասակարգերն, այնպէս էլ նրանց ան-  
ընդհատ պալքարը, որ անդրադառնում է և պետա-  
կան կաղմի, և իրաւունքի, և կրօնի, և պօէզիաի  
մէջ, ամեն բանում, ինչպէս և զեղարւեստական ստեղ-  
ծագործութեան մէջ։

Ճիշտ է նաև այն, որ հասարակութեան զա-  
նազան դասակարգերի շահերը միշտ էլ ներհակ չեն  
լինում։ Սակայն դասակարգային անտադոնիզմի ծագ-  
ման համար բաւական է, որ այդ շահերը սոսկ տարբեր  
լինեն։ Այսուեղ, որտեղ ազքատների և հարուստների միջև  
տակաւին վարձկանի և վարձողի յարաբերութիւններ  
չեն հաստաւտել, յաճախ միայն շահերի տարբերութիւն  
է նկատում, որը սակայն դասակարգային դաժան  
պալքար է առաջ բերում։ Իսկ երբեմն դասակարգային  
պայքարի ծագման համար անհրաժեշտ չի լինում  
կարողութեան անհաւասարութիւնն, այլ բաւական  
է լինում տեղական շահերի տարբերութիւնն, ինչպէս  
այդ լաւ երեսում է Աթէնքի սկզբնական պատմու-

թիւնից, դիակրիների,<sup>61</sup> պարալիների<sup>62</sup> և պեղիների<sup>63</sup>  
միշտ տեղի ունեցած պայքարից<sup>64</sup>։

Պ. Կրոչէն լոկ մասամբ արգարացի միտք է  
արտայայտում, ասելով, որ հասարակական դասակար-  
գերը դիտակցում են շահերի անտադոնիզմը ոչ միշտ։  
Վերցնենք հէնց ուռւաց պատմութիւնը։ Քանի ան-  
գամ է ապատամբել դիւզացիութիւնը։ Շատ սակաւ  
— Ուաղինի ապատամբութիւնը և Պուդաչովինը  
Վերիկառոսիալում, կազակների կոխւները Մալառո-  
սիայում—սրանք համեմատաբար կարճատե շրջան-  
ներ են, մէկը միւսից բաժանւած աւել կամ պա-  
կաս երկար ժամանակամիջոցով։ Եւ այդ ժամանա-  
կամիջոցների համար ի՞նչն է բնորոշ։ «Սոցիալական  
խաղաղութիւնը»։ Ոչ, սոցիալական խաղաղութեան  
կամ անդամ զինադադարի ծայնը մենք չենք առ-  
նում։ «Սոցիալական կոխւր» չի դադարում նաև  
այդ միջոցներում այլ լոկ իր բնոյթն է փոխում,  
ակներեր դառնում է գաղտնի։ Հասարակու-  
թիւնն առաջւայ պէս բաժանւած է մնում երկու  
բանակի, մէկում—«պաներ», «տէրեր», միւսում—  
«ճորտեր», «մուժիկներ»։ Այս բանակներից իւրա-  
քանչիւրը շատ լաւ տեսնում է թշնամի զգացմանց,  
հայեացըների և գործողութեանց այն պատը, որ

<sup>61)</sup> Դիակրիներ—լունարէն՝ լեռնականներ։ Պ. Մ.

<sup>62)</sup> Պարալիներ—առավնեալ բնակիչներ։ Պ. Մ.

<sup>63)</sup> Պեղիներ—հարթաբնակներ։ Պ. Մ.

<sup>64)</sup> Stru' Griechische Geschichte von E. Curtius, I. B., Berlin, 1857, SS. 254—255; համեմատիր Hegel's Philosophie der Geschichte (herausgegeben von E. Gans) S. 261—«Der Unterschied der Stände beruht auf der Verschiedenheit der Localität».

իրեն անշատում է միւս բանակից: «Տէրերը» կոթում են «մուժիկներին» և աշխատում նրանց նկատմամբ որքան կարելի է «խստապահանջ» լինել: «Մուժիկները» «տէրերին» ծեռ են առնում և իրենցից կախւած բոլոր միջոցներով դիմագրում այդ «պահանջկոտութեան»: Եւ ամեն տարի, ամեն ամիս այստեղ-այնտեղ թէկ, ճիշտ է, սահմանափակ վայրում, բայց և այնպէս այդ գաղտնի կոխւն ակներել է դառնում: Մուժիկները «բունթ են անում», տէրերն, իրենց արամազրութեան ներքոյ դանւած դինւորական ուժով «ճնշում են»: Արդարացի է մեր նարողնիկների (ժողովրդականների) պնդումը, թէ ուստի ողջ պատճութեան միջով կարծիր թէլի պէս անցնում է հողի և աղատութեան համար մղած պայքարը: Սակայն այդ պայքարը հողի և աղատութեան համար ի՞նչ է, եթէ ոչ դասակարդալին պայքար... «Մուժիկը» գեղեցիկ կերպով ըմբոնում էր իր և կալւածատիրոջ շահերի ներհակութիւնը: Եւ եթէ, չնայած զրան, նրա վարած պայքարը չի կարելի դիտակցական դասակարդային պայքար անւանել, դա նրանից է, որ դիտակցական դասակարդալին պայքարը մղելու համար բաւական չէ շահերի ներհակութիւնը անսնելը, այլ և պէտք է ըմբոնել, թէ ինչ միջոցներով կարելի է լաղթել այն մարդկանց, որոնք հակադիր շահեր են պաշտպանում: Ուուս գիւղացիութիւնը, ինչպէս յախտնի է, այդ կողմից աչքի չի ընկել: Ուստի և նրա վարած պայքարն, ըստ մէծի մասին, «տարերացին» բնոյթ

է կրել: Այնու հանդերձ այդ պայքարը չի դադարում դասակարդալին լինելուց:

Պ. Կրոչէն գիտակցական պայքարն ու անտագոնիզմի գիտակցութիւնը շփոթում է, այդ պատճառով էլ կարծում է, որ այնտեղ, որաեղ գիտակցական դասակարդալին պայքարն իսպառ գոյութիւն չունի: Նա չի հասկանում, որ աւել կամ պակաս դաժան, ակներեւ թէ գաղտնի, գիտակցից թէ անդիտակցական դասակարդալին պայքարն ամենուրեք հասարակութեան դասակարդերի բաժանւած լինելու հետեանքն է:

Ճիշտ է նաև այն, որ արդի սոցիալիստները բոլոր ուժով աշխատում են զարգացնել բանւորների ինքնազիտակցութիւնը: Սակայն մենք չենք հասկանում ի՞նչպէս է պ. կրոչէն այդ անվիճելի փաստն առաջ բերում իբրև առարկութիւն դասակարդալին պայքարի ուսմունքի դէմ: Արդի սոցիալիստների նկատմամբ կարելի է «Մանկֆեստի» խօսքով ասել՝ «Նրանք այլ բանւորական կուսակցութիւններից լոկ նրանով են տարբերում, որ բուրժուաների դէմ պրոլետարների մղած պայքարի տարբեր շրջաններում նրանք միշտ պաշտպանում են շարժման ընդհանուր և ամբողջական շահերը»: Արանից այն եղբակացութիւնն էր լիստ, որ ոչ բոլոր բանւորներն են հաւասար աստիճան դասակարդալին գիտակցութիւն ունենում և ոչ բոլորն են հաւասարաչափ լաւ ըմբոնում բանւորական շարժման ընդհանուր շահերը:

Հասարակութեան դասակարգերի բաժանւելը—  
տնտեսական զարգացման հետևանք է: Սակայն իր երի  
ընթացքը կանխում է գաղափարները: Ուստի ար-  
տադրութեան հասարակական պրոցեսում մարդկանց  
միջև գոյութիւն ունեցող յարաբերութեանց դիտակ-  
ցումը ետք է մնում այդ յարաբերութեանց զար-  
գացումից: Բացի այդ, անդամ միւնոցն դասակարգի  
ծոցում գիտակցութիւնը հաւասար արագութեամբ  
չի զարգանում: Ոմանք աւելի վաղ, այլ անդամներն  
աւելի ուշ են ըմբռնում իրերի տւեալ էութիւնը:  
Դա հնարաւորութիւն է տալիս առաջադէմներին գա-  
ղափարօրէն ազգել ետամնացների վրայ, սոցիալիստ-  
ներին—այն պրոլետարների վրայ, որոնք տակաւին  
սոցիալիստական աշխարհայեացքին չեն հասել: Պ. Կրո-  
չէն, ըստ երևոյթին, ուղում է ասած լինել՝ դասա-  
կարգային գիտակցութիւնն իսպառ գոյութիւն չի  
ունենում այնտեղ, որտեղ պէտք է լինում զարգաց-  
նել նրան: Սակայն նախ ինքնազիտակցութեան պա-  
կաս զարգացումը տակաւին բացակայութիւն չէ: Ապա՝  
եթէ ներկայումս կարելի լինել այնպիսի բանւորների  
հանդիպել, որոնք հաւատալիս լինեին իրենց և ընծեռ-  
նողների շահերի ներդաշնակցութեանը, մենք դասա-  
կարգային ինքնազիտակցութիւնից իսպառ գուրկ  
նմանօրինակ բանւորների մասին պիտի տաեինք՝ նրանք  
տակաւին չեն ազատագրւել այն աշխարհայեացքից,  
որ յատուկ է դասակարգային պալքարի այլ տեսակի  
ժամանակամիջոցին, երրորդ դասի և ազնւապեառ-  
թեան պալքարի պահուն: Երրորդ դասն այն միջոցին

չէր գիտակցում իր իսկ ծոցում թագնւած տնտեսա-  
կան անտագոնիզմը: Զարմանալի չէ, որ այլ տեսակի  
դասակարգային պալքարի ժամանակաշրջանում մշակ-  
ւած հայեացքները մասամբ պահպանւել են, իբրև  
մնացորդ, մինչև մեր օրերը, դասակարգային պալքարի  
այլ տեսակի շրջանում: Զէ որ գիտակցութեան զար-  
գացումը ետք է մնում տնտեսական զարգացումից:

Դուրս է գալիս, որ արդի հասարակութեան  
մէջ, ուր որ նայելու լինես—դասակարգային պալքա-  
րի աղդեցութիւնը պիտի տեսնես: Դուրս է գալիս,  
որ հէնց ինքը, Պ. Կրոչէն է, որ «զաւէշտական» գրու-  
թիւններ է արտայատում:

Պ. Կրոչէն—իւելացի և ունակ մարդ է: Սակայն  
նրա մտածողութիւնը գիտեկափիկ տարրին չի հաս-  
նում և այդ պակասութեամբ է բացատրւում նրա  
ապարգիւն և անաչող «ըննադատութիւնը»<sup>65)</sup>:

Շարունակենք: Մէնք վերն ասացինք, որ «Մա-  
նկիֆեստ» հեղինակները պատմական դաշն տեսու-  
թեան տէր էին, մինչդեռ բուրժուազիայի գաղափա-  
րախօսների պատմական հայեացքները տակաւին ի մի  
չէին բերւած: Տիմա մենք այդ պիտի պարզենք և  
ապացուցենք:

«Երրորդ դասի» շահերի վրայ կանդնած պատ-  
մարանները՝ Օգ. Տիերին, Մինիէն, Գիզօն և այլք

<sup>65)</sup> Ցիշատակենք, որ վերին աստիճանի տարօրինակ է «գիւ-  
ղացիների» և «նորագոյն բանւորների» նոյնացումը մի մարդու  
կողմից, որ այնուամենալնիւ բաւական ծանօթ է նիւթի գրա-  
կանութեանը:

—տւեալ Երկրի քաղաքական կազմի, նրա մէջ տիրող հայեացըների ամենազլսաւոր, ամենախօր հիմքը—տնտեսական յարաբերութեանց մէջ էին աեսնում<sup>66</sup>:

Այդ տեսակէաից նրանց հայեացըները Մարքսի և էնգել'սի հայեացըներից ոչնչով չեն տարբերում և յետագյում, Մարքսն ասելով՝ իրաւական յարաբերութիւններն ու պետական ծեւերը ոչ թէ իրենց սեփական էութեամբ են բացատրում կամ, այսպէս կոչւած, մարդկային ոգու ընդհանուր զարգացմամբ, այլ կեանքի նիւթական յարաբերութեան մէջ են թագնւած լինում, չէգելի ասած՝ քաղաքացիական հասա-

<sup>66)</sup> Եթէ մեր այս առաջարանը գիտնական պրոֆ. Կարէկի ծեռքն ընկնի, նա մեր հասցէին, ինչպէս մի ուրիշ հասցէին արդէն արել է, կրացականչի՝ «և զա Գիզօհ մասին է ասում, որ այնքան մեծ դեր է յատկացնում անհատական զարգացման: Դա ասում է Օդ. Տիերրիթ մասին, անցքերի բացատրութեան համար այնքան մեծ դեր իսպացող ցեղային տեսութեան հեղինակի՝ մասին (Старые и новые этиюды, էջ 209): Սակայն գիտնական պրոֆեսորն այդպիսի բացականչութիւն է անում նիւթին անտեղեակ լինելու պատճառով: Գիզօն իրօք անհատական զարգացմանը մեծ դեր է յատկացնելիս եղել, սակայն այդ զարգացումը նրա գրածում հանդէս է զալիս իրք հասարակական զարգացման ցանկալի հետեւնք և ոչ թէ հիմնական պատճառներից մէկը: Տիերրիթ պատմական տեսութեան մէջ ոչ թէ «ցեղերն» են մեծ տեղ գրաւում, այլ մէկ ցեղի միւսին նւածումը: Նաւումն ինչ նպատակով է կատարում: Այս հարցին Տիերրին առանց տատանւելու կպատասխանէր՝ դրական (տնտեսական) շահերի համար: Այդ պատասխանն է տալիս, զոնէ նրա հոչակաւոր Historie de la conquête de l'Angleterre par les Normands գիրը: Վերյիշեցէր հետեւալ տեղը: Գաստինի ծակատարտից առաջ հրեշտակներից մէկն ասում է՝ «մենք պիտի նրա համար պաշտպանւենք, որ գործը նոր արքայի մասին չէ, աւ բոլորովին ուրիշ բանի... Նորմանք հողերը բաժանեց իր ուղամական հրամանատարներին, իր ասպետներին և բոլոր

բակութեան մէջ<sup>67</sup>—ասելով ապդ, Մարքսը լոկ կրկնում էր այն եղբակացութիւնը, որին յանգել էր պատմագիտութիւնն իրենից շատ առաջ հասարակական զարգացման և նրա հետ կապւած գասակարգավիճ պարբարի ազգեցութեան շնորհիւ: Ամբողջ տարբերութիւնն այն է միայն, որ Մարքսի նախորդները բոլորովին չեն պարզել անտեսական յարաբերութեանց և շահերի ծագումը, մինչդեռ Մարքսի համար դա բոլորովին պարզ էր:

Գիզօն, Մինիէն, Տիերրին և նրանց տեսակէաի վրայ կանգնած բոլոր պատմաբաններն ու հրապարակախօսները հասարակութեան անտեսական յարաբերութիւնները նւաճումով էին բացատրում: Մակայն նրանք իրենք էլ մատնանշում էին, որ նւաճումը կատարւում է որոշ «գրական շահերի» համար: Իսկ այդ շահերը որակից են: Պարզ է, որ նրանց

իր մարդկանց... Եւ եթէ նա մեր արքան դառնալ, նա հարկադրած կլինի մեր գոլըր, մեր կանանց և աղջիկներին էլ նրանց տրամադրելու: Խսկ Վիլ'նու'ն նւածողն իր զինուրներին հետևեալն է ասում՝ «լաւ կուեցէք և սպանեցէք ամենքին, որովհետև եթէ մենք յաղթենք—բոլորս էլ հարուստ կողոնանք: Այն, ինչ որ նս ծեռք կրերմ, ծեռք կրերէք նաև զուք, այն, ինչ նս կնւածնմ, կնւածէք նաև զուք: Եթէ նս ուղ ունենամ—զուք էլ կունենաք»: (Տիւ 1825 Խ. Փարիզեան հրատարակութեան առաջին հատորի էջ 300): Պ. Կարէկի «տնտեսական մատերիալիզմի» դէմ արած առարկութիւններն այնքան անրովանակ են և լի թիւրիմացութեամբ, որ լիշեցնում են Պրոլետնի խօսքը՝ Il faut qu'un professeur parle, parle, parle, non pas pour dire quelque chose, mais pour ne pas rester muet. (Պրոֆեսորը պիտի խօսի, խօսի, խօսի, ոչ թէ մի բան ասելու համար, այլ որպէս զի լուր ըմնայ. Պ. Մ.):

<sup>67)</sup> Zur Kritik der politischen Oekonomie, Vorwort.

դոյութիւնը պայմանաւորւած է լինում տճտեսական յարաբերութեամբ, ինչպէս նւանողների, այնպէս էլ նրանց լծի տակ ընկնողների երկրում:<sup>68)</sup> Դիւթւած շրջան է սաացում: Տնտեսական յարաբերութիւններն ու շահերը նւանումով են բայցարում, իսկ նւանումը՝—տճտեսական յարաբերութիւններով ու շահերով: Քանի պատմական տեսութիւնն այս դիւթւած շրջանից դուրս չէր եկել, անհրաժեշտաօրէն ընկնում էր էկլեկտիզմի և հակասութեանց մէջ: Քննութեան առածո ուղղութեանը պատկանող բոլոր պատմաբաններն առհասարակ նման հակասութեան մէջ սակաւ չեն ընկնում:

Երեմն պատմաբանները կոչ են անում մարդկային բնութեան: Սակայն երկուսից մէկը՝ կամ մարդկային բնութիւնը պատմական պրոցեսի ընթացքում անփոփոխ է մնում, կամ փոփոխում է: Եթէ անփոփոխ է մնում, պարզ է, որ պատմութեան մէջ կատարւած փոփոխութիւններն անմեկների են: Իսկ եթէ մարդկային բնութիւնը փոփոխում է—ուրեմն դա ոչինչ չի բացատրում, որովհետեւ մենք նախ և առաջ պիտի մեկնենք նրա սեփական փոփոխութեան պատճառը: Նոր դիւթւած շրջան, պատմագիտութեան հակասութեանց և էկլեկտիզմի նոր աղբիւր:

Այդ տեսակ էկլեկտիզմի և հակասութեանց պայծառ օրինակ կարող է ծառայել Տոկովիա և Ամերիկան Ամերիկայում» զիրքը, որ Խոյէ-Կոլ'եարն անւանում է Մանտեսկիեօ-ի «Օրէնքների Ոգու» շարու-

<sup>68)</sup> Տես 66 ձանօթութիւնը;

նակութիւնը: Տոկովիլն ասում է՝ եթէ տրւած է որոշ սոցիալական կազմ, կարելի է նրան «ազգի վարքը պայմանաւորող» օրէնքների, սովորոյթների և գաղափարների մեջ մասի սկզբնապատճառը համարել: Տւեալ ժողովրդի օրէնսդրութիւնն ու սովորոյթներն ըմբռնելու համար պիտի սոցիալական կազմի ուսումնասիրութիւնից սկսել<sup>69)</sup>: Իսկ որտեղից է սոցիալական կազմը: Ի պատասխան՝ Տոկովիլը մարդկալին բնութիւնն է մատնանիշ անում: Մենք դիտենք արդէն, որ դա ոչինչ չի բացատրում: Այդ բանը դիտէր կամ առնւազն կռահում էր նաև ինքը Տոկովիլը, որ իր Ամերիկայից գրած նամակներում ասում է՝ «այս-աել այնպիսի հասաւասութիւններ են ծաղկում, որոնք ֆրանսիայում անպայման յեղաշրջում կառաջացնեին: Մարդիկ այստեղ մերոնց նման են, բայց այլ պայմանների մէջ են գրւած»<sup>70)</sup>:

Այս խօսքերից այն անխուսավելի և անկասկած հետեանքն է բղխումն, որ մարդկային բնութիւնն ամերիկեան հիմնարկութեանց ըմբռնումի համար բնաւրանալի չի տալիս մեզ:

Այլ աեղերում Տոկովիլն աշխատում է սոցիալական կազմի ծագումն օրէնքների աղեցու-թեամբ բացատրել: Իսկ որովհետեւ նրա իսկ ասելով Երկրի օրէնտրութիւնն իր սոցիալական կազմով է բացատրում—մենք դարձեալ հակասութեան ենք

<sup>69)</sup> Տես՝ De la Democratie en Amerique, Paris 1836, t. I, p. 74.

<sup>70)</sup> Nouvelle correspondance de Alexis Tocqueville, Paris 1866; 1880 թ-ի լունիսի 3-ին հօրը գրած համակը:

զէմ առնում: Ինըր Տոկոիլն աղօտ կերպով դիատկ-  
ցում էր այդ հակասութիւնը և ծգառւմ տակիցը  
դուրս դալ: Սակայն նրա ճիզը դուր էր անցնում,  
նրա անալիզը (վերլուծումն) այս դեպքում կատա-  
րելապէս անդօր էր:

Մարքսի պատմական տեսութիւնը լուծում է  
այդ հակասութիւնը և այդպիսով պարզութիւն և  
հետևողականութիւն մացնում այնտեղ, որտեղ մինչ  
այդ բաղմաթիւ կարեռ մանրամաներ, խորունկ  
մտքեր և նիշա նկատողութիւններ կալին, սակայն  
բոլոր այդ կարեռ մանրամաները, խորունկ մտքերն  
ու նիշա նկատողութիւնները մի գաշն ամբողջու-  
թեան բերող հիմնական սկզբունք չկար:

Բայ Մարքսի աեսութեան սոցիոլական կազմը  
—մարդկանց հասարակական յարաբերութիւնները  
—նրանց տնտեսական յարաբերութիւններով են բա-  
ցարւում, «բաղաքացիական հասարակութեան մար-  
դաբանութիւնը տնտեսութեան մէջ պիտի որոնել»:  
Նման յարաբերութիւններն ինչպէս են սաեղծւում:  
Եթէ Մարքսը բացատրէր հայեացըներով, զգացմունք-  
ներով կամ առհասարակ մարդկային «բնութեամբ»  
—նա նոյն հակասութեանց մէջ կընկնէր, որոնց մէջ  
պատւում էին նրա նախորդները: Սակայն Մարքսը  
միանդաման այլ կերպ է բացատրում:

Մարդիկ ապրելու համար պիտի արտադրեն:  
Արտադրելու համար նրանք պիտի որոշ կերպով  
համախմբեն իրենց ուժերն, իրար հետ պիտի որոշ  
յարաբերութիւն հաստատեն: Մարքսն այդ յարա-

բերութիւններն արտադրական յարաբերութիւններ է  
անւանում: Այդ յարաբերութեանց հաւաքածուն կազ-  
մում է հասարակութեան անտեսական կառուցւածքը,  
որի հիմքի վրայ զարգանում էն մարդկանց այլ (սո-  
ցիալական) յարաբերութիւնները և ի միջի այլոց  
«բաղաքացիական կենցաղը», որ ուսանուացիայի  
ժամանակաշրջանի ֆրանսիական պատմաբանների  
տեսութեանց մէջ այնպիսի կարեռ գեր էր կա-  
տարում:

Եւրաբանչիւր տւեալ ժամանակաշրջանում  
արտադրական յարաբերութեանց բնոյթը ոչ թէ  
«զիսպւածով» կամ մարդկային «բնութեամբ» է ո-  
րոշւում, այլ այն բնական պայմաններով, որոնց մէջ  
մարդիկ հարկադրւած են իրենց զոյութեան  
համար պայքար մղելու: Այդ պայմաններից—նախ  
և առաջ միշավարի աշխարհագրական յատկու-  
թիւններից—կախւած են մարդկանց արամագրու-  
թեան ներքոյ եղած արտադիր ուժերը: Արտա-  
դիր ուժերի տւեալ վիճակին համապատասխա-  
նում են արտադրութեան տւեալ յարաբերութիւն-  
ները: Արտադրութեան տւեալ յարաբերութեանց  
համապատասխանում է տւեալ հասարակարգը,  
որի բառկութիւններն աղղելով մարդկանց հոգեբա-  
նութեան վրայ՝ պայմանաւորում են նրանց մտաւոր,  
բարոյական և առհասարակ այսպէս կոչւած հոգեկոր  
զարգացումը:

Սակայն արտադրութեան պրոցեսն ինքնին և  
մարդկանց ուժերի համախմբումն այդ պրոցեսում

աւելացնելով փորձի պաշարը՝ տաճում են դէպի արտադիր ուժերի յետագայ զարդացումը, որի շնորհիւ այդ ուժերի և արտադրական յարաբերութեան միջև անհամապատասխանութիւն է առաջ գալիս և աստիճանաբար զօրեղանում։ Առաջ այդ յարաբերութիւններն արտադիր ուժերի յետագայ զարդացմանը նպաստում էին, հիմա—սկսում են կասեցնել։ Սկսում է հասարակական զարդացման յեղափոխական շրջանը, որ վաղ թէ ուշ հնացած արտադրական և հետեւապէս նաև զոյքային յարաբերութեան, ինչպէս և ամբողջ «քաղաքացիական կենցաղի» կործանումով է վերջանում։

Հնացած արտադրական յարաբերութեանց դէմ վարած պալքարն ստիպում է մարդկանց քննադատական վերաբերմունք ցոյց տալ ոչ միան հին հասարակարգի նկատմամբ, այլև այն գաղափարների, այն զգացմունքների և առհասարակ այն «հոգեբանութեան» նկատմամբ, որ հին կարգի հողի վրայ էր անել։ Ուստի և հասարակական յարաբերութեանց բնագաւառում յեղափոխութեան շարժմանը համապատասխանում է յեղափոխական շարժում հոգեոր կեանքի բնագաւառում։ «Միթէ դժւար է ըմբռնել,—ասում են Մարքսն ու Էնդելմը «Մանիֆեստ» երկրորդ դիմում, —որ մարդկանց կենցաղավարութեան, հասարակական յարաբերութեանց և հասարակական դիրքի հետ փօխում են նաև նրանց մտապատճերները, հայեցքներն, ըմբռնումները, մի խօսքով նրանց ողջ աշխարհայեացքը։

Գաղափարների սկսումութիւնն ի՞նչ է ապացուցանում, եթէ ոչ այն, որ մտաւոր գործունէութիւնը բարեկիութուում է նրւթականի հետո։

Ահաւասիկ Մարքսի և Էնդել'սի պատմական տեսութիւնը Այս աեսութիւնը մէրւել է «Մանիֆեստի» մէջ, այդ է նրա հիմնական միտքը։

Այդ հիմնական մարի տեսակէտից «Մանիֆեստի» հեղինակները գնահատում են նաև իրենց ժամանակաշրջանը։ Եւ եթէ նրանք այդ շրջանը յեղափոխական են համարում, դա միմիան նրանից է, որ կապիտալիզմի ստեղծած արտադիր ուժերի և կապիտալիզմին յատուկ արտադրական յարաբերութեանց միջն նրանք անհամապատասխանութիւն են նշարում։ «Արդի բուրժուական հասարակութիւնն, իր արտադրութեան և փոխի կազմակերպութեամբ, — ասում են նրանք—ասես կախարդութեամբ ստեղծելով արտադրութեան և հաղորդակցութեան նման հզօր միջոցներ՝ այն կախարդի օրն են ընկել, որ իր կապի խօսքերով գուրս բերած սառը բերկրեաց ուժերն այլևս կառավարել չի կարողանում։ Արդինարերութեան և առեւտի պատմութիւնն ահա մի քանի տասնամեակ է ինչ արդի արտադիր ուժերի ընդգրումն է ներկայացնում արդինարերութեան արդի կազմակերպութեան, գոյքային յարաբերութեանց դէմ, բուրժուազիալի կեանը և աիրապեառութեան այդ պալմանների դէմ։ Այդ բանը պարզելու համար բառ ական է լիշել առեւտրական ճգնաժամերը, որոնք պարբերաբար կրկնելով

աւելի և աւելի են սպառնում, ողջ բուրժուական հասարակութեան գոյութեանը»:

Որովհետև արտադրութեան բուրժուական յարաբերութիւնները բանւորներին կապիտալի նկատմամբ ծանր կախման մէջ են դնում, զարմանալի չէ, որ նրանց շրջանում գոյութիւն է ունենում գժգոհութիւն, որ նիշւած հակասութեան անձան հետանում և արդի ողջ հասարակարդի գէծ ուղղած յեղափոխական շարժում է գառնում: Բուրժուազիան «ոչ միայն կոել է այն դէնքը, որ իրեն մահացու հարւած է հասցնելու, նա առաջ է բերել նաև այն մարդկանց, որոնք այդ դէնքն իր գէծ են դարձնելու — արդի բանւորներին, պրոլետարներին»:

Այս ամենը ցոյց է տալիս թէ որ աստիճան սխալ է Մարքսի և Էնդել'սի պատմական տեսութիւնը բնորոշող ընդհանուր գործածական տնտեսական մատերիալի մաքնը: Եթէ այդ անունը պիտի կրի այն տեսութիւնը, որ գոյքային շահն ընդունում է պատմական առաջխաղացման ամենալլիւսաւոր մղիչը, ապա ուստաւը արացիայի շրջանի ֆրանսիական պատմաբաններին ամենայն իրաւամբ կարելի է տնտեսական մատերիալիստներ անւանել: Սակայն այդ «տնտեսական մատերիալիստներին» մատերիալիզմը միանգաման խորթ է եղել, նրանք իդէալիստներ էին մնում, եթէ էկլեկտիկներ չէին դառնում:

Գոյքային յարաբերութեանց և շահերի ժագումը նրանք բնաւ մատերիալիստար չէին մեկնում: Իսկ Մարքսի տեսութիւնն ամրողովին է:

մատերիալիզմով ոչ թէ այն պատճառով, որ այդ տեսութիւնը պատմութեան մէջ չափազանց մեծ դեր է յատկացնում գոյքային շահերին, այլ այն պատճառով, որ այդ շահերը նա կապել է արտադիր ուժերի աճումից բղխած արտադրական յարաբերութեանց զարգացման հետ: Այդ տեսութիւնն առաջին անգամ հասարակական մաքի զարգացմանը մատերիալիստական բացատրութիւն տւեց, միանգամայն բացասելով այդ զարգացման իդէալիստական բացատրութիւնը մարդկային «ոգու» և առ հասարակ մարդկային օբյեկտիւններով: Զարմանալի չէ, որ կիսամարքսիստները, հետակառվ մատերիալիզմի գէծ՝ յամառօրեն պաշտպանում են «տնտեսական մատերիալիզմ» տերմինը:

Նրանք բմբունում են, որ այդ տերմինի ներքոյ կարող են թագնւել կատարելապէս իդէալիստական հայեացըներ<sup>71</sup>:

Նախկին մարքսիստ և սոցիալ-դեմոկրատ պ. Բեռնշտայնը գտնում է, որ Մարքսի և Էնդել'սի պատմական տեսութեան ամենաճշգրիտ անունը կինը Բարտի առաջարկածը՝ «պատմութեան տնտեսական ըմբռնում»: Այն ամենից յետով, ինչ ինչ շատակեց, ասելն աւելորդ է, որ պ. «քննադատի» կարծիքը՝ «քննող» տեսութեան իսկական բնոյթի

<sup>71)</sup> Մի լաւ օրինակ՝ Սէն-Սիմոնի պատմական հայեացըներն իդէալիստական հիմունք ունեն, իսկ նա էլ, ինչպէս մենք տեսանք, Մինիեից, Գիլոհից կամ Օկ. Տիերիից պակաս տնտեսական մատերիալիստ չէր:

կատարեալ անհասկացողութեան վրայ է հիմնւած<sup>72)</sup>: Քանի որ խօսք բացւեց այդ «ըննադատի» մասին, յիշեցնենք ընթերցողին, որ նրա կարծիքով, Մարքսի և Էնդել'սի պատմատեսութիւնն էլ է զարդացման որոշ պրոցեսս անցել, որի հետևանքն այն է եղել, որ տնտեսական «աղդակի» գերը պատմութեան մէջ սահմանափակւել է յօդուտ ոչ տն ու եռակ ան «աղդակների»: Յօդուտ իր այդ կարծիքի պ. Բեռնշտայնը հետեւալ ապացուցներն է առաջ բերում:

1859թ. «Zur Kritik der politischen Oeconomie»-ի առաջաբանում Մարքսը տւեալ նիւթական արտադիր ուժերն ու «մարդկանց» արտադրական յարաբերութիւններն է ընդունում իրեւ պայմանաւորող աղդակներ, մինչդեռ աւելի ուշ, Դիւրինդի հետ վիճաբանելով՝ էնդել'սր, «տակաւին Մարքսի կենդանութեան ժամանակ և նրա հետ համաձայնութեան մէջ լինելով» պատմական մատերիալիզմին այլ «բացարութիւնն» է տալիս: Այն է՝ «այնտեղ ասւած է, որ բոլոր հասարակական փոփոխութեանց և լեզարշմանց վերջնական պատճառները ոչ թէ մարդկանց դիմում պիտի որոնել, այլ արտադրութեան և փոխի-

<sup>72)</sup> Պ. Բեռնշտայնը պնդում է, որ ապատմութեան ժամանակական ըմբռնման նիման վրայ է կառուցած դասակարգին պայքարի ուսմունքը («Սոցիալիզմի հնարաւորութեան պալմանները» Լոնդոն 1900, էջ 17): Ընթերցողը հիմա գիտէ, որ դասակարգային պայքարի ուսմունքը հնարաւոր է նաև պատմութեան ոչ մատերիալիստական ըմբռնումի հիման վրա: Սակայն պ. Բեռնշտայնի ի՞նչ գործն է: Նա արննադատում է, ոչ թէ ուսումնասիրում:

եղանակի փոփոխութեանց մէջ: Սակայն վերջնական պատճառները չեն ժխտում միաժամանակ ներգործող այլ պատճառների—երկրորդական, երրորդական և այլ աստիճանի պատճառների զոյութիւնը: Պարզ է որբան աւելի բազմաթիւ լինի նման պատճառների շարքը, այնքան աւելի պիտի սահմանափակվի վերջնական պատճառների պայմանաւորող ոյժը թէ բատ որպակի, թէ ըստ բանակի: Նրանց ազդեցութեան փաստը—մնում է, սակայն իրերի վերջնական ձեր միայն այդ փաստից չի կախւած»<sup>73)</sup>:

Պ. Բեռնշտայնը կարծում է, թէ «Էնդել'սն իր ամենաուշ շրջանի աշխատութեանց մէջ արտազրական յարաբերութեանց պայմանաւորող ոյժն աւելի է սահմանափակվելու»: Իբրև ապացոյց նաև մատնացոյց է անում 1895թ. հոկտեմբերին «Socialistischer-Akademiker»-ում տպաղբւած էնդել'սի երկու նամակը, որոնցից մէկը 1890-ին է գրւած, միւսը՝ 1894-ին: Այդ նամակների բովանդակութիւնը շատ լաւ բնորոշւում է պ. Բեռնշտայնի արած երկու քաղւածներով:

Առաջինը—ախպէս է հնչում՝ «անթիւ միմիանց հետ խաչող ուժեր, ուժերի պարակելովրամների անհամար շարքերը հաւասար ներգործող գիծ էն տալիս—պատմական անցք, որ ինքնին կարող է նկատել իրեւ ոյժի արդասիք, որ գործում է որպէս ամենա բոլղութիւն առանց գիտակցութեան և կամքի, որովհետեւ այն, ինչ ամեն մէկը զատ-զատ ցանկանում

<sup>73)</sup> Ibid., էջ 9.

է խոշնդոտի է հանդիպում ուրիշների կողմից և ստացում է մի բան, որ ոչ ոք չի ցանկացէլ»: (1890 թ. նամակը):

Երկրորդ քաղաքածում հետևեալն ենք կարդում՝ «Քաղաքական, իրաւական, փիլիսոփական, կրօնական, գրական, գեղարւեսատական և այլ զարգացումը, տնտեսականի վրայ է հիմնւած: Սակայն նրանցից իւրաքանչիւրը ներգործում է մէկը միւսի և անտեսական հիմքի վրայ (1895 թ. նամակը):

Այս կարները քաղելով՝ պ. Բեռնշտայնը նկատում է «ընթերցողը կհամաձայնի, որ սա մի քի այլ կերպ է հնչում, քան Մարքսից սկզբում բերած հաստաժը»<sup>74:</sup> «Սկզբում» նա բերում է „Zur Kritik“-ի հաջակաւոր առաջարանից այն կտորը, որ ասում է թէ նիւթական կեանքի արտադրութեան եղանակը պայմանաւորում է սոցիալական, քաղաքական և մասւոր կենանքը: Դիցուք, մի բոլէ, թէ այդ քաղաքածն իրօք այլ կերպ է «հնչում», քան Էնդեկ'սի նամակներից քաղաքած կտորները, և աեսնենք թէ ինչպէս է «հնչում» «Zur Kritik der politischen Oeconomie»-ից տասնմէկ տարի առաջ լոյս տեսած «Մանիֆեստ»:

Մենք արդէն ընթերցողի ուշը դարձրինք այն բանի վրայ, որ արտադիր ուժերի զարդացումը հասարակական զարգացման ամենախոր պատճառն է ճանաչւում: Այդ առումով «Մանիֆեստ» և «Zur Kritik»-ի առաջարանի հայեացակէար նոյն անման է: Իսկ «ուժերի պարագելոգրամների» և հասարա-

<sup>74)</sup> Ibid., էջ 9.

կական զարգացման զանազան (ազգակների) վոխ-լարաբերութեանց բանն ինչորէս է:

«Մանիֆեստը» ցոյց է տալիս, թէ ինչպէս բուրժուազիալի աջողութիւնը անտեսական բնագաւառում մզում էր նրան դէպի քաղաքական պայքար և քաղաքական նւանումներ, որոնք իրենց հերթին հիմք էին գառնում նրա յետազայ աշողութեանց տնտեսական բնագաւառում... Մի խօսքով՝ քաղաքական (ազգակի) մասին մենք նոյնն ենք կարգում, ինչ որ Էնդեկ'սի 1895 թ. նամակում՝ քաղաքական զարգացումը անտեսականի վրայ է հիմնւած, սակայն միաժամանակ ներգործում է անտեսական հիմքի վրայ:

Դուքս է գալիս՝ այն հայեացքը, որ պ. Բեռնշտայնին թւում է Մարքսի և Էնդեկ'սի պատճառեալ թեան զարգացման բաւական ուշ ժամանակաչ հետեանք—իրօք տակաւին 1848 թւին են արտապատաժ եղել, այսինք այն միջոցին, երբ ըստ պ. Բեռնշտայնի ներգործութեան Մարքսն ու Էնդեկ'սը—եթէ կարելի՞ է այսպէս ասել—պիտի «մաքուր էկոնոմիստ» լինէին:

Սակայն այդ ազգպէս է առ այժմ լոկ քաղաքական (ազգակի) նկատմամբ, իսկ այլ «ազգակների» վերաբերմամբ զուցէ սխալ է:

Տեսնենք: «Մանիֆեստ» ասում է, թէ մասւոր գործունէութիւնը վերանորոգւում է նիւթականի հետ: «Ճին աշխարհի անկման պահուն քրիստոնէութիւնը յաղթեց հին կրօնները: Երբ որ քրիստոնէական զարափարները աեղի էին տալիս XVIII դա-

րի լուսաւորչական գաղափարների առջև, աւատական հասարակութիւնը կեանքի և մահու պայքար էր մզում ընդդէմ այն ատեն յադափախական բուրժուազիալի): Արդէն այս խօսքերը պարունակում են հասարակութեան տնտեսական և մտաւոր գարզացման փոխադարձ ներգործումի խոստովանութիւնը: Սակայն այդ խոստովանութիւնն աստեղ մպտեալ է, ուստի կարելի է ժխտել: Սական «Մանիթեստի» վերջին դլուխն այդ մասին այլևս ոչ մի կասկած չի թողնում: Այդ գլխում, պարզելով կոմմունիստների վերաբերմունքը դէպի այլ բանւորական կուսակցութիւնները, հեղինակներն ասում են, թէ կոմմունիստները ծգտում են բանւորների մաքում բուրժուազիայի և պրոլետարիատի շահերի թշնամական հակազրութեան գիտակցութիւնն ըստ կարելոյն աւելի պարզ մշակել: Ինչու են կոմմունիստներն այդ բանն անում: Պարզ բան է, այն պատճառով, որ հանաչում են դադափարների նշանակութիւնը: Ասենք հեղինակներն իրենք էլ են շատապում նրանց նպաստկը պարզել: Կոմմունիստական կուսակցութիւնն, ասում են նրանք, առւգում է, որ բուրժուազիայի տիրապետութեան հետ բերած հասարակական և քաղաքական պայմանները գերման բանւորների համար զէնք դառնան, նոյն բուրժուազիայի դէմ, որ պայքար սկսւի նրա դէմ իսկոյն և եթ, հէնց որ Գերմանիալի ետագիմական դասակարգերը տապալեն): Այստեղ մտաւոր «ազգակի» նկատմամբ նոյն հայեացքն է դրսեորւում, ինչ որ քաղաքական (ազգակի) վերաբերմամբ:

Մտաւոր զարդացումը տեղի է ունենում անտեսականի հիման վրայ, սակայն յետոյ, իր հերթին, (մարդկանց հասարակա-քաղաքական գործունէութեան միջոցով) ազգում է տնտեսականի վրայ: Դուրս է դալիս, որ Մարքսն ու Էնդել'սր զադափարական «ազգակի» հանաչելիս են եղել ոչ միայն Դիւրինգի հետ բանակուելու պահուն, այլ զեռ ևս 1848 թ-ին և ոչ միայն 1848 թւականին, այլ «Deutsch-Französische Jahrbücher»ի հրատարակութեան ժամանակածիցցին: Առնւազն Մարքսի նկատմամբ միանգամայն կասկածից դուրս է, ինչպէս ցոյց կտան հետեւալ նշանաւոր տողերը՝ Հեգելի օրէնքի փիլիսոփայութեան մասին նրա զրած յօդւածից:

— «Ոչ մի դասակարգ այդ գերը (ազգասարար) խաղալ չի կարող առանց խանդավառութեան և առանց խանդավառելու մասսային: Այդ շրջանի ընթացքում նա եղբայրանում է ամբողջ հասարակութեան հետ, նրան ընդհանրական ներկայացուցիչ են համարում և այդ շրջանի ողջ ընթացքում այդ դասակարգի իրաւունքներն ու պահանջները — ողջ հասարակութեան իրաւունքներն ու պահանջներն են հանդիսանում, իսկ այդ դասակարգը — ինքը՝ հասարակութեան գլուխն ու սիրտը»:

Ինչպէս տեսնում էք զիտակցութեան հասարակա-վերանորոգչական զերն առ հասարակ, անզամ մտսնաւորապէս խանդավառութեան դերն ալստեղ ընդունում է ամենակտրուկ կերպով: Հոգեբանական (ազգակի) ներգործում է հասարակական (հետեւա-

բար նաև տնտեսական) յարարերութեանց վրայ: Ապա  
Մարքսը բացատրում է թէ ինչպէս է ազատարար  
դասակարգից նկատմամբ ամրող հասարակութեան  
նիշւած վերաբերմունքն առաջ գալիս դասակարգային  
հողի վրայ: «Որպէս զի մի դաս որ exellence (գե-  
րագանցօրէն Պ. Մ.) ազատարար դաս հանդիսանայ,  
պէտք է որ մի ուրիշը հանուրի գիտակցութեան մէջ  
նկատւած լինի իրք ճնշող դաս: Ֆրանսիական  
աղնւականութեան և հոգեորականութեան հանրային  
բացասական նշանակութիւնը պայմանաւորել է  
նրանց կողքին և նրանց դէմ կանգնած բուրժուա-  
դասակարգի դրական հանրային նշանակութիւնը<sup>75)</sup>:

Եղբափակենք՝ գիտական սոցիալիզմի հիմնադիր-  
ներն իրենց գործունէութեան սկզբից և եթ պատ-  
մական զարգացման զանազան «ազգակների» փոխ-  
յարաբերութեան մասին նոյն հայեացըն ևն արտա-  
յայտել, որ էնդեկամի իննոնական թւականներին դրած  
նոմակներից պ, Բեռնշտայնի բաղած կտորներում ենք  
հանդիպում: Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Եթէ Մարքսն ու էնդեկան իրենց քաղաքական  
գործունէութեան սկզբում քաղաքական հողեոր «ազ-  
գակներին» իրօք ոչ մի նշանակութիւն տւած լինէ-  
ին և հասարակութեան տնտեսական զարգացման վրայ  
նրանց ներդորմութիւնը ժիտելիս լինէին, նրանց գործ-  
նական ծրագիրն էլ բոլորովին այլ կլինէր: Նրանք  
չէին ասի թէ բանւոր դասակարգն առանց բաղա-  
քական իշխանութիւնն իր ձեռքն առնելու բուրժու-

<sup>75)</sup> Deutsch-Französische Jahrbücher, S. 82.

աղիալի տնտեսական լծից աղատադրւել չի կարող:  
Նմանապէս նրանք չէին խօսի բանւորների ինքնազի-  
տակցութեան զարգացման մասին: Ի՞նչ կարիք կաջ  
զարգացնելու, բանի որ հասարակական շարժման մէջ  
նա ոչ մի դեր չի խաղում և պատմութեան մէջ  
ամեն ինչ գիտակցութիւնից անկախ է կատարւում,  
յոկ տնտեսական անհրաժեշտութեան ուժի դրվմամբ:  
Բայց ո՞վ չգիտի, որ բանւորների ինքնանաչութեան  
զարգացումը Մարքսի և էնդեկամի հասարակական  
գործունէութեան սկզբից և եթ նրանց մերժադրոյն  
գործնական նոպատակն է եղել: Զեր խանդարի, որ  
պ. Բեռնշտայնն, իրք նախկին «մարքսիստ», գիտե-  
նար, որ Փրանսիական և անդլիական բանւորների  
շշանում քառասնական թւականների սկզբում տեղի  
ունեցած եռանդուն մտաւոր աշխատանքը Մարքսի  
ամենազլիսաւոր ապացոյցներից մէկն էր այն բոլոր  
զրոգների դէմ, որ Բրունո Բաուերի պէս չէին նա-  
նաչում «մասսան» և իրենց ամբողջ լոյսը «քննադա-  
տորէն խորհող անհամանէրի» վրայ էին դնում<sup>76)</sup>:

Փորձենք այլ հիպոթէզ («նթազբութիւն») կա-  
ռուցանել: Իրենց գործունէութեան սկզբում Մարքսն  
ու էնդեկամի «ազգակների» վրայ նոյն աչքով էին  
նայում, ինչ որ էնդեկամի իննոնական թւականներին:  
Իսկ այդ գործունէութեան կիսերքին, մօտաւորապէս  
„Zur Kritik“-ը լոյս ընծայելու պահուն, Մարքսը—  
մենակ կամ էնդեկամի հետ—այս կամ այն պատճա-  
ռով փոխեց իր հայեացըր և այն մտլրայեղութեան

<sup>76)</sup> Die heilige Familie, S. 125.

մէջ ընկաւ, որ պ. Բեռնշտայնը վերոյիշեալ դրբի առաջարանում սպասելի է համարում:

Սակայն այդ հիպոթէզն էլ ըննադատութեան չի դիմանում: Զի դիմանում այն պատճառով, որ վերոյիշեալ առաջարանում (աղդակների) մասին արտայալութէ է նոյն հայեացըր, որ պ. Բեռնշտայնի կարծիքով Մարքսի պատմաւեսութեան դարդացման արգիւնքն է: Ընթերցողը հեշտութեամբ կհամաձայնի մեզ, եթէ ըմբռնի այն քաղւածի միարը, որ մեր խորիմաստ (ըննադատն) առաջ է բերում: «Նիւթեական կեանքի արտադրութեան եղանակն առարակ պարմանաւորում է սոցիալական, քաղաքական և մտաւոր կեանքի պրոցեսսը»: Այդ կնշանակի, որ սոցիալական, քաղաքական և մտաւոր (աղդակները) տնտեսական հողից են դուրս գալիս:

Ապա՝ «հասարակութեան նիւթական արտադիր ուժերն իրենց զարգացման որոշ աստիճանի վրայ հակասութեան մէջ են մտնում դոյութիւն ունեցող արտադրական յարաբերութեանց կամ սեփականութեան յարաբերութեանց հետ, որոնց մէջ նրանք մինչ այդ զարգանում էին: Այդ յարաբերութիւնները դադարում են արտադիր ուժերի զարգացմանը նպաստող ծեւեր լինելուց և նրանց զարգացման առջև խոչնդուա են հանդիսանում»:

Դոյքալին յարաբերութիւններն իրաւունքի բնադաւառին են վերաբերում: Տւեալ ժամանակում, տւեալ դոյքալին յարաբերութիւններն արտադիր ուժերի զարգացմանը նպաստում են: Դա կնշա-

նակի՝ իրաւական ծեւերը, որ տւեալ տնտեսական հիմքից են դուրս եկել, իրենց հերթին ներգործում են տնտեսականի զարգացմանը: Ապա—ի միջի ալլոց շնորհիւ այդ ներգործումի—այնպիսի ժամանակ է դալիս, երբ տւեալ իրաւական ծեւերն սկսում են խանգարել արտադիր ուժերի զարգացման: Դա դարձեալ կնշանակի, որ այդ ծեւերը ներգործում են հասարակա-տնտեսական յարաբերութեանց վրայ, թէ արգէն հակառակ իմաստով: Արտադիր ուժերի և գոյքային յարաբերութեանց միջև ժաղած հակասութեան շնորհիւ սոցիալական իեղաշրջման շրջանն է վրայ հասնում: Այդ յեղաշրջումն ինչ արգիւնքի է հասնում: Նրա նպատակն ինչ է: Արտադիր ուժերի և գոյքային յարաբերութեանց, իրաւական նոր հիմնարկութեանց հաստատումը և հների վերացումը: Այդ վերացումն ու հաստատումն ինչը են պէտք:

Արտադիր ուժերի յետագայ զարգացման համար: Դարձեալ և կրկին դա կնշանակի, որ տւեալ տնտեսական հիմքից դուրս եկած իրաւական ծեւերն, իրենց հերթին, աղդում են այդ հիմքի վրայ: Միթէ սա միենոյն բանը չի, որ առել է «Մանիֆեստում», կրկնել Մարքսի զբեթէ բոլոր այլ զրւածներում և մատնանշւել պ. Բեռնշտայնի Էնդել'սի նամակներից արած քաղւածներում:

Իսկ հոգեբանական (աղդակը): Գուցէ առաջարանում այդ մասին նոյնը չի ասւած, ինչ որ Մարքսի և Էնդել'սի այլ զրւածներում: Առաջարանում այդ մասին ըիչ բան է ասւած, սակայն ինչ որ այն-

տեղ առւած է, ամենեին չի հակասում ինգել՝ սի նամակներում ասածներին։ Արտադիր ուժերի զարգացումը մարդկանց որոշ արտագրական յարաբերութեանց մէջ է զնում և որոշ իրաւական ձևեր առաջ բերում։ Տւեալ իրաւական ձևերին—համապատասխանում էն մարդկանց որոշ իրաւական հասկացողութիւնները։ Արտադիր ուժերի յետազայ զարգացման ընթացքում, նէնց որ հին իրաւական ձևերը դադարում էն նրա վիճակին համապատասխանելուց—այն մարդկանց զիսում, որոնց շահերը տուժում էն այդ անհամապատասխանութիւնից,—հին իրաւական հիմնարկութեան պիտանիութեան և արդարութեան նկատմամբ կասկած է ծագում։ Նրանց մէջ իրաւունքի և արդարութեան մասին նոր հասկացողութիւն է առաջ դալիս, որ հասարակութեան արտադիր ուժերի զարգացման հասած նոր աստիճանին է համապատասխանում։ Իրաւունքի և արդարութեան այդ նոր ըմբռնումների ուղղութեամբ է ընթանում հին կարդի գէմ մարասող մարտիկների ըննադատական գործունէութիւնը, որ ծղտում է արտադիր ուժերի զարգացմանը նոր զարկ տևող նոր իրաւական հիմնարկութիւններ ստեղծել։ Այս բանն առւած է առաջարանում։ Անաշառ ընթերցողին հարց ենք տալիս՝ զեթ մարզաչափ հակասո՞ւմ է սա ինգել՝ սի նամակներում արտագայում։ Մարքսն այդ առաջարանում է, ինչ որ Մարքսն է ասում իր առաջարացական վերացական լեզով է զրւած և միանդամայն այլ առիթով։ Մարքսն այդ առաջարանում կամեցել

է շեշտած լինել՝ հասարակական յարաբերութիւնները ոռչ իրենց սեփական բնոլթով, ոչ էլ այսպէս կոչւած մարդկացին ոդու լինդանուր զարգացմամբ են բացատրուում։ Այդ նպատակով նա յիշեալ յարաբերութեանց զարգացման անտեսական հիմքը նէ առաջ քաշել։ Իսկ ինգել՝ սի նամակներով դիմել է մի մարդու, որ—մեր հայրենակիցներից շատերի նման—կարծելիս է եղել, թէ անտեսական մատերիալիզմի տեսութեան մէջ քաղաքական, իրաւական և հոգեոր «աղդակները» անդ չունեն, ուսափ նիշելով այդ «աղդակների» տնտեսական հիմքն, առանձնապէս այն հանդամանքն է շեշտել, որ այդ «աղդակները», անտեսական հողից գուրս եկած լինելով իրենց հերթին ներգործում էն նրա վրայ։ Այսքան բան։ Եթէ պ. թեռնշտացնը ընդունակ լիներ իր ըննած տեսութեան նկատմամբ բառերից մի քիչ զէնն անցնելու և քովանդակութեան մէջ թափանցելու, հեշտութեամբ կհասկանար, որ «Zur Kritik»-ի մէջ շարադրւած պատմական հայեացըները «երկրորդ, երրորդ և այն աստիճանի պատճառներին» աղդեցութեան նիշտ նոյնբան տեղ էն յատկացնում, որքան և այն ուսմունքը, որ «անտի-Դիւրինգն» է պարունակում։ Իսկ ինգելսի 1890 թ. նամակում պարփակւած զարդութիւնն այն մասին, թէ պատմական դէպքերը կարող են նկատել իբրև արդիւնք անդիսակցաբար գործող ուժերի նոյնն է, ինչ որ Մարքսն է ասում իր առաջարացական մարդկանց զիտակցութիւնից և կամքից անկախ գործող հասարակական զարգացման պատ-

հառների մասին: Կատարեալ նոյնութիւն: Իսկ պ-  
թեռնշտայնը գլխին զօռ տալով էնդել'սի խօսքերի  
մէջ առաջաբանի միաբը փոփոխող և լրացնող բա-  
ներ է գտել: Օ, քննադատութիւն:

Պ. Բեռնշտայնը ոչ միայն Մարքսի և էնդել'սի  
պատմական տեսութիւնն է ըննադատում, այլև նրանց  
ուսմունքը դասակարգային պայքարի մասին: Նրա  
ասելով դասակարգային պայքարը ներկայումս պրո-  
լետարիատի առջե այս այն դործնական խնդիրները  
չի դում, ինչ որ «Մանիֆեստի» հեղինակներն են  
ցոյց տեղ: Քաղաքակիրթ աշխարհի ամենազարգացած  
երկիրներում պրոլետարիատի պայքարը բուրժուազի-  
ապի դէմ չի կարող տանել դէպի պրոլետարիատի  
դիկտատուրան, ուստի խօսակցութիւնն այդ մասին  
—դասարկաբանութիւն է: Սակայն թող ինքը պ-  
թեռնշտայնը խօսի:

«Ի՞նչ իմաստ ունի պրոլետարիատի դիկտատու-  
րայի անպարունակ Փրազի կրկնութիւնն այն ատեն,  
երբ սոցիալ-դեմոկրատիայի ներկայուցիչները դորձ-  
նականօրէն դիկտատուրային հակասող պարլամենտա-  
կան պայքարի, համեմատական ներկայացուցչութեան  
և ժողովրդական օրէնսդրութեան հոգի վրայ ևն  
կանդնած ամեն տեսակ հիմնարկութեանց մէջ: Դիկ-  
տատուրան ներկայումս անցած-զնացած գաղափար է  
և նրան կարելի կլինի համաձայնել իրականութեան  
հետ կամ զրկելով այդ բառն իր իսկական նշանակու-

թիւնից, կամ նրան որ և է մեղմացրած իմաստ հա-  
ղորդելով<sup>77)</sup>:

80.-ական թւականների երկրորդ կիսին մեզա-  
նում «սոցիալիստի» մի նոր տեսակն եւեւան եկաւ  
որի գլխաւոր, կարելի է ասել, տանչալից հոգսն այն  
էր, որ լիբերալներին (ազատամիտներին) չվախեցնի:  
Ահարեկւած լիբերալի ուրուն մինչ այն աստիճան  
երկիւղ էր ներշնչում այդ տեսակ սոցիալիստներին,  
որ անսակելի խառնաշփոթութիւն էր առաջ բերում  
նրանց տեսական դատողութեանց մէջ: Պ. Բեռնշտայնը  
շատ է յիշեցնում այդ տեսակ «սոցիալիստներին»:  
Նրա գլխաւոր հոգսն այն է, որ չինի՛ թէ գեմոկրա-  
տական բուրժուազիան վախենայ: Եթէ նա մատե-  
րիալիզմից հրաժարում է և յանձնարարում վերա-  
գարծ դէպի կանոր—դա միմիայն նրա համար է, որ  
կանտականութիւնը կրօնական նախապաշարմունքին  
տեղ է թողնում, իսկ պ. Բեռնշտայնը չի ուզում  
արդի բուրժուազի կրօնական նախապաշարմունքին  
դիված լինի: Եթէ պ. Բեռնշտայնը մատերիալիզմի  
անհրաժեշտութեան ուսմունքի դէմ ըմբռուտանում է,  
դա լոկ նրա համար է, որ հասարակական երկոյթ-  
ների բնագաւառում այդ ուսմունքի կիրարկումն այլ-  
ևս բուրժուազիայի բարեացակամութեան վրայ պրո-  
լետարիատին յոյսի նշով անդամ չի թողնում և հե-  
տեասպէս այդ երկու դասակարգերի փոխադարձ մեր-  
ձեցումը միանդամայն անհնար է դառնում: Վերջա-  
պէս, եթէ պ. Բեռնշտայնը «Փրազը» պրոլետարիատի

<sup>77)</sup> «Սոցիալիզմի հնարաւորութեան պայմանները», էջ 158:

զիկաստուրայի մասին չի սիրում—դա միմիայն նրանից է, որ այդ ֆրազն անգամ «ամենազեմուկասական» բուրժուազիայի ականչն անախորժօրէն ծակում է: Աական այն մարդկանց աչքում, որոնք երկիւղ չեն կրում ահաբեկւած բուրժուանների ուրուներից, պրոլետարիատի զիկաստուրայի խնդիրը միանգումայն այլ լուսաւորութեան մէջ է հանդէս գալիս, քան պ. բննապատճ է տեսնում:

Եւրաքանչիւր տւեալ գասակարդի զիկաստուրան,—ինչպէս դեռ ևս Մինիէին գեղեցիկ կերպով յայտնի էր,—կնշանակի այդ զասակարդի աիրապետութիւնը, որ նրան իր շահերի պաշտպանութեան և այդ շահերը խախտել ձգարդ բոլոր հասարակական շարժումների ճնշման համար արամազքելի է գարձնում հասարակութեան կազմակերպւած ոյժը<sup>78)</sup>: Այդ իմաստով կարելի է ասել, օրինակ, որ առաջին Սահմանադիր ժողովի միջոցին ֆրանսիական բուրժուազիան դիկաստուրա ձեռք բերեց, որ և աննշան ընդհատումներով օգտադործում է մինչև օրս էլ, երբ անգամ, ժոռէսի ասած, սոցիալիստական մինխստը Միլիէրանը չի կարողանում արգելել այն բանորների գնդակահարումը, որոնք կապիտալիստներին յանդգնել են անհնապանդութիւն ցոյց տալ: Այդ պայմաններում ֆրանսիական պրոլետարիատի նպաստկը

78) Խնդրեմ ընթերցողը վերիշի Մինիէի վերև բերւած գրութիւնը՝ յայտնի է, որ տիրապետութեան հասած ոյժը միշտ տիրանում է հիմնարկութեանց: «Երբ որ տւեալ դասակարգը տիրանում է հիմնարկութեանց—նրա դիկտատուրայի ժամանակաշրջանն է հաստատում»:

պիտի լինի նախ և առաջ բուրժուազիայի զիկաստուրան «հնարաւոր գարձնող» պայմանների վերացնելլ: Այդ պայմանների կարևորագոյններից մէկն է արտադրողների գասակարգավիճ գիտակցութեան անգարգացածութիւնը, որոնց խոչոր մասը տակաւին շահագործողների ազգեցութեան ներքոյ է գտնւում: Ուստի կուսակցութեան ամենազիմաւոր գործնական նպաստակներից մէկն է կրթել անվիրթներին, հրել ետամնացներին, զարգացնել անզարդացածներին: Մոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչների պարլամենտար և ամեն այլ տեսակի լեզար (օրինական) գործունեութիւնն աջակցում է այդ կարևոր նպատակի իրագործմանն ուստի և արժանի է ամենայն յարգանքի և հաւանութեան: Սակայն այդ գործունեութեան լաւութիւնն այն է, որ բուրժուազիայի դիկտատուրայի «հնարաւորութեան հոգեսոր պայմանները» վանում և տեղը պրոլետարիատի գալիք դիկտատուրայի «հնարաւորութեան հոգեսոր պայմաններն» է սաեղծում: Այդ գործունեութիւնը պրոլետարիատի դիկտատուրան ոչ թէ բացասում, այլ նախապարասատում է: Միմիայն նա կարող է «Փրազա» կոչել բանւորներին արւած ցուցմունքը, նրանց գասակարգի դիկտատուրայի անհրաժեշտութեան մասին, ով վերջնականապէս կորցրել է «վերջնական նպատակի» (Endziel) մտապատկերը և սիմֆիան դէպի... բուրժուական սոցիալիզմը տանող «շարժման» մասին է մտածում (Bewegung) ...»

Սակայն պ. թեռնշտայնի ասելով՝ դասակարգալին դիկտատուրան սասրադաս կուլ'սուրացին է յատուկ և այն միտքը, թէ կապիտալիտական հասարակութիւնը պիտի սոցիալիտականի վերածւի զարգացման այնպիսի շրջանի ծեւեռով, երբ պրոպագանդի և օրէնտրութեան արդի մեթոդները (միջոցները) տակաւին անձանօթ կամ ամենահամար ծեռվ են ձանօթ եղել և այդ բանի համար կարեռը օրդանները պակասել են— պիտի համարել եարնթաց բայց, քաղաքական առաւիզմով<sup>79</sup>:

Տւեալ դասակարգի դիկտատուրան— ինչպէս առաջինք,— այդ դասակարգի աիրապետութիւնն է, որ նրան իր շահերի սուշտողանութեան և այդ շահերին ուղղակի կամ անուղղակի վասնդ սպառնացող հասարակական բոլոր շարժումները ճնշելու համար տրամադրելի է դարձնում հասարակութեան կազմակերպւած ոյժը: Հարց է ծագում՝ կարելի՞ է արդեօք, արդի հասարակութեան այս կամ այն դասակարգի նման դիկտատուրա ծեռք բերելու ձգտումը քաղաքական առաւիզմ համարել: Ոչ, չի կարելի: Այդ հասարակութեան մէջ գոյութիւն ունեն դասակարգեր: Այնտեղ, որտեղ դասակարգեր կան, անխուսափելորէն դասակարգային պայքար էլ պիտի լինի: Այնտեղ, որտեղ դասակարգային պայքար կայ, պայքարող դասակարգերէց իւրաքանչիւրէի իր հակառակորդին կատարելապէս լաղթահարելու և իր տիրապետութիւնը հաստատելու ժրդ-

<sup>79)</sup> Նոյն տեղում էջ 159:

տումն անխուսափելի է և բնական: Բուրժուազիան և իր գաղափարախօսները յանուն «բարոյականութեան» և «արլարութեան» կարող են նման ձգտումը դասապարտել ամեն անդամ, երբ պրոլետարիատն այդ ձգտումը նշարելի ուժով երևան է բերում: Մենք արդէն դիտենք, որ ասկաւին 1848 թւականի յունարին Գիզօն դասակարգացին պայքարը ֆրանսիակի ամօթն ու ցաւն էր անւանում: Բայց մենք նոյնպէս զիտենք, որ դասակարգալին պայքարի և բանւոր դասակարգի նւաճողական ձգտման դասապարտումը բուրժուազիային իր ինքնապահպանութեան բնագին է յուշել և որ դասակարգացին դիկտատուրան, երբ նա իր բազմագարեան դասն էր վարում աղնւապետութեան դէմ և խորապէս համոզւած էր որ իր նաւը ոչ մի մըրիկ չի խորապէի— բոլորովին այլ լուսաւորութեամբ էր ներկայանում նրան: Բանւոր դասակարգի աչքը չպիտի կալի այն կարծեցեալ բարձրութիւնը, գէպի որոնց անկման շրջանի բուրժուաները կոչ են անում<sup>80</sup>:

<sup>80)</sup> Եւ զա առաւել ևս այդպէս պիտի լինի, քանի որ պրոլետարիատի դիկտատուրան պիտի վերջ դնի դասակարգերի գոյութեան և հետեւապէս նրանց փոխադարձ պայքարին, դրանից ծագած և ներկայումս անխուսափելի բոլոր տանչանքներին: Սակայն բուրժուազիան չի ուզում և իր հասարակական դիրքի շնորհի չի էլ կարող այդ բանն ըմբռնել: Դա ինքը ձգտել է դիկտատուրայի հասնել, և ազնւապետութեան դէմ պայքարելու պահուն իր նպատակին հասնելու համար դիկտատուրան անհրաժեշտ և միանգամայն մոլլատերէի միջոց է համարել, ասկայն նա նոյն միջոցն սկսեց դատապարտել և աւելորդ համարել այն օրից վեր, երբ խօսք բացւեց բանւորների դիկտատուրայի մասին: Դա յիշեցնում է չարի և բարւոյ տարբերութիւնը բացատրող վայրե-

Մինիէն ասում էր, թէ միմիայն ուժով կարելի է իրաւունքները հանաչել տալ և մինչ այժմ ուժից բացի ուրիշ գերադոյն տէր չի եղել: Մէր օրերում, պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի պահուն դա աւելի քան ծշմարիտ է: Եթէ մենք բանորներին հաւատացնելու լինեինք թէ բուրժուական հասարակութեան մէջ ոյժն այլևս այն նշանակութիւնը չունի, ինչ որ հին «կարգի» ժամանակ է ունեցել, մենք նրանց ակներև ու աղաղակող սուս ասած լինեինք, որ ինչպէս ամեն մի սուս—միմիայն «երկունքի» տեսողութիւնն ու ցաւը կաւելացնէր:

Ճիշտ է ոյժն ու բոնութիւնը միևնոն բաները չեն: Միջադաշին քաղաքական յարաբերութեանց մէջ իւրաքանչիւր պետութեան նշանակութիւնը որոշում է նրա ուժով, սակայն դրանից չի կարելի հետեւցել, թէ ամեն անդամ ուժեղի իրաւունքը նահաւում է բոնի գարծողութեամբ: Նոյնն է նաև միջլասակարգային յարաբերութեանց մէջ: Իւրաքանչիւր տւեալ դասակարգի նշանակութիւնը նրա ուժով է որոշում, սակայն այդ ոյժը ճանաչել տալու համար բռնութիւնը միշտ էլ կարենոր չի լինում: Բռնութեան գերը երբեմն լայն է լինում, երբեմն նեղ, նայած թէ տւեալ երկիրն ինչ քաղաքական կազմ ունի: Պ. Բնոնշաւանը կարծում է, թէ արդի նիին՝ «քարի է—երը ես եմ մէկն ու մէկից մի քան խլում, չար է—երը որ ինձնից են մի քան խլում»: Եւ պէտք է մեծ քարի կամք ունենալ, պ. Բնոնշաւանի պէս, պրոլետարիատի դիկտատորակի մտքից սարսափող բուրժուազիայի ապացույցները համարելու համար:

գեմոկրատական երկիրներում բանուոր գասակարգն իր նպատակին համելու համար բռնութեան դիմելու կարիք չունի: Դա չափազանց լաւատես հայեացը է, որ մեր «քննադատախն» ներշնչել է նրա անընդհատ հողարձ լինի թէ բուրժուական գեմոկրատներն ահարեւկւեն: Արդի ֆրանսիան գեմոկրատական սահմանադրութեանն ունի և այնու հանդերձ ոչ ոք, որ այդ երկիրի ներքին կետնքին ժամօթ է, չի կարող ապահովել թէ պրոլետարիատն ստիպւած չի լինի բացարձակ ուժով գիմադրել բուրժուազիայի բռնութեան: Աւելին կատենք: Ֆրանսիայի սահմանադրութեանն ամեն մի ժամօթ մարդ կտափ, որ լնտրական իրաւունքի արամարտնութիւնն ինքնին այդ երկրում կարող է պրոլետարիատին ապստամբեցնել<sup>81</sup>: Կամ թէ հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներն առնենք: Դա էլ գեմոկրատական երկիր է: Սակայն այդ գեմոկրատական երկրում նեղերի աղատագրումը հնարաւոր եղաւ միմիայն քաղաքացիական կուի զնով ծեռք բերել և չի կարելի երաշխաւորել, որ ամերիկական պրոլետարիատը հարկադրւած չի լինի բռնութեամբ հարթել գէպի տնտեսական աղատագրումը տանող ուղին:

Պ. Բնոնշաւանի կարծիքով սոցիալ-գեմոկրատիայի գործնական անելիքն սպառւում է այնպիսի հանգամանքներ ու պարագաներ ստեղծելով, որոնք հնարաւոր և տնհրաժեշտ գարծներն առանց չղագար

<sup>81)</sup> Համեմատիր՝ J. Jaures, Le Socialisme français „Cosmopolis“-ում, Janvier 1898, pp. 119—121.

յնցումների արդի հասարակարդի բարձրադոյնին անցնելը<sup>82)</sup>: Նրա այդ խօսքերը մասամբ ճշմարիտ են: Սոցիալ գենոկրատիան իրօք շահագրգուած է, որ բարձրագոյն հասարակարդի անցումն առանց յնցումների կատարւի: Սակայն միթէ զա կնշանակի թէ նա պիտի պրոլետարիատի դիկտատուրակից հրաժարւի: Բնա՛ւ: Եւրոպա-Ամերիկա-Եապոնական դաշնակից դօքքերը Պեկին ուղևորւելով վերին աստիճանի շահագրգուած էին, որ չինական մայրաքաղաքի դրաւումն առանց արիւնեղութեան կատարւի, այնու հանգերծ նրանք և ոչ մի վայրկեան չէին հրաժարւում քաղաքը զրաւելու մտքից: Ոչ մի նպատակ չի կարող փոխւել նրանից, որ մարդիկ ծգտեն հասնել նրան նւազադոյն շանքերով: Սակայն երբ որ մարդս որոշում է տւեալ նպատակին, ինչ էլ լինի, հասնի, միջոցների լնարութիւնն այլևս նրանից չի կախւած լինում, այլ հանդամանքներից: Հէնց այն պատճառով, որ սոցիալ-գենոկրատիան չի կարող նախաւենել այն բոլոր հանդամանքները, որոնց մէջ բանւոր դասակարդն ստիպւած կինի իր տիրապետութիւնը<sup>83)</sup> նւանելու, նա սկզբունքօրէն չի կարող հրաժարւել գործողութեան բռնի միջոցներից: Նա պիտի հին, փորձւած կանոնը մտքումը պահի խաղաղութիւն ես կամենում — պատերազմի պարասպութիւն տես:

82) Նոյն տեղ՝ էջ 185:

83) Մենք արդէն վերն ասացինք, թէ այդ տիրապետութիւնը պրոլետարիատի ինչին է պէտք:

Գույշէ մեղ ասեն թէ էնգել'սն իր կեանքի վերշերում բոլոր երկիրների սոցիալիստներին շարունակ ինքն էր խորհուրդ տալիս, որ բռնի գործողութիւններից խուսափեն և օրինական միջոցներով մղւող խաղաղ պայքարի հողի վրայ կանդնած մնան<sup>84)</sup>: Ահա թէ գրան մենք ինչ կամենք:

Էնգել'սը երեք նկատառումների հիման վրայ է իր այդ խորհուրդը տւել՝ 1) մէկ որ սոցիալիստական լեզավոխութիւնը ենթավրում է բանւոր մասսայի զիտակցութեան բարձր զարգացումը, մի բան, որ ժամանակ է սպահանչում,<sup>85)</sup> 2) ապա՝ որ գերման պահպանողականներն ամեն կերպ աշխատում են զերման սոցիալ-գենոկրատիան հրել գէղի ապստամբութիւն այն յուսով, որ կջախջախեն և զրանով վերջ կդնեն նրա անընդհատ աշողութեանց,<sup>86)</sup> 3) վերջապէս, որ զօրքի արդի զինման եղանակի շնորհիւ ամեն մի փողոցային ապստամբութիւն անկուսալի բան է:<sup>87)</sup>

Այդ նկատառումներից առաջին երկուսը ոչ մի առղջմանը և մեկնարանութեան կարիք չունեն: Նրանք այնքան, պարզ են տրտալայտւած և այնքան

84) Տես՝ Ֆրանսիաի 1848—50 մթ. դասակարգալին պայքարի մասին Մարքսի գրքի նրա առաջարանը (նիշտած է՝ 1895 մ., մարտ):

85) „Die Zeit der Ueberrumpelungen, der von Kleinen bewussten Minoritäten an der Spitze bewusstloser Massen durchgeführten Revolutionen ist vorbei. Wo es sich um eine vollständige Umgestaltung der gesellschaftlichen Organisation handelt, da müssen die Massen selbst dabei sein, selbst schon begriffen haben, worum sich handelt, für was sie eintreten sollen... Damit aber die Massen verstehen, was zu thun ist, dazu bedarf es langer, ausdauernder Arbeit“ etc. Die Klassenkämpfe in Frankreich. Vorwort, s. 16.

86) Ibid., S. 17.

87) Ibid., SS. 14—15.

ակներև արդարացի են, որ նրանց գէմ ոչ Մարքսի և Էնդել'սի ուսմունքն իսկապէս քննազատելու ունակ մարդիկ կառարկեն, ոչ էլ անգամ նրանք, որ պիտանի են լոկ քննադատութեան նիշի ներքոյ փալելու համար։ Սական այդ երկու նկատառումները ոչ թէ առհասարակ բռնի գործողութիւններն են դատապարտում, այլ վաղաժամ բռնի գործողութիւններն, ուստի և ոչ մի առնչութիւն չունեն զանգ ուստի վարդադան կողմակիցների ասպարոցների հետ։

Գալով երրորդ նկատառումին, Եթէ ուշի ուշով վերլուծելու լինենք նրա իմաստն, այն չի գուրս դայ, ինչ որ ներկայանում է առաջին հայեացքից։

Եթէ մենք Էնդել'սի հուչակաւոր խօսքերը «Կոմմունիստական Կուսակցութեան Մանիֆեստը» Եղրափակող առղերի հետ համադրելու լինենք, կտեսնենք, որ Էնդել'սն իր կեանքի վերջերին պրոլետարիատի ազատադրական պալքարում սպասելիք բացարձակ ապատամբութեանց գերի մասին իր հայեացքը նկատելի փոխել է։

Մինչդեռ «Մանիֆեստ» լոյս ընծայելու պահուն նա և Մարքսը բացարձակ ապատամբութիւնը բանւոր դասակարգի լաղթանակի անխուսափելի պայմանն էին համարում, իր կեանքի վերջերում Էնդել'սն ընդունեց, որ որոշ պայմաններում օրինական ճանապարհն էլ է կարող դէպի յաղթանակ տանել, իսկ ապատամբութեան վրայ սկսեց նայել իրու գործողութեան այնպիսի եղանակի, որ ռազմական գործի արդի տեխնիկական պայմաններում սոցիալիստներին ոչ թէ

յաղթանակ, այլ չարաչար պարտութիւն է խոստանում և այսուհետեւ շարունակ պիտի պարտութիւն խոստանայ, մինչև որ գորքը սոցիալիստական ոգով չտողորւի։

Էնդել'սի այս նոր հայեացքը, հասկանալի բան է, արժանի է կատարեալ ուշադրութեան և յարգանքի, սակայն նա բնաւ չի հակասում բանւոր դասակարգի յեղափոխական պայքարի ընթացքում հնարաւոր բռնի գործողութեանց նշանակութեան մասին վերը մեր ասածներին։ Նա միայն պարզում է այն պայմանները, որ անհրաժեշտ են նման գործողութեանց աջողութեան համար։

Պիտի աւելացնենք, որ այլ բան է տւեալ դասակարգի գիտաստորան, այլ բան այդ դասակարգի ձեռք առած բռնի գործողութիւնները զիկտատուրայի ծրագրելու միջոցին։ Ուստաւ բացի ժամանակ Գիզօն և նրա համախոհները չափազանց եռանդով և կատարելապէս զիտակցօրէն ձգտում էին «միջին դասակարգի» զիկտատուրան հաստատելու, սակայն նրանցից ոչ ոք առհասարակ բռնի գործողութեանց և մասնաւորապէս փողոցային ապատամբութեան մասին չէր էլ մտածում։ Անշուշտ, Գիզօն նման ապստամբութեան ամեն մի ծրագիր խսափւ կդատապարտէր։ Եւ այդ չէր խանգարում նրան յեղափոխական լինել, որովհետեւ նա անընդհատ (միջին դասակարգի) մարդկանց մտքում զարգացրել է այն զիտակցութիւնը, որ նրանց շահերը հակապիր են ազնւականների շահերին և անդադար ապացուցել, որ միջին դասակարգի և ազնւականութեան հաշտութեան միարք—վնասակար ցնդարանութիւն է։ Միանդայն նման յեղափոխականներ են Մարքսն ու Էն-

դե՛լոր— «Կոմմունիստական կուսակցութեան՝ Մանիֆէստի» մէջ և միանդամայն նման յեղափօխականներ ել մնացին մինչև իրենց վերջին շունչը, միայն նրանք այլ գասակարդի շահերի հայեացակէտի վրայ են կանգնած եղել: Այդ կողմից նրանց հայեացըները մտղաչափ անդամ չփոխւեցին, չնայած «քննադատների» հաւատափայումներին, որոնք բոլորն ել, ըստ Մարքսի ասութեան՝ ամբողջապէս բաղկայած են «մէկ կողմից» և «միւս կողմից»-ից: Նրանք շատ են ուղում ազատել պրոլետարիատը, միայն թէ բուրժուազիալին դրանով տհաճութիւն չպատճառեն: Նրանց մասին է ասւած Նիցշեի խօսքը՝ «Selig sind diese Schläfrigen, denn sie sollen bald einnicken». (Կրանի՛ այդ նիրհողներին, որովհետեւ շուտով խոր քնի մէջ պիտի սուզեն նրանք: Պ. Մ.):

Մհաւափիկ այն ամենը, ինչ որ մենք ցանկանում էինք ասել «Մանիֆէստի» հիմնական մտքի և նրանից անմիջապէս բղխող հետևանքների մասին: Մանիֆէստի առանձին զրութիւններն, ինչպէս ասացինք, քննութեան կառնենք «Քննադատութիւն մեր քննադատների» բրոշիւրի մէջ: Այստեղ մենք կտեսնենք՝ արդեօք Մարքսն ու էնդել'սն արդարացի էին, և եթէ այս, ինչ չափով էին արդարացի նրանք, երբ որ ասում էին թէ բուրժուական հասարակութեան արտադիր ուժերը, նրա արտադրական յարաբերութիւններից աւելի են անել և թէ արտադիր ուժերի և արտադրական յարաբերութեանց այդ հակասութիւնն—արդի բանւոր դասակարգի յեղափօխական շարժման խորունկ սոցիալական հիմքն է հանդիսանում:

Պ. Պլեխանով

Ժլնկ, օգոստոս 1900 թ.

## II.

Շուտով վաթսուն տարին կրանայ, ինչ յօրինւել է «Կոմմունիստական Մանիֆէստը», արաադրանում մի եղանակի դոյսութեան վաթսուն տարին, որ աւելի քան բոլոր նախընթացները հնի անրնդհատ յեղաշրջման, նորի անդադար և յար ունչի մէջ է կայանում: Ոչ միայն Եւրոպայի, այլ ողջ Երկրագնդի քաղաքական և սոցիալական լիակատար յեղաշրջման վաթսուն տարին է լրանալու: Այդ վեց տասնամեւակը չեր կարող նաև ակոմմունիստական Մանիֆէստի» համար անհետ անցնել: Ինչ չափով նա ուղիղ է բժրունել իր ժամանակը և համապատասխանել նրան, այն չափով էլ աեղտեղ պիտի հնանար նա և այդպիսով, պատմական մի փաստաթուղթ դառնար, որ վկայութիւն տալով իր ժամանակի մասին, ներկայիս համար որոշող լինել այլևս չի կարող:

Սակայն լաւ նկատենք՝ սա ճիշտ է լոկ մի քանի կէտերի նկատմամբ, այն կէտերի, որոնց մէջ գործնական բազար արդարացի տը զիմում է իր ժամանակակիցներին: Զկայ աւելի մեծ մոլորութիւն քան ամբողջ «Կոմմունիստական Մանիֆէստի» վրայ պատմական փաստաթղթի դրօշմ զնելը: Էնդհակառակը: Այն հիմունքները, որ նա զարգացնում է, մեթոդները, որ նա առաջադրում է, արդի արտադրական եղանակի բնօրոշումը, որ սակաւ գծերով տալիս է նա, այսօր աւելի քան երբ և իցէ պահպանում

ևն իրենց արժէքը: «Կոմմունիստական Մանիֆեստի» յօրինւելուց յէտոյ անցած ժամանակաշրջանի փաստացի ողջ զարգացումը, ինչպէս և տեսական բոլոր հետազոտութիւնները շարունակ եկել են նրա հիմնական դրութիւնները հաստատելու: Աւելի քան երբ և իցէ այսօր նանաչում է այն դրութիւնը, որ բոլոր (քաղաքակիրթ) հասարակութեանց պատմութիւնը—ցարդ դասակարգավին սլայքար է եղել, երբէք այսօրւայ պէս պարզ չի եղել, որ մեր ժամանակի մեծ մղիչ ոյժը—դասակարգային սլայքարն է բուրժուազիայի և պրոլետարիատի միջեւ:

Սակայն պրոլետարն էլ, բուրժուան էլ այսօր նոյն չեն, ինչ վեց տասնամեակ առաջ են եղել: Թէև «Մանիֆեստ» այնչափ նեղ շրջանակում այնքան ուուր ու սոտոդ է նկարել այդ երկու դասակարգը, որ այդ պատկերն այսօր էլ ամենապայծառ ու խորն է, այնու հանդերձ նրա որոշ կետերն այլևս չեն համապատասխանում իրականութեանը:

«Կոմմունիստական Մանիֆեստի» լոյս տեսած պահուն պրոլետարիատի ամենացայտուն բնոյթագիծը—նրա տնկումն էր, նրա աշխատավարձի էջը, նրա աշխատամի երկարացումը, նրա Փիզիկական, յանախ նաև բարոյական և մատուր ավասերումը, կարծ նրա թշւառութիւնը:

Երեք խոշոր դասակարգերից, որոնցից բաղկացած է եղել ժողովրդի զանգւածը,—զիւղացիներ, քաղըքենիներ և վարձու բանորդներ—բոլոր կողմերով ամե-

նախոնարհը—վերջինս է եղել: Աղքատ, ճնշւած, անօդ—թէ թւով, թէ անտեսական նշանակութեամբ (ամենուրեք, բացի Անդիխիլից) երկու այլ դասակարգից ետ ընկած—նա չշահազրդուած գիտողների մեծամանութեան աչքում լոկ ցաւակցութեան առարկայ է եղել: Պէտք էր Մարքսի և էնդել'սի տնտեսական և պատմական ողջ գիտութիւնը, նրանց մտքի ամբողջ թափիր, որպէսզի պրոլետարիատի դասակարգավին պայքարը յայտնադործւէր իրու գալիք տասնամեակների զարգացման ամենազօրեղ մղիչ ոյժ այնպիսի մի ժամանակ, երբ մեծ ուտոպիստների հետեւողները պրոլետարիատն անզօր զանգւած էին համարում, որին լոկ աւելի բարձր դասակարգերն են կարող օգնութեան գալ, և յեղափոխականներն ամեն ինչ «Ժողովրդից» էին սպասում, այսինքն՝ էապէս քաղըքենիներից և զիւղացիներից, որոնց լոկ կցորդ էր հանդիսանում վարձու բանորդը և կախւած նրանցից՝ հոգեպէս, սոցիալօրէն, յաճախ նաև տնտեսպէս:

Այսօր պրոլետարիատի գրութիւնը միանգամայն այլ է: Ճիշտ է, նա այսօր էլ է ենթարկւած կապիտալի նոյն ստորացուցիչ ազգեցութեանը, ինչպէս վաթուուն տարի առաջ: Ճիշտ է, այսօր էլ է կապիտալը ծղտում կրնատել աշխատավարձը, երկարացնել աշխատամածը, բանորդներին—մերենաներով, բանոր տղամարդկանց—կանանցով ու երեխաներով վոխարինել և ազգափառվ տանել պրոլետարիատը դէպի անկում: Սակայն աւելի և աւելի է զօրեղանում

“ընդվղումը յարանուն բանոր գասակարդի, որին հէնց արտադրութեան կապիտալիստական եղանակի կազմակերպութիւնն ինքնին կըթում, համախմբում ու կազմակերպում է» (Մարքսի «Կապիտալ»-ից): Աւելի և աւելի է անում պրոլետարիատի ընդդիմադիր ոյժը, նրա խաւերը, մէկը միւսի եաւելից, սովորում են, թէ ինչպէս պիտի կապիտալի ստորացուցիչ աղդեցութիւնը յաղթահարել:

Միանդամայն այլ է մանր-քաղընիների և մանր-զիւղացիների բանը: Մինչեւ առանձիւ տարիների ընթացքում պրոլետարիատի անող բազմութիւնը քանի զնում կրծառում է իր աշխատաժամը և բարձրացնում աշխատավարձը—արհեստաւորների և զիւղացիների աշխատաժամը գարծեալ նոյն է մնում, հասնում ֆիզիկական աշխատունակութեան սահմանին, երբ աշխատանքի լարումը շարունակ անում է: Եւ արհեստաւորների, մանրավաճառների և մանր-զիւղացիների ապրուստի միջոցը քանի զնում աւելի է մօտենում գոյութիւն պահպանելու մինիմումին (Existenzminimum): Միւս կողմից, մինչդեռ խոշոր ինդուստրիի մէջ բանոր գասակարդը ծղտում է կանաց ու մանուկների աշխատանքն աւելի և աւելի նեղ շրջանակների մէջ զնել, աւելի և աւելի մեծ պաշտպանութիւն ցոլց տալ—արհեստաւորներն ու զիւղացիները հարկադրւած են աւելի և աւելի շահագործել իրենց հարազատ, ինչպէս և օտար, կանաց ու մանուկներին:

Այս տնտեսական փոփոխութեան հետ ձեռք ծեռքի տւած մտաւոր և քաղաքական փոփոխութիւն է տեղի ունեցել: Հարիւր տարի առաջ քաղընին գերազանցում էր ժողովրդական դանդւածի բոլոր այլ գասակարդերն իր մտաւորով, ինքնավստահութեամբ, խիզախութեամբ: Այսօր նա սահմանափակութեան, սարկահոգութեան և թուրամորթութեան տիպարն է զառել, մինչդեռ պրոլետարիատն ուժգնօրէն զարգացնում է իր մէջ նրա նախկին առարինութիւնները: Հարիւր, նոյն իսկ յիսուն տարի առաջ քաղընիները տակաւին դեմոկրատական զիմադրութեան, բուրժուական արմանատակամութեան միջուկն էին կաղում, պատերազմ յայտարարում զղեակներին, սեղաններին, գահերին և խաղաղութիւն աւելացնելու խրնիթներին: Այսօր քաղընիները եարնթաց բանակի միջուկն են կաղմում, պահուկ են հանդիսանում աղնւականութեան, եկեղեցու և թաղաւորի, որոնցից փրկութիւն են ակնկալում այն թշւառութիւնից, որի մէջ նեաել է նրանց տնտեսական զարգացումը:

Դիւղացիներն էլ զրանց օրին են:

Կապիտալիստօրէն զարգացած երկիրներում (ուրեմն սա Խուսատանի մասին չի առած) մի հատիկ գասակարդ կայ, որ բոլոր ուժով սոցիալական առաջադիմութեան համար է ջանում—գա պրոլետարիատն է:

Հասարակական զարգացման բախսից այս բոլոր փոփոխումներին նաև ուժերի յարաբերութեան կա-

տարեալ փոխիսում է ուղեկցում: Այն պահուն, երբ «Կոմմունիստական Մանիֆեստ» է յօրինվել, ազգաբնակութեան խոշոր մեծամասնութիւնը (Ֆրանսիայում և Գերմանիայում մինչև 70, 80 տոկոսը) տակաւին դիւզորաքում էր ասլրում: Իսկ քաղաքներում քաղըենիներն էին գերակշռում: Այսօր եւրոպայի բոլոր ինկուստրիալար զարգացած պետութեանց մէջ մեծամասնութիւնը—քաղաքի ազգաբնակութիւնն է կազմում և քաղաքներում—սլույտարիստն է գերակշռում: Սակայն նրա տնտեսական նշանակութիւնն առ ելի է անել քան նրա մասն ազգաբնակութեան ընդհանուր քանակի մէջ: Հարիւր տարի առաջ կապիտալիստական ինդուստրիան, մասնաւանդ երուպական ցամաքում, նախագասօրէն փարթամութեան էր ծառայում—մետաքսի կառուներ, գորգեր, հաղճապակի, թուղթ և այլ առարկաներ արտադրում: Դեռ ևս վաթուն տարի առաջ տնտեսական կեսմբի հիմքը—զլսաւորապէս արհեստն ու գիւղատնաեսութիւնն էր: Այսօր մի երկրի տնտեսական նշանակութիւնն ու հարստութիւնը նախ և առաջ կախւած է նրա կապիտալիստական խոշոր ինդուստրիաց, որ ոչ թէ փարթամութեան է ծառայում, այլ մասսայական սպառման և ամենաանհրաժեշտ իրեղէններ է արտադրում: Արդի պետութիւնը կարող է առանց գիւղացիների և արհեստաւորների գոյսութիւն ունենալ, ինչպէս ցոյց է տալիս Անդլիալի օրինակը: Սակայն առանց խոշոր ինդուստրիի և նրան համապատասխան հաղորդակցութեան

միջոցների գոյսութիւն ունենալ չի կարող: Խոշոր ինդուստրիի և մասսայական արանագործի (փոխագրութեան միջոցների) հետ անում է նաև պրոլետարիատը: Սոսկ իր թւով արդէն նա ժողովրդի ամենազօրեղ գասակարգն է դառնում: Գերման ինդուստրիի մէջ 1895 թւականին արդիւնագործողների երեք քառարորդը՝ 75 տոկոսը—վարձուքան և որն երես է 1882-ին—լոկ 66 տոկոսը, երկու երրորդականը:

Այսօր նրանցից է կախւած երկրի ողջ տնտեսական կեանքը: Իսկ նրանց շարքերում, ինչպէս մենք տեսանք, անում է այնպիսիների թիւը, որոնց կեանքը և աշխատանքի պայմաններն աւելի նպաստաւոր են, քան մանր-արհեստաւորներինը, վաճառականներինն ու գիւղացիներինը:

Ընչպուրկ բանւորների խաւերից շատերի կայութիւնն այսօր աւելի բարենպաստ է, քան սեփականատէր, այսինքն արտադրական միջոցների տէր մշակների լայն շրջանների գրութիւնը: Աւստի այսօր մարդ չի կարող «Կոմմունիստական Մանիֆեստ» հետ ասել՝ «բանւորը—մուրացկան է գառնում, քանի զինում, նա իր գասակարգի գոյսութեան պայմանների մակարդակից աւելի խորն ու խորն է իշնում»:

Այսպիսով պրոլետարիատի վիճակն այսօր միանգամայն այլ է, քան սրանից վաթսուն տարի առաջ: Սակայն ինարկէ մարդու զլսում իրերը վերին տատինանի ինքնօրինակ պիտի անդրադառնան, որպէսզի կարողանալ հաւատատալ, թէ այս փոփոխութեանց շնոր-

հիւ պրոլետարիատի ներհակութիւնը կապիտալի նկատմամբ մեղմացել է: Բնդհանութակուակր: Բնդհանութամբ պրոլետարիատն այսօր աւելի մեծ չափով է կուլտուրական բարիքներ վայելում քան նախընթաց դարերում, անգամ տասնամետակներում: Նրա համար անհետեանք չի անցել կապիտալիզմի շնորհիւ ազատագրւած արատադիր ուժերի հսկայական անումը:

Միւս կողմից կարելի է խօսել բազմաթիւ պրոլետար խաւերի դրութեան բարելաւման մասին, եթէ քաղքենիների և զիւզացիութեան վիճակի հետ համեմատելու լինենք: Սակայն պրոլետարիատի դրութիւնը նրան հարստահարող կապիտալիստ դասակարգի համեմատութեամբ վճռական և արագ կերպով դէպի վատն է զնում: Աշխատանքի արտադրականութիւնը կապիտալի ակրապետութեան ներքոյ չափից գուրս առնել է, հասարակական հարստութիւնը հսկայական չափերի հասել, իսկ պրոլետարիատի ստացածը — ծայր աստիճան սուղ է այն առատութեան համեմատութեամբ, որ կապիտալիստ դասկարգին է հասնում: Կապիտալիստ դասակարգի կենսական պրայմանների համեմատութեամբ և կապիտալի ուռնացման հետ պրոլետարիատի դրութիւնը դէպի վատն է զնում, նրա բաժինն իր աշխատանքի արդիւնքից զնալով պակսում և նրա շահագործումն աւելանում: Հակառակ այդ ամենին նրա արած ամեն մի քայլը դէպի առաջ տեղի է ունեցել շնորհիւ շարունակ ընդդէմ կապիտալի նրա վարած պայքարի և միմիայն անբնդհաս պայքարի միջոցով է, որ

նո կարող է այդ ամենը պահպանել: Այսպիսով ոչ միայն նրա անկումը, այլև նրա բարձրանալը — ոչ միայն նրա պարաութիւնները, այլև յաղթանակներն — աղբիւր են գառնում նրա մշտական և յարանուն գառնութեան բնդդէմ թշնամի գասակարգի: Պայքարի ձևերը փոխվում են, քանի զնում աւելի վեհանում — վայրագ յուսահատութեան հատ-հաս զործողութիւնները խոշոր կազմակերպութեան ծրագրւած զործողութեանց են վերածում — ներհակութիւնը մնում է, սրւում, սաստկանում:

Սակայն, պրոլետարիատի պէս, վերջին վայմառն տարւայ ընթացքում, ինդուստրիական բուրժուազիան էլ է փոխւել: «Կոմմունիստական Մանիֆեստի» հրապարակ զալու պահուն նա նոր էր վերացրել իր տիրապետութեան վերջին խոչընդուն Անդիխայում — հացահատիկի մաքոր — իսկ երապական ցամաքում նա քաղաքական իշխանութիւնն իր նպատակներին ծառակցնելու համար տակաւին յեղափոխութիւն կատարելու անհրաժեշտութեան առջև էր կանգնած:

Նո դէմ առ դէմ այն ուժերի առջև էր կանգնած, որ ծայր աստիճան ակնրախ ննջում էին ժողովրդի խոշոր գանդւամը — տէրտէրների, աղնւականութեան, միապետութեան և խոշոր փողատէրերի դէմ: Նա տակաւին քաղաքական վահմ նպատակներով, իղէալներով էր առզորւած, որ բարոյական իղէալիզմի լուսապակով էր պարուրում նրան: Նո դեռ ևս հաւատում էր, որ ընդհանուր բարեկեցութեանը լոկ աւատականութեան մնացորդներն են խանդարում,

որոնց վերացումը հանուր երջանկութեան դարաշրջանը պիտի բանայ:

1848 թւականի յեղափոխութիւնը հիասթափութիւն առաջ բերեց, զբակորեց դասակարգերի արգի ներհակութիւնը: Ինչպէս մենք տեսանք, տնտեսական զարգացումն այդ ներհակութիւնը գնալով աւելի էր խորացնում և դրա շնորհիւ ինդուստրիական բուրժուազիան իր կողմնակիցների հետ դեմոկրատիալի բանակից եաազիմականների զիրկն էր մզւում: Եւրոպայում նա ոչ մի աեղ ինքնակալութեան չհասաւ: Առաջներում նա քաղքենիների և պրոլետարիատի հետ էր փորձում իշխանութիւն նւաճել, ներկայումս նա ծպտում է պահպանել այդ իշխանութիւնն այն ուժերի միջոցով, որոնց դէմ նա ըմբռատացրել էր դեմոկրատիալին: Պէտք է աւելացնենք, որ ինդուստրին իր ակցիոներական էութեամբ գնալով աւելի և աւելի է ենթարկում բարձր փողատերերի իշխանութեանը, որ փազուց հետէ հակադեմոկրատիկ պետական միահեծան իշխանութեան պաշտպան էին դառել:

«Կոմմունիստական Մանիֆեստ» տակաւին կարող էր յայտարարել՝

— «Գերմանիայում Կոմմունիստական կուսակցութիւնն, այն չափով, ինչ չափով բուրժուազիան յեղափոխական է, բուրժուազիալի հետ միասին պայքար է մզում ընդդէմ միահեծան միապետութեան, աւտական հողատիրութեան և մանր քաղքենիների»:

Այսօր յեղափոխական բուրժուազիայի մասին և ոչ մի աեղ խօսք լինել չի կարող, բացառութեամբ թերեւ Ռուսաստանի:

Ոչ միայն բուրժուազիան և պրոլետարիատն են այսօր որոշ չափով ուրիշ կերպարանը ընդունել, քան «Կոմմունիստական Մանիֆեստ» ժամանակի, զարգացման ընթացքն էլ լիովին այնպէս չգնաց, ինչպէս «Մանիֆեստ» էր սպասում: Ինարկէ տնտեսական զարգացման հիմնական ընթացքն այն ուղիով գնաց, որ այնքան սուր կերպով գձել էր «Մանիֆեստ»: «Մանիֆեստ» խօսքն այդ մասին այսօր էլ օրինակելի է: Սակայն քաղաքական զարգացումն այլ եղանակով ընթացաւ, քան այն պահուն կարելի էր նախատեսնել:

Մարքսն ու Էնդել'սը շատ լաւ գիտակցում էին, որ բանւոր դասակարգն, իր այն պահու դրութեամբ, մանաւանդ Գերմանիայում, անընդունակ էր նւաճել և ծեռքին պահել քաղաքական իշխանութիւնը: Սակայն նրանք սպասում էին թէ զալիք բուրժուական յեղափոխութիւնը, որ նախ և առաջ Գերմանիայում պիտի բռնիի, նման ընթացը է ունենալու, ինչ որ տասնեօթերորդ դարի անդիմական և տասնութերորդ դարի ֆրանսիական յեղափոխութիւնները: Այսինքն՝ սկզբում յեղափոխական բուրժուազիան կապստամբի միահեծանութեան և աւատականութեան դէմ, ապա՝ շարժման ընթացքում, պրոլետարակարրը գնալով աւելի պիտի գիտակցի իր և բուրժուազիալի միջև եղած ներհակութիւնը: Այդ հան-

դամանքը գնալով պիտի զարդանայ, պիտի զօրեղացնի յեղափոխութիւնը, պրոլետարիատի պրոլեցութիւնը և ինչը պրոլետարիատն արագ-արագ պիտի ամրանայ և հասունանաբ։ Որովհետեւ յեղափոխութեան ընթացքում իւրաքանչիւր հասարակական զարգացում ծայր աստիճան արագ է ընթացքում, որոշ գասակարգեր մի հինգ տարւայ ընթացքում հեշտութեամբ այնքան են առաջադիմում, որ այլ պարագաներում ամբողջ դար կպահանջէր։ Այսպիսով բուրժուական յեղափոխութեանն անձիշապէս պրոլետարականն է յաջորդելու։ Պրոլետարիատի քաղաքան իշխանութիւնն նւանելլ, մի հարւածի հետեանք չի լինելու, այլ տարիների, թերեւս տասնեակ տարիների, յեղափոխական պայքարի արդիւնք։

«Կոմմունիստական Մանիֆեստն» այդ մասին ասում է—«Կոմմունիստաներն ուշի ուշով հետեւում են Գերմանիայի զէպլերին, որովհետեւ Գերմանիան բուրժուական յեղափոխութեան նախօրեակին է կանգնած, և որովհետեւ այդ յեղաշրջումն անտեղ պիտի կատարւի երոպական քաղաքակրթութեան աւելի հասուն պայմաններում առհասարակ և աւելի զարգացած պրոլետարիատի ծեռքով քան 17 դարում—Անդիայում և 18-ում—Ֆրանսիայում, և հետեւ աբար գերման-բուրժուական յեղափոխութիւնը կարող է պրոլետար յեղափոխութեան անձիշական նախերգանքը հանդիսանալ»։

Այս սպասումն, ինչպէս մենք ամենքս այսօր դիտենք, չկատարւեց և հէնց այն պատճառով, որ

1848 թւականի յեղաշրջումը «Երոպական քաղաքակրթութեան աւելի առաջաւոր պայմաններում» տեղի ունեցաւ, քան 1640 և 1789 թւականներին սկսւած յեղափոխութիւնները։

Սնդիմունի և վրանսիական յեղափոխութեանց ընթացքում պրոլետար և քաղենի կիսապրոլետար տարրերին առաջ քաշողն ու քաղաքական իշխանութիւնը ժամանակաւորապէս նրանց ձեռքը տւողը պատերազմն էր, կեանքի և մահու պատերազմը, որ ստիպւած էր վարել յեղափոխութիւնը։ Յյդ պատերազմի ընթացքում յեղափոխութիւնն ամրապնդւեց շնորհիւ պրոլետարիատն յատուկ վճռական վերաբերմունքի թէ իր կեանքի, թէ սեփականատէրերի գոյքի նկատմամբ։ Սնդիմում—դա պարլամենտի բազմամեայ պատերազմն էր կարլոս Լի աղնւականներից կաղմած զօրքի դէմ, ֆրանսիայում—նմանապէս բազմամեայ պատերազմն միապետական եւրոպացի դաշնակցութեան դէմ։

1848 թւականի յեղափոխութիւնից պատերազմ չբռնկեց։ Կառավարութիւններն երկարատեւ քաղաքայիական կուից չէր, որ առավալում էին։ Միօրեայ բարրիկադացին պայքարը բաւական էր Փարիզում, Վիեննայում, Բեռլինում նրանց խորապելու համար։ Ոչ մի զրոխ ոյժ չգտնւեց, որ նրան պատերազմ յաղտարարէր։ Աբովիւտական Ռուսաստանը պազմ մի ձայն-ձպտուն չէր հանում։

Եթէ յեղափոխութեան աւատ-աբսոլիւտական հակառակորդները 1848 թւականին շատ աւելի թոյլ էին, քան տասնութ և տասնեօթերորդ դարերում, պրոլետարիատը շատ աւելի զօրեղ էր: Փարիզում, վետրւարեան օրերին նա սկզբից և եթ գերիշտող դիրք դրաւեց:

Փոխանակ միապետութեան և աղնաւականութեան դէմ կենաց և մահու պատերազմ ընծեռնելու, մի բան, որ բուրժուազիան կարող էր զուտիս բերել միայն կամայ թէ ակամայ պրոլետարիատը պալքարի կոչելով և զինելով, և զբա շնորհիւ վերջի վերջոյ հարկազբարարար նրա ազգեցութեանը ենթարկւելով՝ բուրժուազիան այս անգամ հէնց պրոլետարիատի դէմ կենաց և մահու պայքարի մէջ մտաւ, նորակործան պետական իշխանութիւնն ու նրա զօրքն օղնութեան կանչեց, որպէս զի վերջի վերջոյ վերստին սրա լծի տակն ընկնի:

Յունիսեան նակատամարտը 1848 թւականի յեղափոխութեան կործանումն էր, որ նոր դարաշրջան աւետեց: Այդ օրերից վեր բուրժուազիան վերջնականօրէն դադարեց յեղափոխական դասակարգ լինելուց: Դրանով փակւում է բուրժուական յեղափոխութեանց ժամանակաշրջանն—առնւազն Արևմտեան Եւրոպայում: Թէ որ չափով է ասածներս Ռուսաստանին վերաբերւում, որտեղ դիւզացիութիւնն ու մտաւորականութիւնը միանդամայն այլ դեր են խաղում, քան արդի Արևմտեան Եւրոպայում, ես այսաեղ ըննութեան առնել չեմ ուզում:

1848 թւականի յունիսից Արևմտեան Եւրոպայում անհնարին դառաւ բուրժուական յեղափոխութիւնը, որ կարող լինէր պրոլետարականի նախերգանքը հանգիսանալ: Գալիք յեղափոխութիւնն ալստեղ կարող է ոսկի պրոլետարական լինէր:

Անգամ Ռուսաստանում յեղափոխութեան նախածեռնութիւնը կարող է լոկ ինդուստրիական պրոլետարիատից բղխել, նոյն իսկ եթէ այդ յեղափոխութիւնը դէպի պրոլետարիատի միահեծանութիւնը տանելու չլինի:

Այսու հսնդերձ՝ բանւորական շարժման զերն էլ այսօր բոլորպին այլ է, քան «Կոմմունիստական Մանիֆեստ» ծագման պահուն:

Այսօր ալևս չի կարելի սպասել, որ բուրժուական յեղափոխութիւնը կամրապնդի բանւոր դասակարգը, նրան այն բարձրութեան կհասցնի, որ հնարաւորութիւն կտայ նրան ծեռք բերել և ծեռքին պահել քաղաքական իշխանութիւնը և որ բուրժուական յեղափոխութիւնը յարատելով (պերմանենտ գառնալով), դուրս կգայ իր շրջանակից և կծաւալի իրրե պրոլետարական յեղափոխութիւնը Յեղափոխութիւնից դուրս և դրանից առաջ պիտի ծեռք բերի պրոլետարիատն այդ հասունութիւնն ու զօրութիւնը: Նախ քան յեղափոխութիւնն առհասարակ հնաբաւոր գառնալ՝ պէտք է, որ պրոլետարիատը մինչեւ որոշ մակարդակ բարձրանայ: Բայց այդ վերելքը ոչ թէ պատերազմի այլ խաղաղութեան ուղիով պիտի տեղի ունենայ—եթէ միայն դասակարգավին պալքարէ

ռազմիկ և խաղաղ ձեթողների այս տարօրինակ (պարագոբսալին) հակադրութիւնը — թոյլատրելի է։ Աշխատանքի օրէնսդրական պաշտպանութիւնը, պրոֆեսսիոնալ, անդամ կոռալերական կազմակերպութիւնները և ընդհանուր ընտրական իրաւունքը լիսնական թւականներից ի վեր արդէն աստիճանաբար բոլորին այլ նշանակութիւն են ծեռք բերել, քան մինչև 1848 թւի լունիս ամիսը։

Են, ինչ վաթմուն տարի առաջ խոր խաւարով էր պատաժ, այսօր լոյսի պէս պարզ է։ Դրանից է, որ քանի մի կարճատես խլուրդներ, որ, անծրեային ճինուների ետելից ընկած, շանասիրութեամբ հող են փորփորում — կարծում են, թէ իրենց հեռատես ու սուր հայեացըով «Կոմմունիստական Մանիֆեստի» վարպետների առաջը կարել-անցել են և նոյն իսկ նրանց «մտաւոր թերիներին» վեհանձն ցաւակցութեամբ են վերաբերում։ Փաստը սակայն այն է՝ որ սոցալիստներից ու լեզավոխականներից և աչ ոք իրերի նոր դաստիրութիւնն ու նրանցից բղխող հետևանքները Մարքսից և էնդել'սից առաջ չի ըմբռնել։

Առաջինը նրանք էին, որ ընդունեցին, թէ յեղափոխութեանց գարաշրջանն, առնւազն մի առժամանակ, վիակւած է։ Ապա «Ինտերնացիոնալ» էր, որ եւրոպական ցամաքում նախ և առաջ պրոֆեսիոնալ կազմակերպութեանց սիստեմաբար դարձումն էր իրեն նախատակը դրել։ Մարքսի «Կապիտալ» աշխատանքի օրէնսդրական պաշտպանութիւնն ու պրոֆեսսիոնալ կազմակերպութիւններն այնպիսի նշանակութիւն ստացան, որ անկարելի էր 1847 թւին նախատեսնել, պատճառն այն էր, որ «Կոմմունիստական Մանիֆեստի» լոյս տեսնելուց մի քանի ամիս անց՝ բուրժուազիալի և պրոլետարիատի միջև եղած դասակարգային ներհակութիւնն այնպիսի ազգեցութիւն պիտի անէր բուրժուազի-

թնտրական իրաւունքի վաթմունական թւականներին Անդիայում տեղի ունեցած բանւորական շարժման մէջ ուժգին թափով մասնակցութիւն ունեցաւ «Ինտերնացիոնալ»։

Իրերի նոր դասաւորութեան շնորհիւ ոչ միայն այն մեթոդները փոխւեցին, որոնց միջոցով բանւոր դասակարգը կարող է հասունանալ, այլև զարգացման առմագը (արագութեան աստիճանը)։ Յեղափոխական սրարշաւ թափի փոխարէն եկաւ խաղաղ և օրինական զարգացման ժամանակը, որ կրակուողիներին գանգաղ, կրիալի քայլ է թւում։

Այսպիսով շատ բան այլ կերպ տեղի ունեցաւ, քան «Կոմմունիստական Մանիֆեստի» յօրինման պահուն նրա հեղինակներն էին սպասում։ Մակայն առաջինը էին, որ ճանաչեցին իրերի նոր դասաւորութիւնը և հէնց այն մեթոդներով ու սկզբունքներով, որ զարգացը էին «Մանիֆեստի» մէջ։ Իրերի այն նոր դասաւորութիւնն ինքնին, թէև ոչ այն մեռվ, որ նրանք էին նախատեսնում, գալիս էր այդ ըսկդրունքները հաստատելու։ Եթէ յետագայ տասնամեակների ընթացքում աշխատանքի օրէնադրական պաշտպանութիւնն ու պրոֆեսսիոնալ կազմակերպութիւններն այնպիսի նշանակութիւն ստացան, որ անկարելի էր 1847 թւին նախատեսնել, պատճառն այն էր, որ «Կոմմունիստական Մանիֆեստի» լոյս տեսնելուց մի քանի ամիս անց՝ բուրժուազիալի և պրոլետարիատի միջև եղած դասակարգային ներհակութիւնն այնպիսի ազգեցութիւն պիտի անէր բուրժուազի-

այի վրայ, որպիսին 1848 թւականի փետրւարին «գործադրություն» էր կարող, այսինքն՝ ալդ ներհակութեան նկարը, որ արւած է «Կոմմունիստական Մանիֆեստի» մէջ, իր ժամանակին աւելի ճշգրիտ հանդիսացաւ, քան իրենք նկարիչներն էին ենթադրում։

Սակայն ալդ կապակցութեան մասին և ոչ մի դադարիար չունեն հենց նրանք, որոնք «Մանիֆեստի» «քննադատին» դերն են ստանձնում։ Այն փաստից, որ արագ ու սրարշաւ զարգացման տեղն—աստիճանականն ու առաջմ խաղաղն է բռնել, դասակարգակին պայքարի յեղափոխական մեթոդների տեղն—օրինականն է զրաւել, նրանք հետեւ եցնում են, թէ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև դասակարգային հակադրութիւնը կամ առհսասարակ դոյսութիւն չունի, կամ շարունակ նւազում է։ Աղատամիտ բուրժուազիայի և պրոլետարիատի դործակցութիւն են քարոզում նրանք, իսկ դրանցից նրանք, որ սոցիալիստ են՝ այդ առիթով առաջ են բերում միաժամանակ «Կոմմունիստական Մանիֆեստի» այն կտորը, որտեղ ասւած է։

— «Գերժանիայում Կոմմունիստական կուսակցութիւնը բուրժուազիալի հետ միասին է պայքարում այն չափով, ինչ չափով վերջինս աբսոլիւտ միավետութեան, աւտոտական հողատիրութեան և քաղընիութեան դէմ է ենում»։

Սակայն մենք արդէն տեսանք, որ եթէ «Կոմմունիստական Մանիֆեստի» «մոլորութեանց» մասին կարող է խօսք լինել և եթէ քննադատելու կարիք

կայ—հենց բուրժուազիայի քաղաքապէս յեղափոխական լինելու «գործման» է, որ պիտի քննութեան ենթարկելի եթէ Արևմտեան Եւրոպայում վերջին կես դարի ընթացքում յեղափոխութեան տեղն էվոլյուցիան է բռնել—դա նրանից է, որ այնաեղ այլևս յեղափոխական բուրժուազիալի հետ միասնական պայքար մղելու մասին։ Մարքսն ու Էնդելսը միանգամայն այլ քան էին հատկանում, քան արդի սոցիալիստական մինիստրութեան գործափարակիրները։ 1850 թւի մարտին կենարօնական Կոմիտէն, Կոմմունիստների Միութեանն արած իր կոչում, քննութեան է առնում Կոմմունիստների վերաբերմունքը դէալի բուրժուազիան զեմոկրատիան, որի մասին այն պահուն տակաւին այն կարծիքին էին, թէ յեղափոխական նոր բռնկման գէպքում նախ և առաջ նա պիտի պետութեան դեկին իր ծեռքն առնի։ Այնաեղ ասւած է։

— «Ներկայունս, երբ զեմոկրատիկ քաղքենիներն ամենուրեք ճնշւած են, պրոլետարիատին ընդհանուր միաբանութիւն և հաշտութիւն են քարոզում։ Նրանք մեկնում են պրոլետարիատին իրենց ժեռքը և ծգտում մի մեծ զիմապիր կուսակցութիւն կազմել, որ իր մէջ պարունակէր բոլոր գունաւորութերը։ Այսինքն՝ նրանք ծգտում են բանորներին կուսակցական մի այնպիսի կազմակերպութեան մէջ գրաւել, որտեղ ընդհանուր սոցիալ-գեմակրատական Փրազը

տիրեր\* և քօղարկէր ալդ գեմոկրատիկ քաղըենինէրի շահէրը, իսկ պրոլետարնէրն իրենց պարզորոշ պահանջնէրը յանուն բարի խաղաղութեան առաջադրել չկարողանային: Նման միաբանութիւնը կինէր միմիայն յօդուտ նրանց և ամրողապէս ի վնաս պրոլետարիատի: Պրոլետարիատն այնչափ ջանքով ծեռք բերած իր անկախ զիրքը կկորցնէր և, գահավէժ՝ վերստին պաշտօնական-բուրժուական գեմոկրատիայի կցորդը կդառնար: Ուստի նման միաբանութիւնը պիտի վնասկանօրէն մերժւի... Որ և է ընդհանուր հակառակորդի դէմ միասնական պայքար մղելու դէպքում էլ առանձին միութիւն կայացնելու կարիք չկայ նման հաւառակորդի դէմ անմիջական պայքար վարելու վայրէնանին ինքն իրեն միութիւն կհաստատւի: Հասկանալի բան է զա իր արիւնոտ բաղխումնէրի պահուն, ինչպէս առաջնէրում է եղել, բանւորնէրը զիսաւորապէս իրենց արիւնթեամբ, վնասկանութեամբ և զոհաբերութեամբ է որ պիտի յաղթանակի հասնեն... Պայքարի պահուն էլ, պայքարից յետոյ էլ, բուրժուական գեմոկրատնէրի պահանջնէրի հետ զուգընթացաբար առիթը հանդիսացածին պէս՝ բանւորնէրը պիտի իրենց սեփական պահանջնէրն առաջ մղեն: Հէնց որ գեմոկրատիկ քաղըենինէրն իշխանութիւնն իրենց ծեռքը զցելու փորձ անեն, բանւորնէրն իրենց

\* ) Այն ատեն սոցիալ-դեմոկրատի անունը, ոչ Ռէ պրոլետար դասակարգի կուսակցութիւնն էր կրում, այլ քաղքենի-պրոլետարական մի խանուրդ, առանց որոշ դասակարգային բնութիւ, բայց գերազանցօրէն քաղքենի ճգտումներով:

համար պիտի գարանտիանէր (ապահովում) պահանջեն: Հարկ եղած դէպքում նրանք պիտի զուռվ վերցնեն այդ գարանտիանէրը և առհասարակ հոգան, որ նոր կառավարութիւնն ամեն տեսակ զիջումներով ու խոստումներով կաշկանդւի—զա նրան վարկարեկելու. ամենասպահով միջոցն է: Առհասարակ յաղթութեան աղմու կն ու ոգեորութիւնը նոր կարգերի առիթով բանւորնէրը պիտի ամեն կերպ զսպեն իրերի հանդիսաւ և պաղարիւն ըմբռնումով և նոր կառավարութեանը բացէ ի բաց անվատահութիւն յայտնեն... Մի խօսքով յաղթութեան առաջին իսկ վայրէնանից բանւորնէրն իրենց անվատահութիւնն ալեւ ոչ թէ յաղթած ետքնթաց կուսակցութեան դէմ պիտի ուզգեն, այլ այն նախիին գաշնակից կուսակցութեան դէմ, որ ընդհանուր յաղթանակը կամենում է միս-մենակ շահագործելու:

Ահաւասիկ միահեծանութեան և առատականութեան դէմ բուրժուաղիայի և պրոլետարիատի միասնական պայքարի այն ծեր, որ Մարքսն ու Էնգել'սն ունեցել են աշքի առջե, «Կոմմունիստական Մանիֆեստ» յօրինելիս:

Իհարկէ կարելի թէ առարկել թէ այն ատեն խօսքը՝ յեղափոխական պայքարի մասին է եղել: Սակայն միասնական յեղափոխական պայքարը բուրժուաղիայի և պրոլետարիատի զործակցութեան համար ամենաբարեխաջող դէպքըն է: Այն վանզը, թէ բուրժուաղիան կարող կինի օգտագործել պրոլետարիատի քաղաքական զօրութիւնը, քաղաքական այն ոլժի

կորուսար, որ պրոլետարիատի քաղաքական ինքնուրոյնութիւնից էր բղխում, և բուրժուական դեմոկրատիկ կառավարութեան անվատահութիւն յայտնելու անհրաժեշտութիւնը, պարզ բան է, աւելի մեծ է այնտեղ, որտեղ բուրժուազիան գեռ կարող է լոկ պահպանողական լինել, քան այնտեղ, որտեղ տակաւին նոր դիրքերի յեղափոխական նւաճումի մասին կարող է խօսք լինել:

Այնտեղ, որտեղ բուրժուազիայի և պրոլետարիատի գործակցութիւնն այսօր կարող է անհրաժեշտ լինել—բացառութեամբ Ռուսաստանի—դա պիտի ոչ թէ յեղափոխական, այլ պահպանողական նպատակ ունենայ՝ զեմոկրատիայի նւազ սադր ետքնթայութեան զրոհից պահպանելու և ապահովելու նպատակը: Ետքնթայութեան գէմ ուղղած այս պայքարի համար էլ, պրոլետարիատը պիտի մարտիկներ հանի, այստեղ էլ նրա բաժինն ամենածանր աշխատանքն է լինելու, դարձեալ նա պիտի գործակցի աղատամիտ բուրժուազիային—սակայն առաւել քան յեղափոխական պայքարի պահուն վտանգ կայ, որ գահակիցներն իրեն կդաւաճանեն, անհրաժեշտ է, որ զէմ առ դէմ վառ արտայալուած անվատահութեամբ կանգնած լինի և որ ամենակարևորն է պիտի լիսին ինքնուրոյն կազմակերպութիւն ունենայ: Պրոլետարիատը՝ շնորհիւ իր դասակարգավին դրաւթեան ծայրէ ի ծայր յեղափոխական դասակարգն է: Այսօր—նա միակ յեղափոխական դասակարգն է: Պարագաները կարող են պրոլետարիատին ժամանակ

առ ժամանակ հարկադրել պահպանողաբար գործելու պահպանողաբար վերովիշեալ առումով, այսինքն՝ ընդդէմ ետքնթայութեան—սակայն պահպանողական գործունէութեամբ տարւելու—երբէք: Նա մշտապէս պիտի իր յեղափոխական բնոյթը դրսեսի: Եւ դա կարող է արտայալուել անդամ այն պահուն, երբ նա ժամանակաւորապէս որպէս պահպանողական ոյժ է գործում: Նա իր ուժերը լոկ յեղափոխական գործով ու քարոզով է կարող վարժեցնել ու աւելացնել: Նա իր ոլժի արմատը փրած կլինէր, ելմէ սօսէ պահպանողական պահակի դեր ստանձնէր տիրող աղատամիտ բուրժուազիի, տէրտէրների, կալւածատէրների և վարձկան զինուորների զրոհի դէմ պաշտպանելու համար:

Բնականաբար չկալ մի այնպիսի միօրինակ ձև, որով բոլոր երկիրներում պրոլետարիատի դասակարգավին պայքարն ընթանար: «Կոմմունիստական Մանիֆեստոն» էլ չի կարելի նկատել երբեւ այդպիսին. Այն պայմանները, որոնց մէջ պրոլետարիատն այսօր վարում է իր քաղաքական ու տնտեսական պայքարը—վերին աստիճանի խճճւած են և բազմազան: Իւրաքանչիւր երկրում պայքարի այդ պարագաներից մի քանիսը միանգամայն ինքօրինակ բնոյթ են կրում և ոչ մի տեղ նրանք լիովին չեն համապատասխանում այն պայմաններին, որոնց ազգեցութեան ներքոյ լորինւել է «Կոմմունիստական Մանիֆեստոն»:

Այսու հանգերձ «Կոմմունիստական Մանիֆեստոն» այսօր էլ պրոլետարիատի ամենալաւ, ամենավստահելի

առաջնորդն է իր գասակարդի և զրանով մարդկային ցեղի աղատազրման անցնելիք իր ճանձփում։ Նա լաւագոյն առաջնորդն է ոչ իրքև Աւետարան, իրքև Աստւածաշունչ, —ինչպէս ոմանք կոչել են, —որոնց խօսքերը սուրբ են, այլ իրքև պատմական փաստաթուղթ, որ կարօտ է քննադատութեան։ Սակայն նա կարօտ է այնպիսի քննադատութեան, որ չի սահմանափակւում այսօրւայ իրականութեանն այլևս չհամապատասխանով հասնաւատ զրութիւններ և դարձւածներ ճատնանշելով, այլ այնպիսի քննադատութեան, որ ըմբռնելու ծզտում ունենալով, փորձեր նաև այն դրութիւններն ըմբռնել, որ այսօր հնացել են և այդ միջոցով նրանցից նոր զիտութիւն քաղէր։ Ով որ «Կոմմունիստական Մանիֆեստ» այդ կերպով ուսումնասիրի, նրա համար պրոլետար դասակարդի պայքարի մրկածուփ ժովում նաև ամենատապահով ուղեցոյցը կդառնայ, մի ուղեցոյց, որին բոլոր երկիրների սոցիալիստական կուսակցութիւնները պարատական են նրանով, որ, չնայած բոլոր հականուանքներին, մշուշին և ստորջրեայ քարերին—նրանք իրենց նաևն ուղիղ ճամփով են վարում։ Այդ ուղեցոյցն ահա վաթսուն տարի է ինչ անահական դարձացման ուղին է ցոյց տալիս, որ դարձեալ ու կրկին հաստատում է բոլոր փաստերով։ Զկայ մի այլ պատմական փաստաթուղթ, որ իր յօրինւելուց վաթսուն տարի անց՝ աւելի փալլուն կերպով հաստատեր, քան՝ «Կոմմունիստական Մանիֆեստ»։

Բերքն, 1909 յունիս

Կ. ԿԱՌԻՑԿԻ

### III.

«Կոմմունիստների Միութիւնը», մի միջազգային բանեորական միութիւն, որ այն պատմաներում, հասկանալի բան է, կարող էր լոկ գաղանի գորութիւն ունենալ, 1847 թւականի նոյնմբերին Լոնդոնում կայսցած համագումարում պատրիեց ներքոյ ստորագրեալներիս կազմել կուսակցութեան մանրամասն տեսական և դորձնական ծրագիրը լոյս ընձայելու նպատակով։ Այդպէս է ծագել ստորև բերւած Մանիֆեստը, որի մեռազիրը տպագրութեան համար կոնդոն ուղարկեց վետրւարեան լեզափոխութիւնից մի քանի շաբաթ առաջ։ Առաջին անգամ գերմաներէն է հրատակել և այդ լեզով Գերմանիայում, Աւստրիայում և Ամերիկայում՝ առնւազն տասներկու տպագրութիւն է ունեցել։ Անդերէն առաջին անգամ լոյս է տեսել 1850 թւին Լոնդոնում „Red Republican“ ի մէջ միս չելէն Մակֆերլանի թարգմանութեամբ և 1871 թւին առնւազն երեք տարրեր թարգմանութեամբ—Ամերիկայում։ Ֆրանսերէն՝ առաջին անգամ լոյս է տեսել 1848 թւականի յունւարեան տպատամբութիւնից ըից առաջ Փարիզում և նորես՝ Նիեボրքի „Le Socialiste“-ի մէջ։ Պատրաստում է մի նոր թարգմանութիւն ևս Լեհերէն—Լոնդոնում լոյս տեսաւ զերմանական առաջին հրատարակութիւնից քիչ անց։ Ռուսերէն—Ժրնեւում, 60-ական թւական-

Ներին, Դանեմարկի թէն է անմիջապէս լոյս տեսնելուց յետով թարգմանւել:

Որքան էլ վերջին քսանհինգ տարւայ ընթացքում պարագաները խիստ փոխւած լինեն—այս Մանիքեստում արծարածած ընդհանուր հիմունքներն ամբողջական և խոշոր զծերով այսօր էլ կատարելապէս նիշտ են: Մանրամասները տեղ-տեղ կարելի է շտկել: Այդ հիմունքների կիրարկումն ամենուրեք և ամեն ժամանակի, ինչպէս ինքը Մանիքեստն է պարզում, պատամականորէն գասաւորւած հանդամանքներից է կախւած: Ուստի երկրորդ գլխի վերջում յանձնարւած յեղափոխութան միջոցներն առանձնապէս նշանակութիւն չունեն: Այդ տեղն այսոր շատ կողմից փոփոխութեան կարիք կունենար: Ծնորհիւ վերջին քսանհինգամեակում տեղի ունեցած ինդուստրիի անչափ զարգուցման և գրա հետ անող բանւոր գասակարդի կուսակցական կտղմակերպման, շնորհիւ գործնական փորձի, նախ՝ փետրւարեան յեղափոխութեան, ապա՝ առաւել ևս Փարիզեան կոմմունիայի, որտեղ պրոլետարիատն առաջին անգամ երկու ամսւայ ընթացքում քաղաքական իշխանութեան տէրն էր,—ներկայ ծրագիրը տեղ-տեղ հնացել է: Կոմմունան մանաւանդ, ցոյց-տւեց, որ Արանւոր դասակարգը չի կարող պատրաստի պետական մեքենան պարզապէս իր մեռքն առնել և իր սեփական շահերի համեմատ շարժման մէջ զնելու: (Տես՝ «Քաղաքացիական կռիւր Թրանսիալում»), Միջադգային Բանւորական Միութեան Ընդհանուր Խորհրդի գիմումը—գերմանե-

րէն հրատարակութիւն, էջ 19, որտեղ այս միուրն աւելի հանդամտնօրէն է արծարծւած): Ապա, պարզ րան է, որ սոցիալիստական զրականութեան ըննդգատութիւնն ալսօր արգէն թէրի է, որովհետեւ մինչև 1847 թւականն է հասցրած: Նմանապէս այն նկատողութիւնները, որ բնոյթագծում են կոմմունիստների զիրքը դէպի տարբեր դիմադիր կուսակցութիւնների զիրքը (զլուխ IV) թէև հիմնական զծերով այսօր էլ տակաւին նիշտ են, այնու հանդերձ մանրամասները հիմա հնացել են այն պատճառով, որ քաղաքական ընդհանուր կացութիւնն է փոխւել, և պատմական զարգացումը թւած կուսակցութիւններից շատերը վերացրել է աշխարհիս երեսից:

Այնուամենայնիւ Մանիքեստը — պատմական փաստաթուղթ է, որ մենք այլևս իրաւունք չենք համարում փոփոխութեան ենթարկելու: Աւելի ուշ լոյս կտեսնի մի նոր հրատարակութիւն 1847 թւականից մինչև մեր ժամանակաշրջանն ընդդրկող ներածութեամբ: Առաջիկայ հրատարակութիւնը չափազանց անսպասելի եղաւ մեղ համար, որպէս զի մենք ժամանակ ունենալինք այդ բանն անելու:

Լոնդոն, 24 լուսիսի 1842 թ.

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ  
ՖՐԵՇԵՐԻԽ ԷՆԳԵԼ'Ս

## IV.

Ներկայ հրատարակութեան առաջաբանը ևս, տարարախտարար, մենակ պիտի ստորադրեմ: Մարքսը —այն մարդը, որին Եւրոպայի և Ամերիկայի բովանդակ բանւոր դասակարգն աւելի է պարտական, քան ուրիշ որ և է մէկին—Մարքսը հանդչում է հայդետի գերեզմանասանը, և արդէն նրա շիրիմի վրայ առաջին դալարն է անում: Նրա մահից լետոյ Մանիֆեստի որ և է վերամշակումի կամ ամբողջացման մտսին խօսք լինել ալլես չի կարող: Ուստի առաւել ևս կարեսը ևմ համարում այստեղ կրկին կարուկ կերպով հաստատել հետեւալը:

Մանիֆեստի հիմնական միտքը՝ թէ իւրաքանչիւր պատմաշրջանի տնտեսական արտադրութիւնը և նրանից անհրաժեշտօրէն բղխող հասարակական շերտաւորումը—այդ շրջանի քաղաքական և ծուաւոր պատմութեան հիմքն են, թէ՝ շնորհիւ դրան (հնագարեան համայնական հողատիրութեան քալքալումից լետոյ) ողջ պամութիւնը դասակարգային պայքարի պատմութիւն է եղել, շահագործողների և շահագործւողների միջև, հասարակական զարգացման զանազան աստիճանների վրա տիրող և ճնշւած դասակարգերի միջև, թէ՝ սակայն, այդ պայքարը հիմա այն աստիճանի է հասել, որ շահագործւող և կեղեքւող դասակարգը (պրոլետարիատը) չի կարող

շահագործող և կեղեքող դասակարգից տպատել առանց միաժամանակ ամբողջ հասարակութիւնն ընդ միշտ աղատադրելու շահագործումից, կեղեքումից և դասակարգային պայքարից—այս հիմնական միտքը միայն և բացառապէս Մարքսին է պատկանում\*:

Ես սիր բանն արդէն հաճախ եմ արտայալանել: Սակայն հենց այժմ կարեւոր է, որ նոյնն ասւած լինի: Մանիֆեստի առաջաբանում:

Լոնդոն, 28 լուսիսի 1883 թ.

Ֆ. Էնգել՛ս

\*) «Ըլդ մտքին—ասել եմ անդերէն Թարզմանութեան առաջարանում, որ ըստ իս կոչւած է պատմագիտութեան մէջ նոյն առաջադիմութեան հիմքը դառնալու, ինչ որ Դարլինի տեսութիւնը ընագետութեան մէջ, —այդ մտքին 1845 թւից դեռ ես տարիներ առաջ մենք երկուս էլ մօտենալու վրայ էինք: Թէ որ աստիճան ես, ինքնուրոյն կերպով առաջ եմ գնացել այդ ուղղութեամբ—ցոյց է տալիս իմ «Բանւոր դասակարգի դրութիւնն Անգլիալում» գիրը: Սակայն 1845 թւին, երբ ես հանդիպեցի Մարքսին Բրիստում, նա արդէն այդ միտքը վերջնականօրէն ժշակած ունէր և շարադրեց զրեթէ նոյն պարզ արտալալութիւններով, որ ես վերը հաղորդեցի»:

## V.

Վերև բերւած գրւածից յետոյ, Մանիքեստի գնրմաներէն մի նոր հրատարակութեան կարիք է ժագել Մանիքեստի զլսով այդ միջոցում անցագնացտմն արժէ այսանդ լիշատակել:

1882 թւին, Ժըննում լոյս տեսաւ Վերա Զառաւլիչի արած երկրորդ ուսւերէն թարգմանութիւնը: Մարքսն ու ես առաջարան էինք գրել, որի գերմաներէն բնադիրը, տարարոխաբար, կարցրած լինելով, հարկադրւած եմ ուսերէնից վերստին թարգմանել: Դրանից յօդւածը ոչ մի դէպքում չի շահի:

Ահա այդ առաջաբանը\*:

«Կոմմունիստական կուսակցութեան Մանիքեստի» առաջին ուսւերէն հրատարակութիւնը, Բակունինի թարգմանութեամբ, վաթունական թւականների սկզբին „ԽՈԼՈԿՈԼ“-ի տպարանում լոյս տեսաւ. Այն պահուն այդ գրւածքի ուսւերէն թարգմանութիւնն Արևմուտքի համար ամենաշատը՝ կուրեօղի նշանակութիւն ունէր Ներկալումս նման մի հայեացը այլևս անհնարին է:

«Թէ պրոլետարական շարժման բնագաւառը (Մանիքեստի) առաջին հրատարակութեան միջոցն (յունւար, 1848 թ.) որբան սահմանափակ է եղել

\* ) Որպէս զի թարգմանութիւնը Երկրորդ թարգմանութիւնը արւած չլինի, այստեղ առաջին ուսւերէն թարգմանութիւնն անը վերածուժ ետքէնի. Պ. Մ.

ամենից լու վերջին գլուխն է ցոյց տալիս՝ «Կոմմունիստաների դիրքը դէպի տարբեր դիմադիր կուսակցութիւնները»: Այստեղ բաց են թողնւած նախ և առաջ Ռուսաստանն ու Միացեալ Նահանգները: Դա այն ժամանակն էր, երբ Ռուսաստանը եւրոպական ուկացիալի վերջին մեծ պատւարն էր, և արտագաղթը դէպի Միացեալ Նահանգները կլանում էր եւրոպական պրոլետարիատի աւելորդ ուժերը: Երկու երկիրները եւրոպակին հում նիւթ էին մատակարարում և միաժամանակ նցա արդիւնաբերութեան պրոդուկտների համար շուկաներ հանդիսանում: Երկուսն էլ այսպիսով, այս կամ այն աեսակէալից, եւրոպական հասարակարգի լենարանն էին հանդիսանում:

«Որքան փոխւել է այսօր այդ ամենը: Եւրոպացիների արտադադին է, որ հնարաւոր գարձեց Հիսուսակին Ամերիկալի երկրագործութեան հսկալական զարգացումը, որ իր մրցումով եւրոպակի թէ մանր, թէ խոշոր հողատիրութեան հիմքը սասանեց: Միժամանակ շնորհիւ այդ զարդացման Միացեալ Նահանգները հնարաւորութիւն ունեցան ծեռնամուխ լինելու իրենց հարուստ արդիւնաբերական օժանդակ ազգիւրները շահագործելուն, այն էլ այնպիսի թափով ու շափով, որ շատ շուտով եւրոպական Արևմուտքի արդիւնաբերական մենաշնորհն պէտք է վերջ տրւի:

«Եւ այդ երկու հանգամանքները ետագարծ աղդեցութիւն են անում Ամերիկալի վրայ լեզափոխական ուղղութեամբ: Ինքնուրոյն կերպով աշխատող մանր ու միջին հողակին սեփականութիւնը, Ամերի-

կայի քաղաքական կարգի այդ հիմքը, հսկայական ֆերմերի մրցման հարւածների ներքոյ քանի զնում այնքան աւելի է ընկնում, մինչեռ արդիւնաբերական շրջաններում կապիտալի առավելական կենարունացման հետ միասին, առաջին անգամ բարձավթիւ պրոլետարիատ է գոյանում:

«Անցնենք Ռուսաստանին»:

«1848—49 թւականների յեղափոխութեանց ժամանակ ոչ միայն Եւրոպական միապետները, ոյլև Եւրոպական րուրժուաները ռուսական միջամտութեան մէջ էին տեսնում միակ փրկութիւնը պրոլետարիատից, որ այն պահուն տակաւին նոր-նոր էր հաւաքում իր ռուժերը: Նրանք ցարին Եւրոպական ու Հայկացիայի պետք հոչակեցին: Հիմա նա նստած է, Գատչինայում, իրրև յեղափոխութեան ռազմագերի, և Ռուսաստանը — Եւրոպայի յեղափոխական շարժման առաջապահիկ գունդն է:

Կոմմունիստական Մանիֆեստի նպատակն է եղել՝ հոչակել արդի րուրժուական սեփականութեան գալիք անխուսափելի կործանումը: Սակայն Ռուսաստանում կապիտալիստական կարգի տեսնուու դարձացման և նոր-նոր կազմակերպւող բուրժուական հողատիրութեան կողքին մենք տեսնում ենք, որ հողի մեծ մասը գիւղացիների համայնական սեփականութիւնն է:

«Այժմ հարց է ծագում.—կարո՞ղ է, արդեօք, ռուսական գիւղացիական համայնքը, նախնական համայնական հողատիրութեան այդ թէև ծայր տատինան

քայլաբւած ձեն անմիջապէս հողատիրութեան աւելի բարձր-կոմմունիստական ձեփ անցնել, թէ նախ համականքը հողատիրութեան կազմակուման նոյն շրջանը պիտի անցնի, ինչ որ Արևմուտքն է ապրել իր պատմական գարգացման ընթացքում:

«Ներկայումս միակ հնարաւոր պատասխանն այդ հարցին հետևեալն է: Եթէ ռուսական յեղափոխութիւնն Արևմուտքում բանորական յեղափոխութեան ազգանշան դառնալ — այդ գեպըում արդի ռուսական համայնական սեփականութիւնը կարող է կոմմունիստական գարգացման ելակետ հանդիսանալ»:

Հոնդոն, 21 յունարի 1882 թ.

Գրեթէ նոյն միջոցին մի նոր յեհերէն թարգմանութիւն րուս տեսաւ Ժբնեում „Manifest komunistyczny“.

Ապա լոյս տեսաւ մի նոր գտնեմարկերէն թարգմանութիւն „Socialdemocratisk Bibliothek-ում, Կյöbenhavn 1885“.

Այդ թարգմանութիւնը, տարաբախաբար, լիակատար չէ, մի քանի կառըներ, որ, ըստ երեսիթին, զժւար է եղել թարգմանել, բաց ևն թողնւած: Բացի այդ տեղաւող շփերթութեան հետքեր ևն նշմարւում, մի բան, որ տուաւել ևս անախորժ է,

քանի որ, ինչպէս երևում է, աշխատութիւնից, եթէ թարգմանիչն աւելի խնամքով մերաբերւած լինելը գործին, կարող կլինէր գերազանց արդիւնքի հասնել:

1886 թւին Փրանսերէն մի նոր թարգմանութիւն լոյս տեսաւ „Le Socialiste“-ի մէջ Փարիզում Մինչև այժմ երևան եկածներից սա լաւագոյնն է:

Դրանից յետոյ, նոյն տարւայ ընթացքում, հսպանական մի թարգմանութիւն լոյս աեսաւ նախ Մարտիդի „El Socialista“-ի մէջ և ապա առանձին դրոյկով „Manifiesto del Partido Comunista por Carlos Marx y F. Engels, Madrid, Administracion de El Socialista, Hernan Cortés 8“.

Իբրև կուրեօզ կիշատակեմ նաև, որ 1887 թ. Պոլսի մի հրատարկչի առաջարկւած է եղել «Մանիֆեստ» հայերէն թարգմանութիւնը: Սակայն խեղճ մարդը սիրտ չի արել տպագրել մի զրութիւն, որի վրայ Մարքսի անունն է գտնւում: Նա այն կարծիքն է եղել, թէ լաւ կլինէր, որ իբրև հեղինակ հանդէս գար ինքը թարգմանիր, մի բան, որ մերջինս լանձն չէր առել:

Մի շարք աւել կամ պակաս սխալներ պարունակող ամերիկեան թարգմանութիւններից յետոյ, որ տպագրում էին Անդլիալում, վերջապէս 1888 թւին լոյս տեսաւ հարազատ թարգմանութիւնը: Դա իմ բարեկամ Սամուել Մորինն է, որ նախ քան տպագրութիւնը մենք երկուսով միասին նորից աչքի մենք անց կացրել: Վերնագրերն այսպէս է՝ Manifest of the Communist Party, by Karl Marx and Frederick

Engels. Authorized English Translation, edited and annotated by Frederik Engels. 1888. London, William Reeves, 185 Fleet st. E. C.

Այս թարգմանութիւնից մի քանի ժամանակութիւններ անց եմ կացրել ներկայ հրատարակութեան մէջ:

Մանիֆեստն իր սեփական կենսական ընթացքն է ունեցել:

Լոյս տեսնելու վայրկեանին, նրան խանդավառութեամբ ողջունեց զիտական սոցիալիզմի այն պահուն տակաւին սակաւաթիւ առաջապահիկ գունդը, (ինչպէս ցոյց է տալիս առաջին առաջարանում մատնանշած թարգմանութիւնների ցուցակը): Սակայն շուտով նրան ասպարեզից վանեց ռէակցիան, որ սկսւեց Փարիզի բանորների 1848 թւի լունիսեան պարտութիւնից յետոյ և վերջապէս 1852 թւի նոյեմբերին Քեօլ'նի կոմմունիստների վրայ կտրած դատավճիռը, որ «օրինական ճանապարհով» նրան օրէնքից լուրս հռչակեց: Փետրւարեան յեղափոխութիւնից սկիզբ առած բանորատկան շարժումը հասրակական ասպարիզից անհետացաւ թէ չէ, Մանիֆեստն էլ քաշւեց հրապարակից:

Երբ եւրոպական բանուոր դաստիարագը վերստին բաւականաչափ ամրացաւ տիրող դաստիարագերի դէմ մի նոր արշաւանքի համար, առաջ եկաւ բանուորների «Միշազզային Ասսոցիացիան»: Նրա նպատակն էր եւրոպակի և Ամերիկայի ողջ մաքառող բանուորութիւնը ձուլել մի մեժ բանակի մէջ: Ռւստի և նրա

ելակէտը չէր կարող Մանիքեստի հիմքում դրած սկզբունքները լինել: Նա այնպիսի ծրագիր պիտի ունենար, որ իր դուռը չփակէր անդիմական տրէդունիոնականների, Փրանսիական, բելզիք, իտալական, և հոգանական պրուգոնականների և դերմանական լասալականների առջեւ\*:

Անգամ Բակունինն ու անիշխանականներն էին ընդունում որ այդ ծրագիրը — ինտերնացիոնալի կանոնագրութեան հիմնաւորումը — Մարքսը վարպետուէն է գրել: Մանիքեստի առաջադրած սկզբունքների վերջնական յաղթանակը Մարքսը բացառապէս բանւոր դասակարգի մտաւոր զարգացումից էր սպասում, որ միահամուռ գործունէութեան և վիճաբանութեան անհրաժեշտ հետևանքը պիտի հանդիսանար: Կապիտալի գէմ մղւած պալքարի անց ու դարձը և առաւել պարտութիւնները՝ բան աջողութիւններն անխուսափելիօրէն պիտի պարզէին պալքարող կողմերին նրանց նախընթաց համագարմանների անբաւարարութիւնը, և բանւոր դասակարգի ազատագրման իրական պայմանների հիմնական ընբռնումն աւելի դիւրութեամբ պիտի նրանց գլուխը մտնէր: Եւ Մարքսն արդարացի էր: Այլ էր բանւոր դասակարգը 1874

\* Հասսալն անձամբ մեզ միշտ խոստովանել է, որ ինքը Մարքսի (աշակերտն) է և իբրև այդպիսին Մանիքեստի տեսակէտի վրայ է կանգնած: Այլ է նրա այն կողմնակցիների բանը, որոնք նրա առաջաշրած պետական վարկ վայելող արտադիր ընկերութեան պահանջից դէնը չէին անցնում և բովանդակ բանւոր դասակարգը պետական օգնութեան և ինքնօգնութեան կողմնակիցների էին բաժանում:

թւին, Ինտերնացիոնալի քայլքաման պահուն և միանգամայն այլ — 1864 թւին, երբ հիմնւեց Ինտերնացիոնալը: Պրուգոնականութիւնը ոռմանական երկիրներում և իւրօրինակ լասսալականութիւնը Գերմանիակում մեռնելու վրայ էին, անգամ այն ատեն ծայր աստիճան ետադէմ անդիմական տրէդունիոնները հետզհետէ այն օրին էին հասնում, երբ 1887 թւականի համագումարում նրանց նախագահը նրանց անունից կարող էր տաել՝ «ցամաքալիին սոցիալիզմը» մեր աչքում կորցրել է իր սարսափը»: Իսկ ցամաքային սոցիալիզմը 1887 թւականին դրեթէ Մանիքեստի աւետած մի տեսութիւն էր լոկ: Այսպիսով՝ Մանիքեստի պատմութիւնը 1848 թւականից սկսած որոշ չափով արդի բանւօրական շարժման պատմութիւնն է պարունակում: Ներկայումս դա անկասկած ողջ սոցիալիստական դրականութեան ամնատարածուած, ամենամիշագգային արտազրութիւնն է, Սիբիրից սկսած մինչև Կալիֆորնիա՝ բոլոր երկիրների բիւրաւոր բանւորների ընդհանուր ծրագիրը:

Այնու հանդերձ՝ Մանիքեստը լոյս ընծալելու պահուն մենք չփատահացանք սոցիալիստական անւանել նրան: Երկու տեսակ մարդկանց էին 1847 թւականին սոցիալիստ անւանում՝ մի կողմից — դանագան ու առպիտական սիստեմների կազմնակիցներին, մանաւանդ օուէնականներին — Անդգլիայում և Փուրիերականներին — Ֆրանսիայում, որոնք այն ատեն ալլասերւել և աստիճանաբար մահացող ազանդաւորներ էին դատել, միւս կողմից — բազմազան սոցիա-

լական հերիմներին, որոնք կամենում էին, առանց կապիտալին ու շահին սմենաչնչին վնաս հասցնելու իրենց պէս-պէս համադարձաններով և տեսակ-տեսակ կարկատաններով մերացնել հասարակական թերթ-թիւնները: Երկու գէպքում էլ այդ մարդիկ բանւորական շարժումից դուրս էին կանդնած և «լուսա-որեալ» դասակարգերից էին պաշտպանութիւն ակնկալում: Ընդհակառակը՝ բանւորութեան այն մասը, որ դուտ քաղաքական յեղաշրջումներից յուսը կտրել և հասարակութեան հիմնական վերանորոգում էր պահանջում, այդ մասն այն պահուն կոմմունիստական էր կոչում: Թա լոկ կոպիտ տաշւած, սոսկ ընազդական, երբեմն բոխ կոմմունիզմ էր: Սակայն նա բաւականին զօրեղ էր երկու ուսուպիական-կոմմունիստական սփստեմ ստեղծելու համար, ֆրանսիակում—Կարելի «իկարական» ուսմունքը, Գերմանիայուժ—Վալտինզինը: 1847 թւ տկանին սոցիալիզմ ասածդ բուրժուական շարժում էր, կոմմունիզմը—բանւորական: Սոցիալիզմը, առնւազն ցամաքում, սալոնական բնոյթ էր կրում, իսկ կոմմունիզմը — զրահակառակն էր: Այն պահուն արդէն մենք վճռականորէն այն կարծիքին էինք, որ «բանւորների ազատագրումը բանւոր դասակարգի գործը պիտի լինի» ուստի և ոչ մի բոպէ չենք տատանւել, թէ երկու անունից որն ընտրենք: Յետազալում էլ մեր մոքովի մի անցել հրաժարւել այդ անունից:

«Պոլիետարներ բոլոր երկիրների—միացէ՛ք»: Սակաւ ձախներ աղծաղանք տւին ի պատասխան, երբ

մենք այդ խօսքերն աշխարհ նետեցինք սրանից 42 տարի առաջ, Փարիզի լեղափոխութեան նախօրեակին, երբ պոլիետարիատն իր սեփական պահանջներով հանդէս եկաւ: Սակայն 1874 թւի սեպտեմբերի 28-ին Արևմտան Եւրոպակի երկիրների մեծ մասի պրոլետարիատը միացել և փառապանծ Միջազգային Բանւորական Միութիւնն էր հիմնել: Ճիշտ է «հնաբերնացիոնալը» լոկ իննը տարւան կեանք ունեցաւ: Բայց որ նրա հաստատած բոլոր երկիրների պրոլետարների յաւերժական միութիւնը դեռ կենդանի է, և այսօր աւելի ուժգնորէն է ապրում քան երբ և է զա ամենից լաւ այսօրւայ օրն է վկայում: Արովհետեւ այսօր, այս տողերը զբելուս բոպէին Եւրոպական և ամերիկական պրոլետարիատը զօրահանդէս է չազմել իր առաջին անգամ հաւաքած ուղղական ուժերի: Ուժերի, որ ի մի են հաւաքւել որպէս մի զօրք, մի դրօշակի տակ, մի մերժագոյն նպատակի համար: Բանւորական ուժժամենայ բնական աշխատաժամն է տակաւին 1886 թւին ինտերնացիոնալի ժընկերի համագումարում հռչակւած և ապա 1889 թւի Փարիզի բանւորական համագումարում յայտարարած այդ նպատակը: Եւ այսօրւայ տեսարանը բոլոր երկիրների կապիտալիունների և կալւածատէրերի ուրբ կրանայ, որպէս զի անսնեն, թէ բոլոր երկիրների պրոլետարներն իրօք միացել են:

Մարքսը պիտի կողքիս կանդնած՝ լինէր, որ իր սեփական աչքով տեսնէր այդ:

## ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Եւրոպակում մի ուրւական է շրջում—կոմմունիզմի ուրւականը: Հին Եւրոպայի բոլոր ուժերը—պալն ու ցարը, Մետերնիխն ու Գիգոն, ֆրանսիական արմատականներն ու գերմանական ոստիկանները—օրբաղան դաշինք են կուել ալդ ուրւականը հաւածելու համար:

Ո՞րն է այն դիմագիր կուսակցութիւնը, որ իշխանութեան զլուխն անցած հակառակորդների կողմից կոմմունիստական հռչակւած չլինէր: Ո՞րն է այն դիմագիր կուսակցութիւնը, որ կոմմունիզմի անւանարկու մեղադրանքը ետ շպրտած չլինէր իրենից աւելի առաջադէմ դիմագիրների, ինչպէս և իր և սագէմ հակառակորդների երևին:

Այս վաստից երկու եղակացութիւն է բղխում:

Բոլոր Եւրոպական պետութեանց կողմից կոմմունիզմն արգէն հանաչւած է իրբե ոյժ:

Պատեհ է, ժամը, որ կոմմունիստաներն իրենց հակեցակերպը, նպատակներն ու ձկուումները հանդէս բերեն արար-աշխարհի առջև և կոմմունիզմի ուրւականի մասին շրջող հէքիաթննրին կուսակցութիւկ Մանիֆեստը հակադրէն:

Ահա ալդ նպատակով մենք, բազմազան ազգերի կոմմունիստաներո, հաւաքւեցինք Լոնդոնում և մշակեցինք հետեւեալ Մանիֆեստը, որ կհրատարակւի անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, ֆլամանական և դանիմարկական լեզուներով:

## I.

### ԲՈՒՐԺԱՏԻԱՆԵՐ ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԵՐ

Բոլոր մինչայժմեան հասարակութեանց պատմութիւնը\*—դասակարգակին պալքարի պատմութիւն է:

Ազատն ու սորուկը, պատրիկն ու պլեբէկը, բարոնն ու ճորար, համքարն ու քեարգեարը, կարենչողն ու ճնշւածը միշտ էլ իրար հակառակ են

\* Աւելի ծիշտն ասած՝ գրաւոր կերպով՝ մեղ հասաք պատմութիւնը: 1847 թիւն բնակենցաղ հասարակութեան պատմութիւնը, նրա հասարակական կազմը, որ նախորդում է ամեն մի զրաւոր պատմութեան, զրեմեւ միանգամայն անլայտ էր: Յստոր միայն Հարատհառուցէնը յալտնագործեց հոդի համայնական տիրապետութիւնը նույսաստանում, իսկ Մաուրերն ապացուցեց, որ զա եղել է նաև բոլոր պերմանական ցեղերի հասարակութեան հիմքն ու պատմութան նլակէտը: Ապա թէ դասն, որ համայնական հողատիրութիւնը Հնդկաստանից սինչև նրլանդիա գիւղական հասարակութեանց նախնական կազմն է եղել: Վերջապէս առնմի իսկական բնոյթի և ցեղի մէջ ունեցած տեղի վերաբերեալ Մորգանի արած գիտք շնորհի դրսեորւց այդ նախնական կոմմունիստական հասարակութեան ներքին կազմակերպութիւնն իր տիրապետ ծռով: Այդ նախնական հասարակութեան կազմալուծման դեռ սկսում է հասարակութեան շերտումը տարբեր և ի վերջոյ հակադիր դասակարգերի:

և ղեկ, անընդհատ պալքար են մղեկ իրար դէմ—մերթ գագտնի, մերթ ակնյատ, մի պալքար, որ կամ ամբողջ հասարակութեան յեղափոխական վերանորոգումով է վերջացել, կամ պալքարող դասակարգերի միանական կործանումով:

Պատմութեան նախրնժաց շրջաններում մենք դրեթէ ամենուրեք դանում ենք հասարակութիւնն անդամազատւած տարբեր դասերի, հասարակական դիրքի բազմազիսի աստիճաններ: Հին Հռովմում պատրիկներ, ասպետներ, պլեբէյներ և սարուկներ, միջնադարում աւատատէրեր, վանսալներ, համբարներ, քեարգեարներ և նորտեր: Եւ այդ դասակարգերից դրեթէ իրաքանչիւրը դարձեալ ստորբաժանումներ է ունեցել:

Կործանւած աւատական հասարակութիւնից ելած արդի բուրժուական հասարակութիւնն էլ գասակարգալին ներհակութիւնը չվերացրեց: Նա լոկ նո՞ր դասակարգեր, ճնշումի նո՞ր պայմաններ և պալքարի նո՞ր եղանակներ դրեց հնի աեզ:

Սակայն մեր ժամանակը—բուրժուազիալի շըրշանը—նրանով է նշանաւոր, որ դասակարգերի հակադրութիւններին պարզ ձեւ է տւել: Ամբողջ հասարակութիւններին պարզ ձեւ է տւել: Ամբողջ հասարակութիւնը բաժանւած է երկու մեծ, թշնամի բանակների, երկու մեծ, ուղղակի դէմ առ դէմ կանգնած դասակարգերի—բուրժուազիալի և պրոլետարիստի:

Միջնադարեան նորտերից սերում է նորածակը քաղաքների եկտոր ազգաբնակութիւնը (Pfahlbürger),

որից զարդանում են բուրժուազիալի սկզբնական տարրերը:

Ամերիկալի լայտնագործումը և շուրջաֆրիկեան նու ազնացութիւնը նորելուկ բուրժուազիալի առջև նոր ասպարէդ բացին: Արևելեան Հնդկաստանի և Չինաստանի շուկաները, Ամերիկալի գաղութացումը (Կոլոնիզացիան), փոխանակութիւնը գաղութների նետ, փոխի միջոցների և բնդհանրապէս ապրանքների բազմանալը,—զարկ տւին տուեարի, նաւարկութեան և ինդուստրիի տակաւին չաեսնւած բարգաւաճման և շնորհիւ դրան քայլաբւող աւատական հասարակութեան մէջ յեղափոխական տարրերի արագ զարգացման:

Աւատական կամ համբարալին ինդուստրիի արտադրութեան մինչ այդ գոյսւթիւն ունեցած եղանակը նոր շուկաների շնորհիւ անած պահանջին այլ չեր բաւարարում: Նրա տեղը բռնեց մանուֆակտուրը: Ինդուստրիական միջին դասը վանեց համբարներին: Աշխատանքի բաժանումը զանազան համբարութեանց միջև տեղի տւեց աշխատանքի բաժանումին իւրաքանչիւր արհեստանոցում:

Սակայն շուկաները շարունակ անում էին, պահանջն անընդհատ աւելանում: Այլևս մանուֆակտուրն էլ չեր կարողանում բաւարարել: Եւ ահա շոգին ու մեքենան յեղափոխեցին ինդուստրիի արտադրութիւնը: Մանուֆակտուրի տեղը—արդի խոշոր ինդուստրիներ, ինդուստրիալին միջին դասի տեղը—ինդուստրիալին. միլիոնատերերը, ինդուստրալին ամ-

բողջ բանակների դեկտավարները, արդի բուրժուա-  
շիան:

Խոշոր ինդուստրիան ստեղծեց համաշխարհին  
շուկան, որ նախապատրաստւած էր Ամերիկայի լայտ-  
նագործութով: Համաշխարհային շուկան անչափ զար-  
գացրեց առևտուրը, նաւարկութիւնը և ցամաքային  
հաղորդակցութիւնը: Այդ հանգամանքը ետապարծ  
ազգեցութիւն ունեցու ինդուստրիի ծաւալման վրայ,  
և որ չափով ինդուստրիան, առևտուրը, նաւարկու-  
թիւնն ու երկաթուղին էին տարածւում, նոյն չա-  
փով բուրժուազիան էր զարգանում, բազմապատկում  
իր կապիալը և ետ մզում միջնազարից մնացած  
բոլոր գասակարգերը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ արդի բուր-  
ժուազիան ինքն էլ արդիւնք է երկարատև զարգա-  
ման, արտադրութեան և փոխի եղանակի մի շարք  
լեզարշմանց:

Ամեն անգամ այդ զարգացման մի տատիճանից  
միւսն անցնելիս բուրժուազիան համապատասխան  
քաղաքական առաջադիմութիւն է արել:

Բուրժուազիան—ճնշւած զաս է եղել առատա-  
կան տէրերի տիրապետութեան ներքոյ, զինւած և ինք-  
նավար ասսոցիացիա (համախմբում) կոմմունալում\*,  
ալտեղ՝ անկախ քաղաքային հանրապետութիւն,

\* Առատաէրերից փողով կամ ուժով ինքնավարութեան  
իրաւունք ձեռք բերելուց յատով հոտալիայի և Թրանսիալի քա-  
ղաքացիներն ալդակէ էին անւանում իրենց քաղաքային համայն-  
քը:

ալնաեղ՝ միապետութեան նրանու, հարկատու զաս,  
ապա՝ մանու ֆակատուրի ժամանակաշրջանում դասա-  
լին կամ արսոլիւտ միապետութեանց մէջ—հակաշիռ  
ընդդէմ ազնւականութեան: Բուրժուազիան առհա-  
սարակ խոշոր միապետութեանց զիխաւոր պատւարն  
է եղել, իսկ խոշոր ինդուստրի և համաշխարհային  
շուկաներ հաստատելուց յետոյ, արդի ներկայացուց-  
չական պետութեան մէջ, նա վերջապէս բացառիկ  
քաղաքական իշխանութիւնն է նւանել: Արդի պետա-  
կան իշխանութիւնը լոկ մի կոմիտէ է, որ ողջ բուր-  
ժուազ գասակարգի հասարակական գործերն է փա-  
րում:

Բուրժուազիան պատմութեան մէջ վերին աս-  
տիճանի լեզափոխական դեր է կատարել:

Բուրժուազիան, որտեղ որ տիրապետութեան է  
հասել, խորտակել է բոլոր աւատական, նահապետա-  
կան, հովերդական լարաքերութիւնները: Աւատա-  
կան խալտարգէտ կապերը, որոնք կապում էին մարդ-  
կանց իրենց բնական մեծաւորներին, նա անողորա-  
բար կարտեց և մարդկանց միջև բացի մերկ շահից,  
բացի անզգայ («անզգ փողից») ոչինչ ալ կապ չթո-  
ղեց: Բարեպաշտ անուրջի սրբազն գողք, ասպետա-  
կան ողիորութիւնն ու քաղքենի ժմախիճը նա խեղ-  
գեց եսամոլ հաշչի պաղպաջիւն շրի մէջ: Անհատա-  
կան արժանապատութիւնը նա փոխարժէրի վերա-  
ծեց, թղթով շնորհած և անծանվ ծեռք բերած ան-  
թիւ աղատութեանց տեղ—մի հատիկ, անխիզն,  
առևտուրի աղատութիւն զբեց: Մի խօսքով՝ կրօնո-

րի և մահու խնդիր է դառնում: Արդիւնաբերութեան ալլ նոր տեսակները ոչ միայն տեղական հուծ նիւթերն են մշակում, ալլ երկրագնդի ամենահեռաւոր գօտիների հուծ նիւթերը: Նրանց փաքրիկասները ոչ միայն իրենց երկու հուծ են սպառւում, ալլ աշխարհի բոլոր մասերում: Հին, տեղական արագությութեամբ բաւ արարւող կարիքների տեղը նորերն են բոնում, որոնք իրենց բաւարարման համար ամենահեռաւոր երկիրների և կլիմաների ալրոդու կաներն են պահանջում: Հին տեղական և ազգալին ինքնարաւարարման և կղզիացման տեղը—բաղմակողմանի հազորգակցութիւնն է բանում, ազգերի բաղմակողմանի կախումն իրարից: Եւ հոգեւոր արտադրութեան բանը նոյնն է, ինչ որ նիւթականինք: Հատ-հատ ազգերի հոգեւոր արտադրութիւնները—հանրապին բարիքներ են դառնում: Ազգալին միահօգմանիութիւնն ու սահմանափակութիւնը, քանի զնում, անքան անհնար են դառնում, և բաղմաթիւ ազգալին ու տեղական զբակութիւններից մի համաշխարհալին զրականութիւն է դոյանում:

Բուրժուազիան, արտադրութեան բոլոր զործիքների արագ բարեկառւումով, հաղորդակցութեան անփերջ զիւրացումով, գեղի քաղաքակրթութիւնն է մղում բոլոր ազգերը, անգամ ամենաբարբարուներին: Ապրանքների էժան գները—նրա ձանդ արակերիան է, որով բոլոր շինական պատերը նա հիմնաբառուկ խորտակում է և բարբարուների ամենահաստակողք օտարատեղութիւնն սուխալում է անծնատուր լինել:

Նա հարկագրում է, որ բոլոր ազգերը, եթէ չեն ուղում կործանւել, իւրացնեն արտադրութեան բուրժուական եղանակից: Նա սախալում է, որ նրանք իրենց մէջ ալսպէս կոչւած բաղաքակրթութիւն մացնեն, ալսինքն՝ բուրժուած դառնան: Մի խօսքով նա իր համար մի աշխարհ է ստեղծագործում բատ իր սեփական պատերից:

Բուրժուազիան գիւղը քաղաքի տիրապետութեան ենթարկեց: Նա հսկալական քաղաքներ է ստեղծել, քաղաքի ազգաբնակութեան թիւը նայր աստիճան բազմացրել է ի հաշիւ զիւղերի և զրանով ազգաբնակութեան նշանաւոր մասը պոկել գիւղական ապուշ կեանքից: Եւ ինչպէս նա զիւղն է քաղաքից կախման մէջ զրել այնպէս ել բարբարոս ու կիսաբարբարոս երկիրներն է ենթարկել քաղաքակրթուններին, զիւղացի ժողովրդները՝ բաղաքաբնակներին, Արևելքը-Արևմուտքին:

Բուրժուազիան արտադրութեան միջոցների, սեփականութեան և ազգաբնակութեան ցրւածութիւնը զնալով աւելի և աւելի վերացնում է: Նա ժողովիլ է ազգաբնակութիւնը, կենարունացրել արտադրութեան միջոցները և սեփականութիւնը մի բանիների ծեռքում: Դրա անհրաժեշտ հետեանքը քաղաքական կենարունացումը եղաւ: Տարբեր շահերով, օրէնքներով, կառավարութեամբ և մաքսերով, անկախ, զրեթէ լոկ գաշնակցող, գաւառները նա իրար կցեց, մի ազդ, մի կառավարութիւն, մի օրէնք, մի

աղլակին գասակարգակին շահ, մի մարսակին զիծ ստեղծեց:

Յուրժուաղիան իր գասակարգակին հազիւ հարիւրամեայ տիրապետութեան ընթացքում աւելի բազմաթիւ և զիթխարի արտադիր ուժեր ստեղծեց, քան բարոր նախրնթաց սերունդները միասին: Բնական ովենորի նուռու մը, մերենաները, բիմիալի կիրարկումն ինդուստրիի և հողագործութեան մէջ, շոգենաս արկութիւնը, երկաթուղիները, եղեկարական հեռագիրը, ամբողջ աշխարհամասերի մշակու մը, դեռերի լարմարացումը նաև աղճացութեան համար, գետնի տակից գուրա բերած ամբողջ ժողովուրդներ—նախրնթաց գարերից որին մարովը կանցներ, թէ, հաստրական աշխատանքի ծոցում ալլբան արատգիր ուժեր են նիբնում:

Ալսպիսով մենք տեսանք, որ արտադրութեան և հաղորդակցութեան միջոցները, որ հիմք գարծան բուրժուական գարգացման աւատական հասարակութիւնն էր արտադրել: Արտադրութեան և հաղորդակցութեան այս միջոցների գարգացման որոշ աստիճանների վրայ, աւատական հասարակութեան արտադրական և փրփանակալին յարաբերութիւնները, երկրագործութեան և մանուֆակտուրի աւատական յարաբերութիւնները, մի խօսքով՝ սեփականութեան աւատական յարաբերութիւնները—արդէն գարգացմած արտադիր ուժերին—ալլես գագարեցին համապատասխնկուց: Արտադրութիւնը առաջ մգելու տեղ նրանք կաշկանգում էին: Նրանք էլ արտադրութեան

համար բազմաթիւ կապանքներ գառան: Նրանք պիտի խորտակւեին և խորտակւեցին:

Նրանց տեղը բռնեց ազատ մրցութիւնը, իրեն համապատասխան հասարակական և քաղաքական առանձնագրութեամբ, բուրժուական գասակարգի անակական և քաղաքական տիրապետութեամբ:

Մեր աշքի առջև աեզի ունի նման մի շարժում: Արտադրութեան և հաղորդակցութեան միջոցների բուրժուական յարաբերութիւնները, բուրժուազիալի սեփականատիրական յարաբերութիւնները, արդի բուրժուական հասարակութիւնը, որ արտադրութեան և հաղորդակցութեան զօրեղ միջոցներ է գուրս կոչել, նման է ալն կախարդակետին, որ ալլես չի կարողանում իշխել իր իսկ զուրս կոչած ստորեկրային ուժերին: Խնդուատրիի և առեւտրի պատմութիւնը տասնեակ տարիներից վեր արդի արտադիր ուժերի բմբոստացման պատմութիւնն է լոկ ընդդէմ արտադրութեան արդի յարաբերութեանց, ընդդէմ սեփականատիրական յարաբերութեանց, որ բուրժուազիալի իր տիրապետութեան կենսական պայմանն էն հանդիսանում: Բռւական է լիշատակել առեւտրական նպնաժամերը, որ իրենց պարբերական վերադրծով քանի գնում աւելի սպառնօթէն են գնում բուրժուական հասարակութեան զարութեան խնդիրը: Առեւտրական նպնաժամերի պահուն ոչ միայն արտադրած ալլբանքների մեծ մասը, ալլես արդէն ստեղծւած արտադիր ուժերն են կանոնաւոր կերպով ոչնչանում մ: Ճգնաժամերի միջոցին բռնկում է

հասարակուկան մի համահարակ, որ բոլոր նախընթաց ժամանակաշրջանում անհեթեթ կրթւար—գերարտադրութեան համահարակը: Յանկարծակի հասարակութիւնը գտնում է իրեն և նետւած առժամանակեալ բարբարոս կոցութեան մէջ: Ասես մի սով, մի համատարած աւերիչ պատերազմ կարած լինի նրա ապրուաթի բոլոր միջոցները: Կարծես ինդուստրին, առեւտու ըր ոչնչացած լինեն: Ինչո՞ւ: Որովհետեւ հասարակութիւնն աւելի քան շատ քաղաքակրթութիւն, ապրուստի միջոցներ, ինդուստրի և առեւտու ունի: Նրա արամագրութեան ներքոյ գտնուած արտագիր ու ժերն այլևս բու բժուազիալի սեփականատիրական լարաբերութեանց առաջխաղացմանը չեն ծառայու մ: Ընդհակառակը՝ նրանք այդ լարաբերութեանց համար աւելի քան զօրեղ են, կաշկանդւում են նրանցից, և հէնց որ նրանք լազմանարում են այդ կապանքները, իսկոյն ողջ բուրժուական հասարակութիւնն անկարգութեան մէջ են քում: Նրանք սպառնում բուրժուական սեփականութեան գոլութեանը: Բուրժուական լարաբերութիւնները չափազանց նեղ են իրենց իսկ առապրած հարսաւութիւնն ընդգրկելու համար:

Ինչպէս է ապա բու բժուազիան նգնաժամերը լազմանարում: Մի կողմից՝ հարկադրաբար մեծ քանակութեամբ արտագրական ուժեր ոչնչացնելով, միւս կողմից՝ նոր շոկաների նւաճումով և հների աւելի հիմնական շահագործումով: Այսինքն՝ աւելի բազմակողմնի և ուժգին եղնաժամեր է նախազատրաս-

տում և պակսեցնում նրանցից խուստիելու միջոցները:

Այն զէնքերը, որոնցով բուրժուազիան հողին հաւասարացրեց առատականութիւնը, այժմ հէնց բուրժուազիալի դէմ են ուղղւում:

Սակայն բուրժուազիան ոչ միայն այն զէնքերն է կռել, որ իրեն մահ պիտի բերեն, նա ծնել է նաև այն մադրկանց, որ այդ զէնքերը պիտի կրեն—արդի բանւորներին, պրոլետարներին:

Այնչափ, որչափ բուրժուազիան, այսինքն՝ կապիտալը զարգանում է, զարգանում է նաև պրոլետարիատը, արդի բանւորների գասակարգը, որ ապրում է, քանի աշխատանք է գտնումքանի նրա աշխատանքը բազմապատկում է կապիտալը: Այդ բանն որները, որ հարկադրւած են իրենք իրենց հատուկանութիւնների, ապրանք են, ինչպէս ամեն մի ուրիշ առեւարի առարկալ, ուստի նմանապէս ենթարկւած են մրցման պատահականութեանց և շուկայի բոլոր տառանումներին:

Պրոլետարների աշխատանքը, շնորհիւ մերենաների տարածման և աշխատանքի բաժանման, իսպահորդը է իր ինքնուրոյն բնովթը և գրա հետ միասին իր ողջ հրապուրն աշխատողի համար: Բանւորը գառնում է մերենալի կցորդը սոսկ, որից միայն ամենապարզ ամենամիօրինակ և ամենագիւղին կերպով ուսումնասիրւող ձեռքի շարժումներ են պահանջում: Աւսափ և բանւորի նստած ծախսը սահմանափակւում է գրեթէ նրանով, ինչ պէտք է լոկ նրա ապ-

րուսակի համար, ինչ պէտք է նրան իր կեանքը պահպանելու և իր սերունդը շարունակելու համար: Իսկ աշխատնքի, հետեւապէս նաև աշխատանքի դինք, հաւասար է նրա արտադրութեան ծախսին: Որբան աւելի է զգւելի գառնում աշխատանքը, այնքան աւելի է ընկնում նրա փարձը: Դեռ աւելին: Ինչ չափով մերենաների զարգացումն ու աշխատանքի բաժանումն են առաջ գնում, այն չափով առնում է աշխատանքի քանակը, լինի դա աշխատաժամի յաւելման շնորհիւ, թէ աւել ժամի ընթացքում պահսնչող աշխատանքի յաւելու մի, որ առաջ է զայխու շնորհի: մերենաների շարժբնթացքի արագացման և այլն:

Արդի ինդուստրին նահաւակեական վարպետի փարբիկ արհեստանոցը վերածեց ինդուստրիական կապիտալիստի խոշոր գործարանի: Բանուորների բազմութիւնը խռնւած գործարանում կազմակերպւում է զինուորների պէս: Իրեւ ինդուստրիակ հասարակ զինուորներ նրանք ենթասպաների և սպաների մի կատարեալ երարխիալի հսկողութեան են ենթարկւում: Նրանք ոչ միայն բուրժուա դասակարգի, բուրժուական պետութեան ստրուկն են գառնում, նրանք ամեն օր, ամեն ժամ ստրկանում են մերենաներին, վերակացուներին, և ամենից առաջ առանձին-առանձին գործարանատէր բուրժուաներին: Այդ բռնսպետութիւնն այնքան աւելի փոքրոցի, զգւելի և գառնացուցիչ է, որբան աւելի է բացալայտում իրեւ նպատակ՝ շահի:

Որբան ձեռքի աշխատանքն աւելի քիչ ճկութիւնն և ոչ է պահանջում, ալտինքն՝ որբան աւելի է գարգանում արգի ինդուստրիա, այնքան աւելի աղածարդու աշխատանքի տեղը կտնանց աշխատանքն է բանում: Սեռի և հասակի տարրերութիւնները բանուոր գասակարգի համար այլու ոչ մի հասարակական նշանակութիւն չունեն: Նրանք առակ աշխատանքի մերենաներ են, որ բայ հասակի և սեռի տարրեր ծախս են նատում: Հենց որ բանուորի շահագործումը գործարանատիրոջ միջոցով այն տեղն է համար ծ, որ նա ստանում է իր կանխիկ համբած աշխատավարձը, իսկոյն և եթ վրայ է աալիս բուրժուագիտի միւս մասը՝ տանտէրը, խանութպանը, վաշխառուն և այլն:

Մինչալժմեան միջին դասը—մանր արդիւնագործողները, վահառականներն ու սանտիէները, արհեստաւորներն ու գիւղացիները—բոլոր այս գասակարգերը պրոլետարութեան մէջ են ընկնում, մասամբ նրանից, որ խոշոր ինդուստրիական արտադրութեան համար նրանց կապիտալիր չի հերիքում և աւելի խոշոր կապիտալիստների մրցանը չեն զիմանում, մասամբ նրանից, որ նրանց հմտութիւնը շնորհիւ արտադրական նոր եղանակների կորցնում է իր արժէքը: Այսպիսով՝ պրոլետարիատը գուանում է աղգարնակութեան բոլոր գասակարգերից:

Պրոլետարիատը զարգացման դանական աստիճաններ է անցնում: Նրա պալքարն ընդդէմ բուրժուատի սկսում է իր գոյութեան առաջին օրից:

Սկզբում՝ հաստիաց լրանորներ են ծառառում, ապա՝ որ և է գործարանի բանորդները միասին, ապա թէ աշխատանքի որ և է նիւղի բանորդները մի վայրում բնդդէմ ալս կամ այն բուրժուայի, որ նրանց անմիջապէս շահագործում է: Նրանք իրենց հարւածը ոչ միայն բուրժուական արտադրութիւն յարաբերութեանց գէմ են ուղղում, այլև արտադրութեան գործիքների գէմ: Նրանք ոչնչացնում են մրցող օտար ապրանքները, շարգում մեքենաները, հրդեհում գործարանները, Նրանք փորձ են անում մերստին հասնել միջնադարեան բանորդների խախուած վիճակին:

Այդ աստիճանի վրայ բանորդները—ցըւած են աշխարհիս երեսին և մրցման պատճառով իրարից անշատած գոնզւած են կազմում: Բանորդների մասսապական միաբանութիւնն էլ իրենց սեփական միռութեան հետևեանքը չի, այլ հետևեանք է բուրժուազիայի միացման, որ իր սեփական քաղաքական նպատակներին հասնելու համար հարկադրւած է լինում և երեմն կարողանում է ամրող պրոլետարիատը շարժման մէջ զնել: Աւ բեմն այդ աստիճանի վրայ պրայտարիատը ոչ թէ իր թշնամիների գէմ է մաքառում, այլ իր թշնամիների թշնամիների գէմ, արսոլիւտ միապետութեան մնացորդների, կալածատէրների, ոչ-ինդուստրիական բուրժուազիայի և մանր բուրժուազիայի գէմ: Այդպիսով ոչչ պատճական շարժումը բուրժուազիայի ծեռքում է կենտրոնում: Այդ եղանակով առած ամեն մի յաղթալնակ—բուրժուազիայի յաղթանակն է:

Սակայն ինդուստրիի գորգացման հետ պրոլետարիատը ոչ թէ սոսկ բաղմանում է: Նա բանի գնում աւելի խիս զանգւածներ է կազմում, անում է նրա ոլժր և նա այդ բանի բանի գնում աւելի է զգում: Քանի մեքենաներն աւելի են հարթում աշխատանքի պարմանների տարրերութիւնները և որբան աւելի է ամենուր նման ցած մակարգակի վրայ իշնում աշխատափարձր,— այնքան աւելի են պրոլետարների շահերն ու կենսական վիճակը միանման գառնում: Բուրժուանների աշող մրցումը իրար մէջ և զրանից տուաշ եկած առետրական հզնաժամները բանորդների աշխատափարձր շարունակ աւելի և աւելի անհաստատ են գարձնում: Մեքենաների շարունակ աւելի և աւելի արագ գարգացումն ու անընդհանուր կատարելագործումը բանորդների ապրուսոր գնալով աւելի և աւելի անապահով են գարձնում: Հատ ու կենա բանորդների և բուրժուանների միջև բնդհարումը բանի զնում աւելի է երկու գասակարգերի բաղխումի կերպարանք բնդունում: Բանորդներն սկսում են նրանից, որ միանում են բուրժուազիայի գէմ: Նրանք հանդէս են զալիս իրենց աշխատափարձն անկումից պաշտպանելու համար: Նրանք տնգամ տեսական բնկերութիւններ են հիմնում, որպէսզի հնարաւոր քանկումների պահուն նիւթագէս ապահովուած լինեն: Տեղ-տեղ պայքարը պորթկում է ապստամբութեան եղանակով:

Ժամանակ տու ժամանակ յաղթում են բանորդները, սակայն լոկ անցողակի: Նրանց պալքարի իրա-

կան հետեւնքը ոչ թէ, անմիջական աշողութիւնն է՝ այլ բանու որների միջաւ առ ելի լսդն ծառ արևող միութիւնք։ Խոշոր ինդուստրիի արտադրած հաղորդակցութեան միջոցների անումը գալիս է դանազան վայրերի բանու որներին շաղկապելու իրար։ Սակայն բուական է այդ կապը, որ բազմաթիւ տեղական, բայց ամենուր նման բնոլթ կրող պալքարները—աղգալին, գասակարգալին պալքար գառնան։ Սակայն ամեն մի գասակարգալին պալքար—բաղաքական պալքար է։ Եւ այն միութիւնք, որ միջնադարեան քաղաքացիները, սալուզիների տիրապետութեան շրջանում գարերի բնթացքում միայն գլուխ լերին, արդի պրոլետարիատը, երկաթուզիների միջոցով տարիների բնթացքում է գլուխ բերում։

Պրոլետարիատի այդ կազմակերպումն իբրև գասակարգի և գրա հետ նաև իբրև քաղաքական կուսակցութեան—իւրաքանչիւր ակնաթարթ պալթում է բանու որների միջև եղած ծրցման շնորհի։ Սակայն կազմակերպութիւնը նորից ու նորից տուած է զալիս, աւելի զօրանում, ամրանում, ուժգնանում։ Նա օրէնքի ձեռվ նանաչել է տալիս բանու որների մասնակի շահերը, օգտագործելով բութուալիալի ներքին պառակառումները։ Օրինակ՝ տասմանեան աշխատանքի օրէնքն Անդիայում։

Առհասարակ հին հասարակութեան ներքին բաղխումները յարախ նպաստում են պրոլետարիատի զարգացման բնթացքին։ Բութուալիան անընդհատ պալքարի մէջ է, սկզբում—ազնականութեան դէմ։

առ ելի ուշ բնոլթէմ նոյն բութուալիալի մի մասի որի շահերին հակատում է ինդուստրիի տաաշխաղացումը և մշտապէս—բնոլթէմ օտար երկիրների բութուալիալին։ Այդ բոլոր պալքարների միջոցին նա հարկադրուած է լինում դիմել պրոլետարիատին, նրա օկնութիւնը հայցել և գրանով նրան քաղաքական շարժմանը մասնակից անել։ Այդպիսով նա ինքն է իր սեփական կրթութեան տարրերը հաղորդում պրոլետարիատին, ալսինքն՝ զէնը տալիս ինքն իր զէմ։

Այնուհետև, ինչպէս մենք տեսանք, ինդուստրիի առաջխաղացու մն իշխող գասակարգի ամբողջ մասնեները նետում է պրոլետարիատի ծօցը կամ տուած սպասում նրանց ապրուստի պայմաններին։ Դրանք էլ են պրոլետարիատի մէջ կրթութեան բաղմաթիւ առրըեր մասնում։

Վերջապէս, երբ գասակարգալին պալքորը մերձենում է իր վճռական վայրկեանին, իշխող գասակարգի մէջ, ամրոց հին հասարակութեան մէջ, բարքայման պրոցեսոն այնպիսի տաստիկուուր բնոլթ է տաանում, որ տիրապետող գասակարգի մի փոքր մասն անշատուում է նրանից և միանում լեզափոխական գասակարգին, այն գասակարգին, որ իր մեռքին է կրում ապագան։ Եւ ինչպէս առաջներում աղեւականութեան մի մասը բաւրժուալիալի կօղմն անցաւ, այնպէս էլ այժմ բութուալիալի մի մասը պրոլետարիատի կողմն է անցնում, մանաւանդ բութուական վաղափարախոսների մի մասը, որ հասել է հասարակական ամրոց շարժման տեսական բժրոնու մին։

Բուրժուազիակի գէմ ալսօր դէմ առ դէմ կանգնած բոլոր գտահարգերից միմիան պրոլետարիատն է իրօք լեզափոխական գտահարգը: Մնացեալ գտահարգերը բավարարում են ու կարծանում ի խոշոր ինդուստրիից, պրոլետարիատը—հէնց սրա սեփական արագրութիւնն է:

Միջին գտահարգերը—մանր արգիւնագործողները, մանր առևտրականը, արհեստուորը, գիւղացին—բոլորն էլ մաքառում են րուրժուազիակի գէմ, որպէսզի իրենց զոյս թիւնը, իրը և միջին գտահարգերի—կործանումից ապահովեն: Առափ նրանք լեզափոխական չեն, այլ պահպանողական: Աւելին և նրանք ետաղիմականներ են, նրանք ու զում են պատմութեան անիւր ետ պատացնել: Եթէ նրանք լեզափոխական են—սպանց սպասող պրոլետարացման նկատումով, և այդ գէպքում նրանք ոչ թէ իրենց ներկայ, այլ ապագայ շահերն են պաշտպանում, նրանք թողնում են իրենց սեփական հայեցակեար, պրոլետարականի վրայ կանգնելու համար:

Լումպենպրոլետարիատը\*, հին հասարակութեան ամենախոնարհ խուերի կրաւորական նեխւածքը, շնորհի պրոլետարական լեզափոխութեան, տեղ-տեղ շպրտում է շարժման մէջ, թէև նրա կեանքի բոլոր պայմանները արամագրում են նրան աւելի շուտ վաճառւել ետաղիմականներին:

\* ) Լումպենպրոլետարիատը, լումպենպրոլետար—այս միւրացկանութիւն անող, պարագա-օաբագ մարդ, բասեակ, ցափիւն:

Հին հասարակութեան կեանքի պայմաններն այլ ևս պրոլետարիատի կենցազից չքացել են: Պրոլետարիատը—սեփականազուրկ է: Նրա լարաբերութիւնը, գէպի կինն ու երեխանները ոչնչով նման չեն բուրժուական ընտանեական լարաբերութեանց: Արդի ինդուարիական աշխատանքը, կապիտալի լուծը, Անդիայում նոյնն է, ինչ որ Թրանսիպում, Ամերիկայում նոյնը, ինչ Գերմանիայում, և բանս որների բոլոր ազգացին գծերը չնշում են: Օրէնքները, բարոլականութիւնը, կրօնը նրա համար նոյնն են, ինչ որ բազմաթիւ բուրժուական նախապաշարմունքներ, որոնց եակը նոյնչափ բազմաթիւ բուրժուական շահեր, են թագնւած:

Առաջներքում բոլոր գտահարգերը, որ տիրապետութիւն էին նւանում, աշխատու ծ էին իրենց գրաւած կենսական գիրքը ապահովել, միաժամանակ ողջ հասարակութիւնը ենթարկում էին իրենց շահելու պարմաններին: Պրոլետարները կարող են հասարակական արտազիր ուժեր նւանել միման միաժամանակ մերացնելով իրենց սեփական մինչ այդ շահելու հզննակը: Պրոլետարներն ապահովելու բան չունեն, նրանք գալիս են վշրելու մինչայժմեան մասնաւոր ապահովութիւնն ու մասնաւոր ապահովումը:

Մինչայժմեան բոլոր շարժումները—վարքամասնութեանց շարժումներ են եղել կամ լոգուտ փոքրամասնութեանց: Պրոլետարական շարժումը վիթխարի մեծամասնութեան ինքնորոշն շարժումն է, յօցուտ վիթխարի մեծամասնութեան: Պրոլետարիատը,

արդի հասարակութեան ամենաներքին շերտը, ինքն իրեն չէ կարող բարձրացնել, դգել, առանց օգը յնդեցնելու պաշտօնական հասարակութիւն կազմող վերին շերտը, վերնադարկը:

Պրոլետարիատի պալքարը բուրժու ազիակի գէծ թէեւ ոչ բառ բովանդակութեան, բառ ձեի, նախ և առաջ ազգային պալքար է: Եւրաքանչիւր երկրի պրոլետարիատ բնականաբար, նախ իր սեփական բուրժու ազիակի համարը պիտի դար:

Նկարերով պրոլետարիատի զարգացման ամենաընդհանուր փուլերը՝ մէնք հետեցինք գոյութիւն ունեցող հասարակութեան մէջ աւել կամ պակաս թաղնած քաղաքական կուլին մինչեւ այն կէտը, երբ բացախտ չեղափոխութիւն է բռնկում և բուրժու ազիակի վրայ ուժգնորեն գրոհ տալով պրոլետարիատն իր տիրապետութիւնն է հաստատում:

Բոլոր մինչայժմեան հասարակութիւնները, ինչ պէս մենք անսանք, ճնշած և ճնշող գտասկարդերի ներհակութեան վրայ են հիմն ած եղել: Սակայն որպէսզի հնարաւոր լինի մի գասակարդ ճնշելու, պէտք է որ ապահոված լինեն այն պարմանները, որոց մէջ այդ գասակարդն առնւազն իր սորկական գոյութիւնը կարողանայ քաշ տար:

Ճորատիրութեան պահուն նորուից կարող էր կոմմոնի անգամ գուրս գալ, ինչպէս քաղքենիներից—բուրժուատ-աւտատ-աբսոլիւտական լծի տակ: Բնդհական արդի բանորոր, ինդուստրիի առաջխագացման հետ, փոխանակ բարձրանալու շարունակ իր գասա-

կարգի գոյութեան պայմաններից յաժ է իջնում: Բանորը—մուրացկան է դառնում և աղքատութիւնն աղջարնակութիւնից ու հարստութիւնից աւելի արագ է անում: Այսպիսով բացայատ է դառնում, որ բուրժուազիան այլևս անընդունակ է երկար ժամանակ հասարակութեան տիրապետող դասակարդը մնալու և իր դասակարգի կենսական պայմանները փաթաթելու հասարակութեան վղին, իբրև զեկավար օրէնք: Նա անընդունակ է իշխելու, որովհետեւ անընդունակ է իր ստրուկներին անգամ ստրկական գոյութիւն ապահովելու, որովհետեւ հարկադրւած է նրանց աղնակի գրութեան հասցնելու, որ ի՞նքը պիտի նրանց կերակրի, փոխանակ նրանց միջոցով կերակրւելու: Հասարակութիւնն այլևս չի կարող նրա տիրապետութեան ներքոյ ապրել, այսինքն՝ նրա կեանքը հասարակութեան կեանքի հետ այլևս դաշնակւել չի կարող: Բուրժուազիայի գոյութեան և տիրապետութեան ամենակական պայմանն է՝ հարստութեան հաւաքումը մասնաւոր ծեռքերում, կասպիտալի գոյացումն ու բազմացումը: Կապիտալի պայմանը—վարձու աշխատանքը է: Վարձու աշխատանքը բացառապէս հիմնւած է բանւորների փոխադարձ մրցման վրայ: Ինդուստրիի առաջադիմութիւնը, որի հլու և կամաղուրկ կրողը բուրժուազիան է, մրցումով իրարից զատւած բանւորների տեղը—միութիւնների միջոցով շաղկապւած բանւորների չեղափսխական կաղմակերպութիւններ է գնում: Այսպիսով՝ խոշոր ինդուստրիի զարգացման հետ, բուրժուազիայի ոտերի

տակից դուրս է դալիս այն հողը, որի վրայ նա արտադրում է և իւրայնում պրոգռաւկտները։ Նա նախ և առաջ իր սեփական գերեզմանափորներին է արտադրում։ Նրա կործանումը և պրոլետարիատի յաղթանակը—հաւասարաչափ անխուսափելի են։

## II.

## ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ՈՒ ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐ

Ի՞նչ դիրք էն բռնում կոմմունիստները գէպի պրոլետարիատն ընդհանրապէս։

Կոմմունիստները մի առանձին կուսակցութիւն չեն կաղմում բանտորական այլ կուսակցութեանց հանդէպ։

Նրանք բովանդակ պրոլետարիատի շահերից զատ շահեր չունեն։

Նրանք չեն առաջադրում ուրոյն սկզբունքներ, որոնց համեմատ կամենալին կաղապարել բանւ որական շարժումը։

Կոմմունիստները նրանով են տարրերում այլ պրոլետարական կուսակցութիւններից, որ մի կողմից՝ պրոլետարների պէս պէս ազգային պալքարների միշոյին նրանք բովանդակ պրոլետարիատի ընդհանուր, աղջութիւնից անկախ շահերն են առաջ քաշում ու պաշտպանում, միւս կողմից՝ զարդացման զանազան տարինաների վրայ, որոնցով ընթանում է պալքարը պրոլետարիատի և բուրժուազիալի միշե, նրանք միշտ շարժման ամբողջական շահերն են ներկայացնում։

Հետեւարար կոմմունիստները գործնականօրէն բոլոր երկների բանտորական կուսակցութեանց ամենավճռական, շարունակ առաջ ծգտող մասն են։ Պրալետարիատի մնացեալ զանգւածի հանդէպ նրանց առուելութիւնն այն է, որ տեսականօրէն ըմբռնում են պրոլետարական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր հետեւանքները։

Կոմմունիստների մերժագոյն նպատակը նոյնն է ինչ որ բոլոր մնացեալ պրոլետարիատն կուսակցութիւններինը—պրոլետարիատի կազմակերպումն իրենց գասակարգի, բարժուական տիրապետութեան խորտակումը, բարաքական իշխանութեան նւանումը պրոլետարիատի միջոցով։

Կոմմունիստների տեսական դրութիւնները բնաւչեն հիմնուում այս կամ այն տշխարհս բարելաւողի հնարած կամ յայտնազործած գտղավիարների, սկզբունքների վրայ։

Գոյութիւն ունեցող դասակարգային պալքարի փաստացի յարաբերութեանց, մեր աչքի առջև կատարող պատմական շարժման լոկ ընդհանուր արտադառնութիւնն են նրանք։ Մինչայժմեան սեփականանատիրական յարաբերութեանց վերացումը կոմմունիզմի համար յատկապէս բնորոշ բան չէ։

Բոլոր սեփականանատիրական յարաբերութիւնները ենթարկել են մշտական պատմական փոփոխման, մշտական պատմական այլակերպման։

Ֆրանսիական յեղափոխութիւնն, օրինակ, վերացքը աւատական սեփականութիւնը յօդուա բուրժուականի։

Կոմմունիստների համար բնորոշն ընդհանրապէս սեփականութեան վերացումը չի, այլ բուրժուական սեփականութեան վերացումը:

Սակայն արդի բուրժուական մասնաւոր սեփականութիւնը վերջին և ամենակատարեալ արտայատութիւնն է պլոդուկտների արտադրութեան և խրացման այն եղանակի, որ հիմնւած է դասակարգային ներհակութեան վրայ, եթք ոմանք շահագործում են միւսներին:

Այդ առումով կոմմունիստներն իրենց տեսութիւնը կարող են ամփոփել մի արտայտութեան մէջ՝ մասնաւոր սեփականութեան վերացում:

Կոմմունիստներիս վրայ մեղադրանք են բարդում, իբր թէ մենք ուզում ենք անձամբ վաստակած, սեփական աշխատանքով ծեռք բերւած սեփականութիւնը վերացնել, այն սեփականութիւնը, որ ամեն անհատական աղատութեան, գործունեութեան և անկախութեան հիմքն է:

Աշխատած, վաստակած, անձամբ շահամծ սեփականութիւն: Մանք բուրժուաների, մանք դիւղացիների, սեփականութիւնից էք խօսում դուք, որ նախորդել է բուրժուական սեփականութեան: Հարկ չկայ, որ մենք վերացնենք, քանի որ ինդուստրիի դարդացումն է վերացրել և օրստօրէ վերացնում այն:

Գուցէ թէ արդի բուրժուաների՝ մասնաւոր սեփականութիւնից էք խօսում դուք:

Սակայն արդեօք նրանց համար սեփականութիւն է ստեղծում վարձու աշխատանքը, պրոլետարիատի աշխատանքը:

Երբէք: Նա կապիտալ է ստեղծում, արքինքն սեփականութիւն, որ շահագործում է վարձու աշխատանքը, որ կարող է, անել, պայմանով, որ նոր վարձու աշխատանք արտադրի, նորից նրան շահագործելու համար: Սեփականութիւնն իր այսօրւայ կերպարանքով կապիտալի և վարձու աշխատանքի ներհակութեան մէջ է շարժուում: Զննենք, ուրեմն, այդ ներհակութեան երկու կողմն էլ:

Կապիտալիստ լինել, կնշանակի արտագրութեան մէջ ո՛չ միայն զուտ անհատական, այլև հասարակական դիրք զրաւել: Կապիտալլ հաւաքական արտագրութիւն է և կարող է շաբժմտն մէջ լինել միմիան բազմաթիւ անդամների գործակցութեամբ, թերևս վերջ ի վերջով հասարակութեան բոլոր անդամների միասնական գործունեութեամբ:

Ուրեմն կապիտալլ ոչ թէ անհատական, այլ հասարակական ոլժ է:

Հետեաբար, երբ որ կապիտալլ կերպարանափոխւի, հաւաքական, հասարակութեան բոլոր անդամներին պատկան սեփականութիւն դառնայ, զրանից անհատական սեփականութիւնը—հասարակական չի դառնայ: Սեփականութիւնը կփոխի լոկ իր հասարակական բնոյթը: Նա կկորցնի իր դասակարգալին բնաւորութիւնը:

Դառնանք վարձու աշխատանքին:

Վարձու աշխատանքի միջին գինը—աշխատավարձի մինիմումն է, այսինքն՝ կենսական միջոցների գումարը, որ անհրաժեշտ է, որպէսզի բանւորն, իբրև

բանւոր, կարողանալ իր կեանքը պահպանել: Հետեւարար բանւորի իր գործունէութեամբ սեփականածը հերիք է լոկ իր մերկ կեանքը վերաբաղբելու համար: Մենք բնաւ չենք կամենում վերացնել աշխատանքի պրոդուկտների այս անհատական սեփականացումը՝ կեանք պահպանելու և վերաբաղբելու համար. այդ սեփականացումը ոչինչ զուտ արդիւնք չի բերում, որ օտարի աշխատանքին տիրանալու հնարաւութիւն տար: Մենք լոկ կամենում ենք վերացնել այդ սեփականութեան թշւառանական բնոյթը, ըստ որում բանւորն ապրում է կապիտալը բազմապատկելու համար և ապրում է այնքան ժամանակ, որքան պահանջում է տիրող գասակարդի շահը:

Բուրժուական հասարակութեան մէջ կենդանի աշխատանքը—դանձած աշխատանք բազմապատկելու միջոց է լոկ: Կոմմունիստական հասարակութեան մէջ—դանձած աշխատանքը սոսկ մի միջոց է բանւորների կեանքն ընդլայնելու, հարստացնելու, նրա առաջադիմութեանը դարձ տալու:

Բուրժուական հասարակութեան մէջ, այդպիսով, անցե՛ալն է իշխում ներկայի վրայ, կոմմունիստականում—ներկա՞ն անցեալի վրար: Բուրժուական հասարակութեան մէջ կապիտալն է անկախ և անհատական, մինչդեռ գործունեալ անհատը կախման մէջ է և զիմաղուրկ:

Եւ ահա այդ յարաբերութեան վերացումը բուրժուազիան անհատականութեան և աղատութեան վերացում է անուանում: Արդարեւ, խօսքը յամենայն

դէպս բուրժուական անհատականութեան, անկախութեան և աղատութեան վերացման մասին է:

Աղատութիւն ասածդ, հիմիկւայ բուրժուական արտադրութեան յարաբերութեանց մէջ, հասկանում են իբրև աղատ առետուր, գնելու և վաճառելու աղատութիւն:

Սակայն չարչիութեան անկման դէպքում, աղատ չարչիութիւնն էլ կընկնի: Գեղեցիկ հառերը չարչիութեան աղատութեան մասին, ինչպէս մեր բուրժուականի բոլոր ուրիշ աղատադրական ճոռոմաբանութիւնները, ընդհանրապէս իմաստ ունեն, երբ ուղղւած են միջնադրեան քաղաքացիների սարկացման դէմ և ոչ թէ չարչիութեան, ուղղւած են ընդդէմ կաշկանդւած չարչիութեան, բուրժուական արտադրութեան յարաբերութեանց և իր իսկ բուրժուազիաի կոմմունիստական վերացումի դէմ:

Դուք սարսափում էք նրանից, որ մենք կամենում ենք մասնաւոր սեփականութիւնը վերացնել: Սակայն ծեր հասարակութեան մէջ մասնաւոր սեփականութիւնն անդամների իննը տասներորդականի համար վերացած է: Եւ մասնաւոր սեփականութիւնը գոյութիւն ունի հէնց այն պատճառով, որ հասարակութեան իննը տասներորդականի համար գոյութիւն չունի: Այսպիսով մեղադրում էք մեզ, թէ մենք ուղում ենք սեփականութեան մի ծեւ վերացնել, որ կարող է գոյութիւն ունենալ միմիայն հասարակութեան ճնշող մեծամասնութեան սեփականաղուրկ լինելու անհրաժեշտ նախապայմանով:

Մի խօսքով, դուք մեղ մեղազրում էք, թէ մենք  
ուզում ենք մեր սեփականութիւնը վերցնել։ Անշուշտ  
մե՞ք այդ կամենում ենք։

Այն վարկեանից, երբ աշխատանք այլևս չի վե-  
րածւի կապիտալի, փողի, հողային ռենթի, կարճ մե-  
նաշնորհ դառնալիք հասարակական ոյժի, այսինքն՝  
այն վայրկեանից, երբ անձնական սեփականութիւնն  
այլևս անկարելի կինի բուրժուականի կերպարանա-  
փոխել, այն վայրկեանից, յարտարարում էք դուք,  
անձնաւորութիւնն էլ կվերանայ։

Ուրեմն դուք խօստովանում էք, որ անձնաւո-  
րութիւն ասելով դուք ուրիշ ոչ ոք չէք բմբռնում,  
այլ եթէ բուրժուա, բուրժուական սեփականատէր։  
Այդ անձնաւորութիւնն էլ, անտարակոյս, պիտի վե-  
րանա։

Կոմմունիզմը հասարակական պրոլուկաները սե-  
փականելու կարողութիւնից ոչ ոքի չի զրկում, նա  
լոկ սեփականացման միջոցով ուրիշի աշխատանքը լծի  
տակ դնելու կարողութիւնից է զրկում։

Առարկում են՝ թէ մասնաւոր սեփականութեան  
վերացումով կվերանայ ամեն մի գործունեութիւն և  
համատարած ծուլութիւն կհաստատի։

Որ այդպէս լինէր, բուրժուական հասարակու-  
թիւնը վազուց հետէ կործանւած կլինէր հեղգու-  
թիւնից, որովհետեւ նրանք, որոնք աշխատում են այդ  
հասարակութեան մէջ, բան չեն վաստակում, և ով-  
քէր որ վաստակում են, չեն աշխատում։ Այս ամբողջ  
տարակուսանքը մի նոյնասութիւնից է բղխում. հէնց

որ վարձու աշխատանք չլինի — կապիտալ էլ չի լինի։  
Բոլոր առարկութիւնները, որ ուզզում են նիւ-  
թական պրոդուկտների սեփականացման և արտա-  
դրութեան եղանակի դէմ, տարածւում են նմանապէս  
հոգեոր արդասիքների սեփականացման և արտադրու-  
թեան վրայ։ Ինչպէս դասակարգային սեփականու-  
թեան վերացումը բուրժուաների համար հէնց ար-  
տադրութեան վերացում է նշանակում, այնպէս էլ  
դասակարգային կրթութեան վերացումը — ընդհանրա-  
պէս կրթութեան վերացում է թւում նրանց։

Կրթութիւնը, որի կորստեան համար նրանք ցա-  
ւում են, ազգաբնակութեան ահապէին մեծամասնու-  
թեան համար մերենայացում է նշանակում։

Էլ միք վիճի մեղ հետ, քանի որ բուրժուական  
սեփականութեան վերացումը դուք գնահատում էք  
ազատութեան, կրթութեան, իրաւունքի մասին ծեր  
ունեցած պատկերացումներով։ Զեր գաղափարները  
հէնց արտադրութեան և սեփականատիրութեան բուր-  
ժուական յարաբերութեանց արդիւնք են, նիշտ այն-  
պէս, ինչպէս ծեր իրաւունքը ծեր դասակարգի օրէնք  
գարձած կամքն է, մի կամք, որի բովանդակութիւնը  
ծեր դասակարգի կեանքի նիւթական սլայմանների  
մէջ է արւած։

Այն աչառու պատկերացումը, ըստ որում դուք  
ծեր արտադրութեան և սեփականատիրական յարա-  
բերութիւններից բնութեան ու բանականութեան  
մշտնչենաւոր օրէնք էք գարձնում-յատուկ է բոլոր  
խորտակած իշխող դասակարգերին։ Այն, ինչ հաս-

կանալի է ծեղ հնապարեան սեփականութեան, աւատական սեփականութեան նկատմամբ, դուք չեք կամենում ըմբռնել բուրժուական սեփականութեան վերաբերմամբ:

Ընաանիքի վերացում: Ամենարմատականերն անդամ վրդովում են կոմմունիսաների այս խայտաւակ մտադրութիւնից:

Սակայն ինչի՞ վրայ է հիմնւում արդի բուրժուական ընտանիքը: Կապիտալի, մասնաւոր շահի վրայ: Լիակատար զարդացած ծեռով այդ ընտանիքը գոյութիւն ունի սոսկ բուրժուազիայի համար: Սակայն բուրժուական ընտանիքի լրացումը պրոլետարիատի հարկադրւած ամուրիութիւնն է և հրապարակալին պոռնիութիւնը:

Բուրժուական ընտանիքը ընականաբար կանհետանայ նրա այս լրացումների անհետացումով և երկուսն էլ կանհետանան կապիտալի անհետացման հետ:

Մեղադրում էր դուք մեղ, որ մենք ուղում ենք վերացնել մանուկների շահագործումն իրենց ծնողների միջոցով: Մենք մեր այդ յանցանքը խոստովանում ենք:

Սակայն, մեր ասելով, մենք վերացնում ենք ամենաքնքոյց յարաբերութիւնները, երբ անալին դաստիարակութեան աեղը—հասարակականն ենք դնում:

Միթէ ծեր դաստիարակութիւնը նոյնպէս հասարակութիւնը չի որոշում: Հասարակական այն յարաբերութիւնների միջոցով, որոնց մէջ դուք դաստիարակում էր, հասարակութեան ուղղակի և ան-

ուղղակի միջամտութեամբ, դպրոցի միջոցով և այն: Կոմմունիստները չեն հնարուծ հասարակութեան ներգոծութիւնը դաստիարակութեան մէջ: Նրանք միայն փոփոխում են այդ ներդորձութեան բնոյթը. Նրանք պոկում են դաստիարակութեան գործը տիրող դասակարգի աղջեցութիւնից:

Բուրժուական նոռոմբանութիւնն ընտանիքի մասին և դաստիարակութեան, ծնողների և զաւակների քնքոյց յարաբերութեանց մասին աւելի են զդելի դառնում, որքան խոշոր ինդուստրիի շնորհիւ պրոլետարների համար բոլոր ընտանեկան կապերը քակւում են, և նրանց զաւակների առևտորի հասարակ առարկաների և աշխատանքի գործիքների են վերածւում:

Սակայն դուք, կոմմունիստներդ, համայնակնութիւն էր ուղում մացնել, աղաղակում է միաբերան ողջ բուրժուազիան:

Բուրժուան իր կնոջը նկատում է իբրև արտադրութեան սոսկ գործիք: Նա լսում է, որ արտադրութեան գործիքները պիտի համայնօրէն շահագործւեն և բնականաբար չի կարող այլ միաք անել, քան համայնացման վիճակը նաև կանանց է վերաբերելու:

Նրա մաքովը չի անցնում, թէ բանն էլ հէնց այն է, որ կնոջ գիրքը, իբրև արտադրութեան սոսկ — գործիքի, վերանար:

Ասէնք, աւելի ծիծաղելի բան չկայ, քան մեր բուրժուաների բարձր բարոյական սարսափը կամմու-

նիստների կարծեցեալ կանանց համայնացումի առկթիով կոմմունիստները կարիք չունին կանանց համայնացում մտցնելու, նա համարեա թէ միշտ դոյութիւն է ունեցել:

Մեր բուրժուաները, քաւականանալով նրանով, որ նրանց արամաղրութեան ներքոյ են իրենց պրոլետարների կանացը ու աղջիկները, էլ չխօսենք պաշտօնական պոռնկութեան մասին, մեծ բաւականութիւն են գտնում իրենց ամուսիններին փոխադարձաբար գայթաղեցնելու մէջ:

Բուրժուական ամուսնութիւնն իրօք—համայնակնութիւն է: Ամենաշատը՝ կարելի էր կոմմունիստներին մեղաղրել, որ կեղծաւոր քօզարկած համայնակնութեան տեղը—բայց համայնակնութիւն են ուղում մտցնել: Թէև ինքնին հասկանալի է, որ հիմիկւայ արտադրական յարաբերութեանց վերացումով, կանհետանայ նաև նրանցից բյիսող համայնականութիւնը, այսինքն՝ պաշտօնական և ոչ պաշտօնական պոռնկութիւնը:

Ապա՝ կոմմունիստներին մեղաղրում են, իրր թէ նրանք ուղում են վերացնել հայրենիքը, աղդութիւնը:

Բանւորները հայրենիք չունեն: Զի կարելի նրանցիդ խել այն, ինչ որ նրանք չունեն: Քանի որ պրոլետարիատը հարկադրւած է նախ բաղաքական իշխանութիւն նւաճելու, բարձրացնելու իր դլուխը, որպէս աղդապին դասակարդ, կազմակերպելու ինքնիրեն, իբրև աղդ—նա տակաւին աղդալին է, թէև ոչ մի դէպքում բուրժուական իմաստով:

Արդէն բուրժուաղիալի զարդացման հետ, առեարի աղատութեան, համաշխարհապին շուկալի, ինդուստրիական արտադրութեան միակերպութեան և նրան համապատասխան կենսական յարաբերութեանց հետ քանի դնում աւելի է անհետանում աղդալին մեկուսացումը և ներհակութիւնը ժողովութղների միջեւ:

Պրոլետարիատի տիրապետութիւնն աւելի ևս անհետացնել կտայ նրանց: Նրա աղատադրման առաջնագոյն պայմաններից մէկն է, առնւազն բաղաքակիրթ երկիրների պրոլետարիատի միահամուռ դորձակցութիւնը:

Ինչ չափով, կվերանայ մի անհատի շահագործումը միւսի միջոցով—կվերանայ նաև մի աղդի շահագործումը միւսի միջոցով:

Դասակարգերի ներհակութեան անկման հետ մի աղդութեան մէջ—կվերանայ նաև աղդերի թշնամական դիրքը իրար դէմ:

Կրօնական, վիկիսովոյական և ընդհանրապէս գաղափարաբանական տեսակէտից կոմմունիզմի դէմ յարուցած մեղաղրանքները չարժեն մանրամասն քընութեան:

Միթէ խոր միտք է հարկաւ որ ըմբռնելու համար, որ մարդկանց կենսական պայմանների հետ, նրանց հասարակական յարաբերութեանց հետ, նրանց հասարակական դոյութեան հետ փոխուում են նաև նրանց մտապատճերները, հայեացքները և հասկացութիւնները, մի խօսքով նրանց ողջ դիտակցութիւնը:

Գաղափարների պատմութիւնն ի՞նչ է ապացուցանում, եթէ ոչ այն, թէ հոգևոր արտադրութիւնը կերպարանափոխուում է նիւթականի հետ: Որ և է ժամանակի իշխող գաղափարները միշտ տիրապետող դասակարգի գաղափարներն են եղել:

Սուում են կան գաղափարներ, որ մի ամբողջ հասարակութիւն են յեղափոխում: Դրանով լոկ այն փաստն են արտայտում, թէ հին հասարակութեան մէջ նոր տարրեր են գոյացել, որ կենսական հին յարաբերութեանց լուծմանը քայլ առ քայլ հին գաղափարների լուծումն է հետեւում:

Երբ որ հին աշխարհը մօտ էր կործանման, բրիստոնէական կրօնը յաղթեց հին կրօնները: Երբ որ 18. բորդ դարում լուսաւորութեան գաղափարները վանեցին քրիստոնէական գաղափարը-աւատական հասարակութիւնն իր օրհասակտն մահու պալքարն էր մզում այն ատեն յեղափոխական բուրժուազի դէմ: Խղճի և գաւանութեան աղատութեան գաղափարներն արտայտում են սոսկ աղատ մրցումի տիրապետութիւնը դիտութեան ասպարիզում:

«Սակայն կրօնական, բարոյական, փիլիսոփայական, քաղաքական, իրաւական և այլ գաղափարները, — կասեն մեղ, — նիշտ է, փոփոխութեան են ենթարկում պատմական զարդացման ընթացքում, բայց կրօնը, բարոյականութիւնը, փիլիսոփայութիւնը, քաղաքականութիւնը, իրաւունքը միշտ այդ փոփոխութեանց մէջ պահպանւել են:

«Բայցի այդ յաւերժական նշմարտութիւններ

կան, ինչպէս՝ աղատութիւնը, արդարութիւնը և ալլն, որ ընդհանուր են պատմական բոլոր փինակներին: Իսկ կոմմունիզմը, կերպարանափոխելու փոխարէն վերացնում է յաւիտենական նշմարտութիւնները, վերացնում է կրօնը, բարոյականութիւնը և այդպիսով հակասում մինչայժմեան պատմական իրադարձութեանը»:

Ինչի՞ է յանդում այդ մեղադրանքը: Մինչայժմեան հասարակութեան ողջ պատմութիւնը շարժւել է գասակարգային ներհակութեանց մէջ, որ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր կերպարանը են ունեցել:

Սակայն ի՞նչ ձեւ էլ որ ընդունել է, հասարակութեան մի մասի շահագործումը միւսի միջոցով բոլոր անցած դարերի համար—ընդհանուր փաստ է: Ուստի և զարմանալի չէ, որ բոլոր դարերի հասարակական գիտակցութիւնը, չնայած բազմապիսութեան և զանազանութեանց շարժւել է որոշ ընդհանուր ձեւով, գիտակցութեան այն ձեւի մէջ, որ վերջնականապէս կվերանայ միայն գասակարգայի ներհակութեան լիակատար վերացումով:

Կոմմունիստական յեղափոխութիւնն ամենաարմատական կերպով պիտի խպի սեփականատիրական աւանդական յարաբերութեանց հետ եղած կապերը: Զարմանալի չէ, որ նրա զարդացման ընթացքում ամենաարմատական կերպով պիտի քակւեն աւանդական գաղափարների կապերը:

Սակայն թողնենք բուրժուազիայի կոմմունիզմի դէմ արած առարկութիւնները:

Մենք արդէն վերը տեսանք, որ բանւորական յեղափոխութեան առաջին քայլը—պրոլետարիատին բործոցնելը, իշխող դասակարգի հասցնելը—դեմոկրատի նւաճումն է:

Պրոլետարիատն իր բաղաքական իշխանութիւնը կօգտագործի աստիճանաբար բուրժուազիալից նրա ողջ կապիտալը խլելու, արտադրական բոլոր գործիքները պետութեան ձեռքում, այսինքն՝ իշխող դասակարգ դառած, կազմակերպւած պրոլետարիատի ձեռքում, կենտրոնացնելու և արտադիր ուժերն ըստ կարելոյն արագ կերպով բազմապատկելու համար:

Սկզբում դա, բնականաբար, կարող է տեղի ունենալ միմիայն բռնի միջամտութեամբ սեփականատիրական իրաւունքի և արտադրութեան բուրժուական յարաբերութեանց մէջ, հետեւաբար անպիսի միջոցներով, որ անտեսապէս անբաւարար և խախուտ կիթւան և որ սակայն շարժման ընթացքում իրենք իրենց յաղթահարելով՝ անխուսափելիօրէն ողջ արտադրական եղանակի յեղաշրջման միջոց են դառնալու:

Այդ միջոցները, ի հարկէ, տարբեր երկիրներում —տարբեր են լինելու:

Այնու հանդերձ, ամենաառաջադէմ երկիրներում զրեթէ ամենուրեք կարող են կիրարկւել հետեւալ միջոցները:

1) Հողային սեփականութեան էքսպրոպրեացիա և նողային ռենժի գործադրութիւնը պետական ծախսների վրայ:

2) Ուժեղ պրոդեսսիվ հարկեր:

- 3) Ժառանգային իրաւունքի վերացում:
- 4) Բոլոր էմիգրանտների և ըմբռուտների սեփականութեան գրաւումը:

5) Վարկի կենտրոնացում պետութեան ձեռքում, պետական կապիտալ և բացառիկ մենաշնորհ ունեցող ազգային բանկի միջոցով:

6) Փոխադրութեան գործի կենտրոնացում պետութեան ձեռքում:

7) Պետական գործարանների, արտադրութեան գործիքների բազմապատկում, հողի մշակում և բարեկաւում ընդհանուր ծրագրով:

8) Տաւասարապէս պարտադիր աշխատանք բոլորի համար: Ինդուստրիական դրաբանակի կազմակերպում, մանաւանդ երկրագործութեան համար:

9) Գիւղատնտեսութեան և ինդուստրիի բնադաւառների միացում: Նպաստում բաղաքի և գիւղի տարբերութեան աստիճանական վերացման:

10) Բոլոր մանուկների հասարակական և ծրի կրթութիւն: Մանուկների գործարանային աշխատանքի այսօրւայ ձեփի վերացում: Կրթութեան և նյութական արտադրութեան միացում և այլն:

Հենց որ զարգացման ընթացքում անհետանան դասակարգային տարբերութիւնները և բոլոր արտադրութիւնները կենտրոնանան համախրւած անհատների ձեռքում—հասարակական իշխանութիւնը կը կորցնի իր բաղաքական բնովթը: Քաղաքական իշխանութիւնը, բուն իմաստով, մի դասակարգի կազմա-

կերպւած իշխանութիւն է միւսին ննշելու համար։ Երբ որ պրոլետարիատը բուրժուազիայի դէմ վարած պալքարի ընթացքում անհրաժեշտաբար միանալ, որպէս դասակարգ, լեղափոխութեան միջոցով տիրապետող դասակարգ, բռնի կերպով վերացնի արտադրութեան հին յարաբերութիւնները, արտադրութեան այդ յարաբերութեանց հետ կիբրանան նաև դասակարգային ներհակութեան դոյսութեան պայմանները, ընդհանրապէս դասակարգերը և դրանով նաև իր սեփական տիրապետութիւնը, իրըև դասակարգի։

Հին բուրժուական հասարակութեան տեղը, իր դասակարգերով և դասակարգային ներհակութեամբ, կրոնի մի միութիւն, որի մէջ իւրաքանչիւք ոքի ազատ զարդացումը պայման կինի բոլորի՝ ազատ զարդացմանը։

### III.

#### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՒԿՈՄՄՈՒԽԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԻԹԻՒՆ.

##### I) ԵՑՍԴԻՄՄԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

###### ա) Աւատական սոցիալիզմ

Ֆրանսիական և անգլիական ազնւականութիւնը, իր պատմական զիրքով կոչւած էր արդի բուրժուազիայի դէմ պանֆլետներ (պարսաւագիր) գրելու։ Ֆրանսիական 1830 թւի լուլիսեան յեղափոխութեան միջոցին և անգլիական վերանորոգչական շար-

ժման ժամանակ նա իր ատելի նորելուկ-հակառակորդից մի նոր չարդ էլ կրեց։ Որ և է լուրջ քաղաքական պալքարի մասին խօսք լինել այլեւ չէր կարող։ Մնացել էր սոսկ զբական պալքարը։ Սակայն դրական ասպարիզում էլ ռեստավրացիայի շրջանի ոճաբանութիւնն անհնար էր դտուել։ Համակրութիւն զրաւելու համար ազնւականութիւնը հարկադրւած էր իր շահերն աչքախող անելու ձեւ անել և իր մեղադրակոն թուղթը բուրժուազիայի դէմ բանաձեւել լոկ շահագործւող բանւոր դասակարգի շահերի տեսակետից։ Նա իր նոր տէրերի վրայ պարսաւախազեր էր երգում, աւել կամ պակաս բօթարեր մարդարէութիւններ շշնչում նրա ականջին և դրանով մխիթարւում։

Այդպէս է աւատական սոցիալիզմի ծագումը—կէս—ողբ, կէս—պասկւիլ (ծաղրագիր) կէս—անցեալի արծագանք, կէս—գալիթ սպառնանք։ Երբեմն դտուր, սրածիտ, կծու դատողութիւններով բուրժուազիայի սէրտը դաղելով, աղնւականութիւնն արդի պայմանութեան ընթացքն ըմբռնելու իր կատարեալ անկարողութեամբ միշտ զաւէշտական տպաւորութիւն է գործել։

Ազնւականները թափահարում էին պրոլետարական մուրացկանի տոպլրակը, որպէս գրօշակ, իրենց ետելից ժողովուրդ հաւաքելու համար։ Սակայն ամեն անդամ նրանց հետեւելիս՝ ժողովուրդը նրանց մէջքին հին աւատական տոհմանիշներ է նկատել և բարձրածայն ու անպատկառ հոհոսցով լքել նրանց։

Ֆրանսիական լեզիտիմիսաների մի մասը և երիտասարդ Անգլիան ամենից լաւ են ներկայացրել այդ խաղը:

Երբ որ աւատահերերն ապացուցանում են, թէ իրենց շահագործումն այլ կերպ է եղել, քան բուրժուականը, նրանք փոքր ինչ մոռանում են, որ իրենց շահագործելիս են եղել միանդամալին տարբեր և հիմի անհետացած պայմաններում ու պարագաներում: Երբ որ նրանք մատնանիշ են անում, թէ իրենց իշխանութեան ներոյ արդի պրոլետարիատը դոյութիւն չի ունեցել փոքր ինչ մոռանում են, որ արդի բուրժուազիան հէնց նրանց հասարակարդի անհրաժեշտ ծնունդն է:

Ասենք, նրանք այնքան քիչ են թաղցնում իրենց քննադատութեան ետաղիմական բնոյթը, որ բուրժուազիայի դէմ մղած նրանց մեղադրանը հէնց այն է, թէ բուրժուազիայի աիրավետութեան ներքոյ մի քասակարդ է ղարգացել, որ ողջ հին հասարակարդը օդն է ցնդացնելու:

Նրանք բուրժուազիային աւելի են յանդիմանում յեղափոխական պրոլետարիատ արտադրելու համար, քան առհասարակ պրոլետարիատ առաջ բերելու համար:

Դրանից է, որ գործնական քաղաքականութեան մէջ նրանք մասնակցում են բանոր գասակարդի դէմ ուղղած բոլոր բռնի միջոցներին և, հակառակ վերամբարձ ճառերին, առօրեալ կեանքում հանդիսատ կերպով սովոր խնձորներ են քաղում և հաւատարմու-

թիւնը, սէրն ու պատիւը փոխանակում բբդի, ծակնդեղի և օղիի:

Ինչպէս տէրտէրը աւատատիրոջ հետ միշտ մեռք ծեռքի տւած է գնացել, այնպէս էլ տէրտէրական սոցիալիզմն է աւատականի հետ ընթանում:

Աւելի հեշտ բան չկայ, քան քրիստոնէական նղնութեանը սոցիալիստական դոյն տալը: Միթէ քրիստոնէութիւնը չի մաքառել նաև մասնաւոր սեփականութեան, ամուսնութեան և պետութեան դէմ: Միթէ դրանց տեղը նա չի քարողել բարեգործութիւն և աղքատութիւն, կուսակրօնութիւն և մարմնի մեռցում, մենաստան և եկեղեցի: Քրիստոնէական սոցիալիզմը սոսկ օրհնած չուր է, որով տէրտէրն աղւականութեան ցասումն է սրբադործում:

բ) Մանր-բուրժուական սոցիալիզմ.

Աւատական ազնւականութիւնը միակ դասակարգը չէր, որին տապալեց բուրժուազիան, մենակ նրա կեանքի պայմանները չեն, որ արդի բուրժուական հասարակութեան մէջ վատթարանում են ու չքանում: Միշնադարեան քաղըինիներն ու մանր գիւղացիութիւնն արդի բուրժուազիայի նախորդներն են եղել: Ինդուստրիի և արեալը կողմից պակաս զարգացած երկիրներում անող բուրժուազիակի կողքին այդ դասակարդերը տակաւին քաշ են տալիս իրենց գոյութիւնը:

Այն երկիրներում, որտեղ ղարգացել է արդի քաղաքակրթութիւնը, մի նոր քաղըինիութիւն է

գոյացել, որ երերւում է պրովետարիատի և բուրժուազիալի արանքում և, իբրև լրացում՝ բուրժուական հասարակութեան, շարունակ նորից ու նորից գոյանում: Բայց նրա տնդամները մրցման շնորհիւ շարունակ պրովետարիատի շարքն են նետում և խոչոր ինդուստրիի զարդացման հետ նրանք իրենք էլ նախատեսնում են այն ժամը, երբ պէտք է որ անհետանան և առևտրի, մանուֆակտուրի, գիւղատնտեսութեան մէջ փոխարինւեն վերակացուներով ու մանր ձառաշողներով:

Այն երկիրներում, որտեղ գիւղացի դասակարգն ազգաբնակութեան կիսից աւել է, ինչպէս ֆրանսիայում, բնական է, որ գրողները, որոնք պրոլետարիատին պաշտպանել են ընդգէմ բուրժուազիալի, մանր-քաղքինիական և մանր գիւղացիական չափանիշով են քննադատել բուրժուական կարգը և բանուորների կուսակցութիւնը մանր-քաղքինիութեան տեսակէտից են ըմբռնել: Ահա թէ ինչպէս է գոյացել մանր բուրժուական սոցիալիզմը: Սիսմոնդին արդ գրականութեան պարագլուխն է հանդիսանում ոչ միայն ֆրանսիայում, այլև Անգլիայում:

Այդ սոցիալիզմը ծայր աստիճան սրամաօրէն տարրալուծել է արդի արտադրութեան յարաբերութեանց հակասութիւնները և մերկացրել տնտեսագէանների կեղծաւոր լաւառեսութիւնը: Նա անհերքելի կերպով ապացուցեց աշխատանքի բաժանման և մերենանների կործանարար ազգեցութիւնը: Ապացուցեց, որ կապիտալի և հողատիրութեան կենտրոնա-

ցումը, գերարտադրութիւնը, ճգնաժամելը մանր-քաղքինիներին անխուսափելի կորստեան են մատնում: Ցուցազրեց պրոլետարիատի թշւառութիւնը, արտադրութեան անիշխանական բնովթը, աղաղակող անհամաչափութիւնը հարստութեան բաշխման մէջ, արդիւնաբերական աւերիչ պատերազմներն ազգերի միջև, հին բարքերի, ընտանեկան հին կապերի, հին աղգերի կազմակուծումը:

Սակայն իր գրական բովանդակութեամբ այդ սոցիալիզմը կամ ծդտում է արտադրութեան և փոխի հին միջոցները վերականգնել և գրանց հետ նաև սեփականատիրական հին յարաբերութիւններն ու հին հասարակութիւնը կամ թէ կամենում է արտադրութեան և փոխի արդի միջոցները բռնի կերպով վերատին սեփականութեան հին յարաբերութեանց շրջանակի մէջ պարփակել, որ նրանք պատռել են և պիտի պատռեին: Երկու դէպրում էլ նու ետաղիմական է և ուտոպիսական միաժամանակ:

Համբեարային կազմը մանուֆակտուրի մէջ և նահապետական տնտեսութիւնը զիւղում—ահա նրա վերջին խօսքը:

Նրա զարգացման շարունակութիւնն այդ ուղղութեամբ—վատոյժ վայրեն դարձան:

Դ) Գերմանական կամ «Ճշմարիտ» սոցիալիզմ.

Ֆրանսիայի սոցիալիստական և կոմմունիստական գրականութիւնը, որ տիրող բուրժուազիալի ճնշման ներքոյ է ծագել և այդ տիրապետութեան

դէմ տեղի ունեղած պայքարի դրական արտայալառ-  
թիւնն է, Գերմանիա ներմուծւեց այնպիսի մի ժամա-  
նակ, երբ բուրժուազիան աւատական աբսոլիւտիզմի  
հետ նոր-նոր էր պայքարի բռնւել:

Գերմանիայի վիլխովաները, կիսավիլխովաները  
և իմաստակները ագահ-ագահ վրայ տւին այդ զրա-  
կանութեան վրայ և մոռացան միայն, որ այդ զրա-  
կանութեան ներգաղթով ֆրանսիայից միաժամանակ  
ֆրանսիական կենսական ալարմանները Գերմանիա չին  
ներգաղթել: Գերմանական յարտքերութեանց հանդէպ  
ֆրանսիական գրականութիւնը կորցրեց իր ողջ ան-  
միջական գործնական նշանակութիւնը և զուտ զրա-  
կան կերպարանը ընդունեց: Նա պիտի թւար պա-  
րապ մտորմունք մարդկային էութեան իրականացման  
մասին: Ալսպէս, օրինակ, 18-րդ դարի գերմանացի  
վիլխովաների համար առաջին ֆրանսիական յեղա-  
փոխութեան պահանջներն ընդհանրապէս «գործնա-  
կան բանականութեան» պահանջների իմաստ ունէին  
և ֆրանսիական բուրժուազիայի յեղափոխականների  
կամքի արտապատութիւնները նրանց աչքում զուտ  
կամքի օրէնքներ էին, կամքի, ինչպէս նա պէտք է  
որ լինի, մարդկային նշմարիտ կամքի:

Գերմանացի գրականների աշխատանքը բացա-  
ռապէս այն է եղել, որ ֆրանսիական նոր գաղա-  
փարները հաշտեցնեն իրենց հին վիլխովայական  
խղճի հետ կամ թէ չէ իրենց վիլխովայական տե-  
սակէտից իւրացնեն ֆրանսիական դադափարները:

Այդ իւրացումը նոյն ձևով կատարւեց, որով

առհասարակ օտար լեզու են իւրացնում, այն է՝  
թարգմանութեան միջոցով:

Յայտնի է, որ վանականները հին հեթանոսա-  
կան ժամանակաբ գասական ձեռագրերի վրավից կա-  
թողիկ սուրբերի անհաշակ վարքեր էին գրում: Գեր-  
մանացի գրականները ֆրանսիական բնագրի ետեն  
իրենց վիլխովայական անմտութիւնները գրի առան: Թրինակ՝ ֆրանսիացիների արած փողալին լարաբե-  
րութեանց բննադատութեան ետեր նրանք գրել են  
«մարդկային էութեան դրսեռում», բուրժուական  
պետութեան ֆրանսիացիների արած բննադատու-  
թեան ետեր՝ «վերացական հանրութեան տիրապե-  
տութեան վերացում» և այլն, և այլն:

Ֆրանսիական իրավարձութեանց գեղծումը վի-  
լխովայական այդ գատարկարանութեամբ նրանք  
մկրտել են «գործի վիլխովայութիւն» «ճշմարիտ  
սոցիալիզմ», «սոցիալիզմի գերմանական գիտութիւն»,  
«սոցիալիզմի վիլխովայական հիմնաւորում» և այլն  
անուններով:

Ֆրանսիական սոցիալիստական-կոմմունիստական  
գրականութիւնն այդպիսով կոտւեց: Եւ որովհետեւ  
այդ գրականութիւնը գերմանացիների ձեռքում գա-  
ղաքեց մի գասակարդի միւսների գէմ մղած պայ-  
քարի արտապատութիւնը լինելուց, գերմանացին հա-  
մոզւած էր, որ յաղթահարել է «ֆրանսիական միա-  
կողմանութիւնը», որ նա ճշմարիտ կարիքների տեղը  
— ճշմարտութեան կարիքն է առաջ մղում, պրոլե-  
տարիատի շահերի փոխարէն — մարդկային էութեան

շահերը, առհասարակ մարդուն, որ ոչ մի գասակարդի չի պատկանում, որ ընդհանրապէս ոչ թէ իրականութեան մէջ գոյութիւն ունի, այլ փիլիսոփական մտապատէերների մթին երկնքում:

Գերմանական այս սոցիալիզմը, որ իր դպրոցակոն անօդ մարդանքներին այնքան լրւրչ ու հանգիստում էր կերպերում և որի մասին նա այնքան աղմկել ու փողեր է հնչեցրել — վոքր-առ փոքր կորցրեց իր պեղանտական անմեղութիւնը:

Գերմանական, գլխաւորապէս պրուսական բուժուազիափ պայքարն աւտատականների և արսոլիւտ կայսրութեանց դէմ, մի խօսքով աղատամիտ շարժումը գնալով լրջանում էր:

«Ճշմարիտ» սոցիալիզմն այսպիսով ցանկալի առիթ ունեցաւ քաղաքական շարժմանը հակադրելու սոցիալիստական պահանջներ, — որով անիմում էին լիբերալիզմը, ներկայացուցչական պետութիւնը, բուրժուական մրցումը, մամուլի բուրժուական աղատութիւնը, բուրժուական իրաւունքը, բուրժուական ազատութիւնն ու հաւասարութիւնը, — և քարոզելու ժողովրդական մասսալին, նա այդ բուրժուական շարժումից ոչինչ չի վաստակելու, աւելի շուտ տմեն ինչ կորցնելու է: Գերմանական սոցիալիզմը ժամանակին մռանում էր, որ ֆրանսիական քննադատութիւնը, որի անպարունակ արծագանքն էր ինքը, նախադրում էր արդի բուրժուական հասարակութիւնը համապատասխան նիւթական կենսական պայմաններով և քաղաքական վայելու սահմանադրութեամբ,

նախապայմաններ, որոնց նւանումի մասին տակաւին նոր պիտի խօսք բացւէր Գերմանիայում:

Գերմանական արսոլիւտ կառավարութեանց և դրանց տէրտէրներից, վարժապեսներից, աղնւականներից և աստիճանաւ որներից բազկացած վոհմակի ձեռքում այդ սոցիալիզմը բաղծակի խրտուիլակ էր սպառնօրէն գլուխ բարձրացնող բուրժուալի դէմ:

Այդ սոցիալիզմը մի քաղցրաւուն լրացում էր մարակի հարւածների և հրացանների գնդակների դառնութեան, որոնցով նոյն կառավարութիւնները մնշում էին Գերմանիայի բան որների ասլատամբութիւնները:

Եթէ «ճշմարիտ» սոցիալիզմը նմանօրինակ մի զէնք է եղել կառավարութեանց ձեռքում գերմանական բուրժուազիափ դէմ, միևնուն ժամանակ նա եսալիմական շահերի արտայատիչն է եղել — գերմանական մանր քաղքինիութեան շահերի արտայալիչը: Գերմանիայում 16-րդ դարից մնացած և այդ ժամանակից վեր զանազան ձեւերով նորից ու նորից հանդէս եկած մանր քաղքինիութիւնը, — տէրող կարգելու խսկական հասարակական հիմքն է:

Նրա պահպանումը — գերմանական տիրող կարգերի պահպանումն է: Բուրժուալիզմի ինդուստրիական և քաղաքական տիրապետութիւնից նա երկեղով իր հաստատ կործանումն է սպասում, մի կողմից իրեւ հետեւանք կապիտալի կենտրոնացման, միւս կողմից՝ յեղափոխական պրոլետարիատի զարդացման շնորհիւ: Եւ նրան թւում է, թէ «ճշմարիտ» սոցա-

լիդմը մի հարւածով երկու ճանճն էլ սպանում է: Եւ  
այդ սոցիալիզմը տարածւում էր, որպէս համաթարակ:

Հայեցարանական (սպեկուլեատիվ) ոստանից  
հիւսած, ճարտասանական պերճ ծաղիներով զար-  
դարած, սիրառատ սրտի ցողով թրջած այդ ծածկո-  
ցը, որով Գերմանիայի սոցիալիստները էրենց մի եր-  
կու ոսկրացած «յաւերժական նշարտութիւններն»  
էին փաթաթում, այդ հասարակութեան մէջ լոկ  
նրանց ապրանքի վտնառքն էր աւելացնում:

Գերմանական սոցիալիզմն էլ, իր հերթին, քանի  
գնում, այնքան աւելի էր ճանաչում իր կոչումը—  
որպէս քաղըինիութեան մեծախօս ներկայացուցչի:

Գերմանիան աղը—նա բնական ազգ հոչակեց  
և Գերմանիայի քաղըինիներին—բնական մարդիկ:  
Սրանց իւրաքանչիւր ստորութեանը դադտնի բարձր  
սոցիալիստական իմաստ էր հազորդում, ըստ որում  
այդ արարմունքը հակառակ նշանակութիւն էր ստա-  
նում: Եւ երբ նա ուղղակի հանդէս եկաւ կոմմու-  
նիզմի «կոպիտ-կործանիչ» ուղղութեան դէմ, և իր  
անկուսակցական վեհութիւնը հռչակեց դասակար-  
գալին ամեն պայքարից վեր-դրտնով նա սոսկ վերջին  
եղրակացութիւնը հանեց: Այն ամենը, ինչ որ շրջա-  
նառութեան մէջ է Գերմանիայում իբրև այսպէս  
ասած սոցիալիստական և կոմմունիստական գրու-  
թիւն—այդ կեղտու, զդադար դրականութեան է  
պատկանում\*):

\*) 1848 թւականի լեղափոխական հոդմն այս ամբողջ  
քծում ուղղութիւնը մէջ տեղից սրբեց և նրա գաղափարակիր-

2) ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՄ ԲՈՒԹԾՈՒԱԿԱՆ ՍՈՅԻԱԼԻԶՄ:

Բուրժուազիակի մի մասը ցանկանում է սոցիա-  
լական թերիներին օգնութեան դալ, որպէս զի ապա-  
հովի բուրժուական հասարակութեան գոյութիւնը:

Դրանց թւին պատկանում են՝ տնտեսագէտներ,  
ֆիլանտրոպներ (մարդաբարեր-բարերարներ), հումա-  
նիստներ (մարդու ամենից բարձր դասողներ), բանւոր  
դասակարգի վիճակը բարելաւողներ, բարեգործութիւն  
կազմակերպողներ, անասունների տանջանքները վե-  
րացնողներ, զգաստութեան ընկերութիւն հիմնողներ,  
մանր-մունր վերանորոգիչներ ամենախստաբրդէտ տե-  
սակի: Եւ բուրժուական այդ սոցիալիզմն անգամ  
մշակւել, ամբողջ սիստեմների է վերածւել:

Օրինակ Պրուդոնի Philosophie de la Misere-ը \*):

Բուրժուա-սոցիալիստները՝ արդի հասարակու-  
թեան կետնքի պայմաններն են կամենում, առանց  
զրանցից անհրաժեշտորէն բղխող պայքարի և վտան-  
գի: Նրանց ցանկացածը—գոյութիւն ունեցող հասա-  
րակութիւնն է ի բաց առեալ նրան յեղափոխող և  
կազմալուծող տարրերի: Նրանք ուղում են բուրժու-  
ազիա, առանց պրոլետարիատի: Այն աշխարհը, որ-

ների հաւասը կտրեց ալես սոցիալիզմ խաղալու: Այդ ուղղու-  
թեան պարագլուխն ու դասական տիպարը—պարոն Կարլ  
Գրիմն է:

\*) „Թշառութեան փիլիսոփայութիւնը:“ Պրուդոնի այս  
գրւածը Մարքսը սուր ու կծու բնադրտութեան է ենթարկել  
1846 թ. լուս տեսած „Փիլիսոփայութեան Թշառութիւնը“ Լա  
Misere de la Philosophie) վերնագրը կրադ գրում: Դ. Մ.

տեղ ինքն է տիրում, բնականաբար բուրժուազիան պատկերում է իրրև աշխարհներից լաւագոյնը: Բուրժուական սոցիալիզմը մշակում է այդ մխիթարական մտապատկերը և կիսատ կամ ամբողջական սիստեմի վերածում: Երբ նա առաջարկում է պրոետարիատին, որ նա իր սիստեմներն իրականացնի և նոր երուսաղէմ մտնի, նա իրօք միայն պահանջում է, որ պրոլետարիատը մնայ կանգնած ներկայ հասարակութեան մէջ, սակայն դէն քյի իր ատելի մտապատկերներն այդ հասարակութեան մասին:

Սոցիալիզմի մի այլ պահաս սիստեմական, բայց տւելի դորձնական ձեւը, ձղտում էր կոտրել բանւոր դասակարգի հետարրըրութիւնը դէպի ամեն մի յեղափօխական շարժում, ապացուցանելով, որ պրոլետարիատին ոչ թէ այս կամ այն բազարական փոփխութ օգուտ կը բերի, այլ միմիայն կեանքի նիւթական սլալմանների, տնտեսական յարաբերութեանց փոփխումը: Իսկ կեանքի նիւթական յարաբերութեանց փոփխում ասածդ այդ սոցիալիզմը ոչ մի դէպում չի հասկանում իրրև արտադրութեան բուրժուական յարաբերութեանց վերացում, որ լոկ յեղափօխական ճանապարհով է հնարաւոր, այլ վարչական բարելաւում, որ արտադրութեան նոյն այդ յարաբերութեանց հիմքերի վրայ է իրագործում, հետեւաբար կաղիտալի և վարձու աշխատանքի յարաբերութեան մէջ ոչինչ չի փոխում, այլ լաւագոյն դէպում բուրժուազիայի համար իր տիրապետութեան ծախսը պականեցնում և իր պետական տնտեսութեան եղանակը պարզեցնում:

Բուրժուական սոցիալիզմը համապատասխան արտայալատութիւն է գտնում այն ատեն, երբ սոսկ ճարտասանական ձև է գտնում:

Ազատ առևետուր—յանուոր դասակարգի շահերի: Հովանաւորող մաքս-յանուոր բանւոր դասակարգերի շահերի: Զնդաններ—յանուոր դասակաի շահերի: Ահա բուրժուական սոցիալիզմի վերջին և միակ լուրջ իմաստով ասած խօսքը:

Բուրժուազիայի սոցիալիզմը հէնց այն պնդումն է, թէ բուրժուաները բուրժուատ են յանուոր դասակարգի շահի:

3) ՔՆԱԱԿԱՆ-ՈՒՑՈՊԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՒ ԿՈՄ-ՄՈՒՆԻՑԻԱՄ.

Մենք այստեղ չենք խօսելու այն դրականութեան մասին, որ բոլոր մեծ յեղափօխութեանց ժամանակաշրջանում պրոլետարիատի պահանջներն է արտայալատել: (Բարեօֆի գրւածները և այլն):

Պրոլետարիատի իր սեփական դասակարգային շահերն անմիշապէս իրագործելու առաջին փորձերը, քնդհանուր խռովութեան պահուն, աւատական հասարակութեան խորտակման միջոցին, անհրաժեշտութէն ծախորդ եղան, շնորհիւ իր իսկ պրոլետարիատի անդարդացած վիճակի, ինչպէս և իր ազատագրման նիւթական պայմանների պակասութեան, պայմանների, որ տակաւին բուրժուական ժամանակաշրջանի արդիւնքը պիտի լինէին: Պրոլետարիատի այդ առաջին շարժումն ուղեկցող յեղափօխական դրականու-

թիւնը, բատ էութեան, անհրաժեշտօրէն ետաղիմական էր: Նա քարոզում է լնդհանուր սակաւապէտութիւն և կապիտ հաւասարութիւն:

Սոցիալիստական և կոմմունիստական բուն սփստեմները, Սէն-Միմոնի, Ֆուրիէրի, Օվէնի և այլ սփստեմները, պրոլետարիատի և բուրժուազիալի պարը վերը շարադրած առաջին, անզարդացած շըրջանում են երևան գալիս: (Տես՝ «Բուրժուազիա և պրոլետարիատ» գլուխը):

Այդ սփստեմների հնարագէտները թէև տէսնում էին գասակարգէրի ներհակութիւնը, ինչպէս և տիրող հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող կաղմակուծող տարրերը, բայց և այնպէս պրոլետարիատի մէջ ոչինչ պատմական ինքնազործունէութիւն չէին նկատում, ոչինչ, պրոլետարիատին յատու կ քաղաքական շարժում:

Դասակարգալին ներհակութեան գարգացումը ինդուստրիի զարգացման հետ միասին է առաջ գնում, ուստի և այս սփստեմների հնարագէտներն իր ժամանակ պրոլետարիատի աղատազրման համար նիւթական պայմաններ չեն գտնում և սկսում են սոցիալական գիտութեան, սոցիալական օրէնքների ետևից ընկնել այդ պայմաններն ստեղծելու համար:

Հասարակական գործունէութեան տեղը—նրանց անձնական հնարագիտութիւնը պիտի բռնի, աղատազրման պատմական պայմանների տեղը—երևեկականը, պրոլետարիատն աստիճանաբար իբրև դասակարգ կազմակերպելու տեղը—իրենց յատկապէս

նիւթած հասարակական կազմը: Նրանց համար համաշխարային գալիք պատմութիւնն սպառւում է իրենց հասարակական ծրագիրների քարոզով ու գործնական իրագործումով:

Ասենք նրանք զիտակցում են, որ իրենց ծրագիրները զլխաւորապէս բանւոր դասակարգի շահերն են ներկայացնում, իբրև ամենաթշշւառ դասակարգի: Պրոլետարիատը, իբրև ամենաթշշւառ դասակարգ, հէնց այդ տեսակէտից է, որ նրանց համար գոյութիւն ունի:

Դասակարգալին պայքարի անզարդացած ծեր, ինչպէս և իրենց սեփական կենսական գրութիւնը բերում են նրանց այն համոզմունքին, որ իրենք գասակարգալին ներհակութիւնից անսահման վեր են: Նրանք կամենում են հասարակութեան բոլոր անդամների կենսական դրութիւնը բարելաւել, անգամ նրանց դրութիւնը, որոնք լաւագոյն պայմանների մէջ են դրւած: Դրանից է, որ նրանք շարունակ կոչ են անում ողջ հասարակութեան, առանց խորութեան, անզամ գերադասօրէն—տիրող դասակարգին: Բաւական է լոկ ըմբռնել նրանց սիստեմը, լաւագոյն հնարաւոր հասարակութեան լաւագոյն հնարաւոր ծրագիրը նանաչելու համար:

Այդ պատճառով նրանք ժխտում են ամեն մի քաղաքական և մանաւանդ լեզափոխական գործունէութիւն, նրանք խաղաղ ճանապարհով են ուղում իրենց նպատակին հասնել, մանր և բնականաբար անաշող փորձերով. օրիակի զօրութեամբ նրանք ձգտում են նոր աւետարանի ուղին հարթել:

Ապագայ հասարակութեան մտածածին նկարագրութիւնը ծագում է մի ժամանակ, երբ պրոլետարիատը տակաւին ծալր աստիճան անդարդացած է, հետեւաբար ինքն էլ երեակալօրէն է ըմբռնում իր դիրքը և իր առաջին, նախազգացումներով լեցուն աենչերը հասարակութեան ընդհանուր վերանորոգման մասին:

Սակայն սոցիալական և կոմմունիստական գրութիւնները քննական տարրեր էլ են պարունակում: Նրանք շօշափում են տիրող հասարակութեան բոլոր հիմքերը: Ուստի նրանք մեծապէս թանգարժէք նիւթ են մատակարարել բանւորների լուսաւորութեան համար: Ապագայ հասարակութեան վերաբերեալ նրանց դրական առաջարկները, օրինակ՝ քաղաքի և գիւղի միջև եղած ներհակութեան վերացումը, ընտանիքի, մասնաւոր վաստակի, վարձու աշխատանքի ոչնչացումը, հասարակական ներդաշնակութեան աւետումը, պետութիւնը լոկ արտադրական վարչութեան վերածելը—բոլոր այս առաջարկները սոսկ դասակարգին ներհակութեան վերացումն են արտայալտում, ներհակութեան, որ նոր-նոր է զարգանալ սկսում, որ նրանց ժամանթ է տակաւին իր սկզբնական, անկերպարանք անորոշ ծեռփ: Ուստի և այդ առաջարկներն ինքնին դուռ ուտոպիական իմաստունեն:

Քննական-ուտոպիական սոցիալիզմի և կոմմունիզմի նշանակութիւնը հակառակ յարաբերական է պատմական զարգուցման: Ինչ չափով, որ դասակար-

գալին պալքար է զարդանում ու ծեակերպւում, կարծեցեալ բարձրացումն այդ պալքարից վեր և կարծեցեալ պալքարը նրա դէմ կորցնում է իր ողջ դործնական արժէքը, ողջ տեսական արդարացումը: Ուստի և եթէ այդ սիստեմների հիմնադիրները շատ կողմից լեզափսխականներ էին—նրանց աշակերտները միշտ ետաղիմական աղանդներ են կաղմել: Վարպետների հին հայեացքները նրանք ամուր են պահում, արհամարելով պրոլետարիատի պատմական առաջխաղացումը: Այդ պատճառով էլ նրանք հետեւողականօրէն ձգուում են զասակարգավին պալքարը կրկին բթացնել և ներհակութիւնը մեղմել: Նրանք շարունակ իրենց հասարակական ուտոպիաների փորձնական իրազորման մասին են երազում, հատ-հատ ֆալանտէրներ ու կոմմունիստական հոմ-գաղութներ հիմնելու, փոքրիկ իկարիա հաստատելու, նոր երուսաղեմի փոքրադիր հրատարակութեան մասին, —և բոլոր այս օդային ամրոցները կառուցանելու համար նրանք հարկադրւած են կոչ անելու բուրժուաների մարդասէր սրտերին և փողի քսակներին: Աստիճանական անկումը նրանց տանում է վերը նկարագրած ետաղիմական կամ պահպանողական սոցիալիստների շարքը, որոնցից տարբերում են միայն աւելի յամառ պեղանտութեամբ և դէպի իրենց սոցիալական գիտութեան հրաշագործութիւնն ունեցած մոլեռանդ նախապաշարմունքով:

Նրանք հանդէս են գալիս իրեւ հակառակորդներ բանւորների ամեն մի քաղաքական շարժման, որ

կարող է ծագել նոր աւետարանին կուրօրէն չհաւատալուց:

Օվենականներն Անդլիայում — չարտիստների գէմ են գործում, Փուրիկրականները Ֆրանսիայում — ընդդէմ վերանորոգչականների:

## IV.

ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ ԶԱՆԱԳԱՆ  
ԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

II գլխում ասածից յետոյ, ինքնին հասկանալի է կոմմունիստների վերաբերմունքը դէպի արգէն կաղմակերպւած բանւորական կուսակցութիւնները, այսինքն՝ նրանց վերաբերմունքը դէպի չարտիստներն Անդլիայում և դէպի հողալին — վերանորոգիչները հիւսիսալին Ամերիկայում:

Նրանք պարար են մզում բանւոր դասակարդի առաջադրած անմիջական նպատակների և շահերի համար, բայց և ներկայիս շարժման մէջ նրանք շարժման ապագան են պաշտպանում: Ֆրանսիայում կոմմունիստները յարում են սոցիալիստական-դեմոկրատական\*) կուսակցութեանը — ընդդէմ պահպանողական և արմատական բուրժուազիայի, վերապահելով յեղափոխական տւանդութիւնից բղխած ֆրանկուրին և պատրանքներին ըննադատութէն վերաբերելու իրաւունքը:

Զւիցարիայում նրանք արմատականների պաշտպանն են, առանց ուրանալու, որ այդ կուսակցու-

թիւնը հակասական տարրերից է բաղկացած, մասմբ — դեմոկրատական սոցիալիստներից, Փրանսիական իմաստով, մասամբ — արմատական բուրժուաներից:

Լեհերի մէջ կոմմունիստները պաշտպանում են այն կուսակցութիւնը, որ ազգարային յեղափոխութիւնը ազգային ազատագրութեան պայման է դարձրել, այն կուսակցութիւնը, որ առաջ բերեց 1846 թւականի կրակովեան ազատամբութիւնը:

Դերմանիայում կոմմունիստական կուսակցութիւնը բուրժուազիալի հետ միասին է պարզաբ վարում — քանի բուրժուազիան յեղափոխաբար է հանդէս գույիս — ընդդէմ արսովիւտ միապետութեան, աւատական հողատիրութեան և մտնր — քաղքինիութեան:

Սակայն նա ոչ մի վայրկեան չի դադարում բանւորների մէջ ըստ կարելոյն պայծառ դիտակցութիւն մշակելուց բուրժուազիալի և պրոլետարիատի միջև եղած թշնամական ներհակութեան նկատմամբ, որպէսպի գերմանացի բանւորներն այն հասարակական և քաղաքական պայմանները, որ առաջ պիտի բերի բուրժուազիալի տիրապետութիւնը, իսկոյն և եթզէնքեր դարձնեն, ուղղեն բուրժուազիալի դէմ և ալսովիսով Գերմանիայի ետաղիմական դասակարգի անկումից յետոյ իսկոյն և եթ բուրժուազիալի դէմ իսկ պարզաբ սկսւի:

Կոմմունիստներն իրենց ուշը գլխաւորապէս Գերմանիայի վրայ են ուղղում, որովհետև Գերմա-

նիան բուրժուական յեղափոխութեան նախօրեակին  
է կանգնած և որովհետեւ այդ յեղաշրջումը տեղի  
պիտի ու նենայ ընդհանուր Եւրոպական քաղաքակա-  
կրթութեան աւելի առաջագէմ պայմաններում և  
զլուխ բերւի շատ աւելի զարդացած պրոլետարիատի  
ձեռ քով, քան 17-դարում Անգլիայում և 18-դարում  
Ֆրանսիայում, ուստի և զերմանական բուրժուական  
յեղափոխութիւնը կարող է պրոլետարիական յեղա-  
փոխութեան անմիջական նսխերդանքը դառնալ:

Մի խօսքով կոմմունիստներն ամենուրեք պաշտ-  
պանում են ամեն մի յեղափոխական շարժում ընդդէմ  
տիրող հասարակական և քաղաքական կացութեան:


Թոլոր այդ շարժումների ժամանակ նրանք,  
իրեւ շարժման հիմնական հարց, սեփականութեան  
հարցն են բարձրացնում, ինչքան էլ աւել կամ պա-  
կաս զարդացած ձև ընդունած լինի այդ հարցը:

Վերջապէս կամմունիստներն ամենուրեք աշխա-  
տում են բոլոր երկիրների դեմոկրատական կուսակ-  
ցութիւնները իրար կապել և համաձայնեցնել:

Կոմմունիստներն ամաչում են իրենց հայեացք-  
ներն ու մտադրութիւնները թաղյնելուց: Նրանք  
բացէ ի բաց լայտարարում են, որ իրենց նպատակ-  
ները կարող են իրագործել միմիայն մինչայժմեան  
հասարակարգի բռնի տապալման միջոցով: Թո՛ղ որ  
իշխող գասակարգերը դոլդողան կոմմունիստական  
յեղափոխութեան ահից: Այդ յեղափոխութեան մի-  
ջոցին պրոլետարները, շղթաներից շատ, կորցնելու բան  
չունեն: Նրանք պիտի արար-աշխարհի տէրը դառնան:

Պրոլետարներ, բոլոր երկիրների, միացէք:





# ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

## ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Թ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը.
2. Ն. Լենին. «Նամակ Ամերիկեան Բանւորներին». գինը՝ 1 ր.
3. Վ. Ֆլիջէ. «Պրոլետարական պուգիան» գինը՝ 2 ր.
4. Զիջերին. «Բրեստից յետոյ» (Ձեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին) գինը՝ 1 ր.
5. Ներշակ. «Բազի Դէպքերը» (Կոմմոնիստական Կուսակցութեան Թուցիկ լաւագաճով) գինը՝ 75 կ.
6. Ն. Լենին. «Կարլ Մարքս» (Համառու կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը) գինը՝ 1 ր. 50 կ.
7. Ներշակ. «Ռուսական Ցեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան» գինը՝ 1 ր.
8. Ն. ԲՈՒԺԱՄԻԻՆ. «Կոմմոնիստաների ծրագիրը» գինը՝ 3 ր.
9. Մ. ՊԱՀԼՈՎԻԶ (Վելտման) «Ասիան և իր դերը համաշխարհային պատերազմի մեջ» գինը՝ 3 ր.
10. ԿԱՐԼ ԻՒՆԴԵԿ. I. «Կոմմոնիստական Կուսակցութիւնը Գերմանիայում», II. «Կարլ Լիբկնեխտը» (Լիբկնեխտի նկարով) գինը՝ 1 ր.
11. «Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլյունին» գինը՝ 75 կ.
12. «Միասնական աշխատանքալին դպրոցի կանոնադրութիւնը» գինը՝ 2 ր.
13. ՀՈՎԱՔՓԵՄՆ. «Դէպի քաղաքացիական կոիւ».
14. Գ. Զինովեի, հի. ԿԱՄԵՆԵԻ և Լ. ՏՐՈՅԿԻ—«Ն. Լենին, Վլադիմիր Իլիչ Ուլենսով» գինը՝ 2 ր.
15. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. Էնգել'Ս «Կոմմոնիստական Մանդինստը»—Պլեխանովի, Կառուցկու և հեղինակների լառաջարաններով, գինը՝ 3 ր.

## ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

1. ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ինչ բան է Խորհրդակին իշխանութիւնը և ինչ-պէս է նա կազմում»:
2. Ֆրանսիական մեծ Ցեղափոխութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱ-  
ԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Թուսաստանի Կամմունիստական Կուսասակցութեան (Բոլշևիկների) Մրագիրը:

2) III հնտերնացիոնալի Մանիֆեստը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0181294

